

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ղանթարչյ յ ան Լիլ իթ Ռուբենի

**ՍՈՑԻԱԼ ԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԻԱՎԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ-ՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

***Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն»
մասնագիտությունը տնտեսագիտություն թեկնածուի
գիտական աստիճանի
համար***

***Գիտական ղեկավար՝
տգ.թ., պրոֆեսոր Իշխան Տաճարի Տիգրանյ ան***

Երևան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

3

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Գլ ու խ I. ԲՆԱԿՉՈՒ ԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ, ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՊԱՅՆՈՎ ԽԱՎԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ -ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 10

1.1 «Կենսամակարդակ» հասկացություն սոցիալ -տնտեսական բովանդակությունը 10

1.2 Բնակչություն շերտավորման պատճառները 30

1.3 «Անապահով խավ» հասկացություն էությունը և դրա ձևավորմանը նպաստող գործոնները 47

Գլ ու խ II. ՀՀ ԲՆԱԿՉՈՒ ԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 55

2.1 ՀՀ բնակչություն կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը 55

2.2 Բնակչության դրամական եկամուտների և սպառողական ծախսերի բաշխվածություն վրա ազդող գործոնները 67

2.3 ՀՀ բնակչության աղքատության մակարդակի առկա վիճակը և անապահով խավի դրամական եկամուտների գնահատումը 80

ԳԼ ՈՒ Խ III . ՀՀ ԲՆԱԿՉՈՒ ԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ -ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 94

3.1 ՀՀ բնակչություն կենսամակարդակի պետական կարգավորման հիմնախնդիրները 94

3.2 Բնակչություն կենսամակարդակի բարձրացման ուղիների միջազգային փորձը 114

3.3 Սոցիալ ապես անապահով խավի կենսամակարդակի բարձրացման արդյունավետ համակարգի ձևավորումը 125

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ 139

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ 147

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 156

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակական հարաբերություններին պայմաններում

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր պ ե տ ու թ յ ա ն առ ջ և դ ր վ ա ծ գ եր ա կ ա խ ն դ ի ր ն Է
ե կ ա մ ու և տ ն եր ի վ եր ա ք ա շ խ մ ա ն առ ա ն ձ ի ն մ ե խ ա ն ի գ մ ն եր ի մ ի ջ ո ճ ո վ
բ ն ա կ չ ու թ յ ա ն պ ա շ տ պ ա ն վ ա ծ ու թ յ ա ն և ս ո ճ ի ալ ա կ ա ն ար դ ար ու թ յ ա ն
ապ ա հ ո վ ու մ ը , յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ք աղ ա ք ա ճ ու հ ա մ ար կ յ ա ն ք ի
ար ժ ա ն ապ ա տ ի վ պ ա յ մ ա ն ն եր ի , հ ա վ ա ս ար Ե լ ա կ Ե տ ա յ ի ն
հ ն ար ա վ ո թ ու թ յ ու և ն եր ի ս տ ե դ ծ ու մ ը , բ ն ա կ չ ու թ յ ա ն խ ո ճ Ե լ ի և
ա ն ապ ա հ ո վ խ ա վ եր ի ս ո ճ ի ալ ա կ ա ն ա ջ ա կ ջ ու թ յ ու և ը , ի ն չ ա Ե ս ն ա
առ ա ն ձ ի ն ս ո ճ ի ալ ա կ ա ն շ եր տ եր ի մ ի ջ և ս ո ճ ի ալ ա կ ա ն
ա ն հ ա վ ա ս ար ու թ յ ա ն հ ար թ Ե ճ ու մ ը , ա յ ս ի ն ք ն , ը ն դ ի ա ն ու ր առ մ ա մ Բ ,
բ ն ա կ չ ու թ յ ա ն , հ ա ս ար ա կ ու թ յ ա ն , ա ն հ ա տ ի կ Ե ն ս ա մ ա կ ար դ ա կ ի
Բ ար ձ ր ա ճ ու մ ը :

Ս ա կ ա յ ն , կ Ե ն ս ա մ ա կ ար դ ա կ ի Բ ար ձ ր ա ճ ու մ չ ի հ ա ն գ Ե ջ վ ու մ մ ի ա յ ն
ա շ խ ա տ ո ղ ն եր ի Ե կ ա մ ու և տ ն եր ի և ս պ առ մ ա ն ա ճ ո վ . ա յ ն ո թ ո շ վ ու մ Է ն ա
ն ո թ հ ն ար ա վ ո թ ու թ յ ու և ն եր ո վ , ո թ ո ն ք տր վ ու մ Ե ն մ ար դ կ ա ն ց ` ն ր ա ն ց
ու և ա կ ու թ յ ու և ն եր ի գ ար գ ա ճ մ ա ն , գ ի տ Ե լ ի ք ն եր ի և շ ա հ եր ի
ը ն դ լ ա յ ն մ ա ն հ ա մ ար : Յ Ե տ ն ա ք ար , ի գ ու ր չ Է , ո թ 21-ր դ դ ար ը , առ ա ն ձ ի ն
մ տ ա ծ ո ղ ն եր ի , ք աղ ա ք ա գ Ե տ ն եր ի , տ ն տ Ե ս ա գ Ե տ ն եր ի կ ար ծ ի ք ո վ , ո թ ա կ ի
դ ար Է : Յ ա ս ար ա կ ու թ յ ա ն առ ա ն ձ ի ն շ եր տ եր ի , և հ ա տ կ ա պ Ե ս ա ն ապ ա հ ո վ
խ ա վ ի ս ո ճ ի ալ ա կ ա ն վ ի ճ ա կ ը պ ա յ մ ա ն ա վ ո թ ո ղ կ յ ա ն ք ի ո թ ա կ ը
մ ի ջ ա գ գ ա յ ի ն հ ա ս ար ա կ ու թ յ ա ն կ ո ղ մ ի ց ը ն դ ու և վ ա ծ Է Եր կ թ ի և
Ժ ո ղ ո վ թ թ ի գ ար գ ա ճ մ ա ն մ ա կ ար դ ա կ ը Բ ն ու թ ա գ թ ո ղ կ ար և ո թ ա գ ու յ ն
ց ու ց ա ն ի շ ն եր ի ց մ Ե կ ը : Տ ն տ Ե ս ա կ ա ն գ ար գ ա ճ մ ա ն ն ո թ ու ղ ի ն եր ի
փ ն տր տ ու ք ը հ ա ն գ Ե ճ ր Ե լ Է ա յ ն մ տ ք ի ն , ո թ մ ի ա յ ն կ յ ա ն ք ի ո թ ա կ ը ,
հ ա ս ար ա կ ու թ յ ա ն մ ի ջ ի ն խ ա վ եր ի տ Ե ս ա կ ար ար կ շ ռ ի ու
ապ ա հ ո վ վ ա ծ ու թ յ ա ն մ ա կ ար դ ա կ ի ա վ Ե լ ա ճ ու մ ը ն եր կ ա յ ի ս ա ճ ն
ապ ա հ ո վ ո ղ հ ի մ ն ա կ ա ն գ ր ա վ ա կ ա ն ն Է , ք ա ն ի ո թ մ ար դ կ ու թ յ ու և ն
ա ն ց ն ու մ Է ն ո թ ք աղ ա ք ա կ թ ու թ յ ու և ` ո թ ա կ ի ք աղ ա ք ա կ թ ու թ յ ու և :

Ս ո ճ ի ալ ա կ ա ն ու ղ ղ վ ա ծ ու թ յ ու և ու և ե ճ ո ղ ց ա ն կ ա ճ ա ծ պ ե տ ու թ յ ա ն
կ ո ղ մ ի ց ն մ ա ն խ ն դ ի ր ն եր ի լ ու ծ մ ա ն , ար դ յ ու և ա վ Ե տ ո թ ո շ ու մ ն եր ի
ը ն դ ու և մ ա ն հ ա մ ար խ փ ս տ կ ար և ո թ Է ի թ ա տ Ե ո թ Ե ն գ ն ա հ ա տ Ե լ Եր կ թ ի
բ ն ա կ չ ու թ յ ա ն կ Ե ն ս ա մ ա կ ար դ ա կ ի փ ո փ ո խ ու թ յ ու և ն եր ը ,
հ ա ս ար ա կ ու թ յ ու և ու մ Ե կ ա մ ու և տ ն եր ի Բ ա շ խ մ ա ն ու վ եր ա ք ա շ խ մ ա ն
հ ի մ ն ա կ ա ն ու ղ ո ղ ու թ յ ու և ն եր ն ու օ թ ի ն ա չ ա փ ու թ յ ու և ն եր ը ,
շ ար ու և ա կ ա կ ա ն դ ի տ ար կ Ե լ Բ ն ա կ չ ու թ յ ա ն Ե կ ա մ ու և տ ն եր ի և Ժ ա փ ա եր ի
մ ա կ ար դ ա կ ն եր ի փ ո փ ո խ ու թ յ ու և ը , հ ա ս ար ա կ ու թ յ ա ն Բ Ե Ե ճ ա ճ մ ա ն

աստիճանը, գնահատել անապահով խավի սոցիալական աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացման արդյունավետությանը: Վերջին հաշվով, պետության կողմից իրականացվող սոցիալական ու տնտեսական բարեփոխումների արդյունավետությանը չափվում է բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ: Այս առումով, հասարակության եկամուտների անհավասարության և շերտավորման տնտեսական կառուցվածքի հետազոտությանը հենակետային կարող է լինել պետության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ առաջնահերթ և գերակա խնդիրների արժարժմանը:

Շուկայական տնտեսության անցման ընթացքում ՀՀ-ն հայտնվեց ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում: Դեռևս 1988-1991թթ. ընկած ժամանակահատվածում աղետալի երկրաչարժը, դարաբաղյան հակամարտությանն եները, 1990-ական թվականներին եներգետիկ և տնտեսական ճգնաժամը, տրանսպորտային և ռազմական շրջափակումը, բնակչության հսկայածավալ արտագաղթը և մի շարք այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ (արտաքին ազդեցությանն եներ, երկրի զարգացման աստիճան) հանգեցրին ՀՀ բնակչության կենսամակարդակի անկմանը, գործազրկության մակարդակի աճին, աղքատների, ինչպես նաև ծայրահեղ աղքատների և անապահով խավի տեսակարար կշռի ավելացմանը, կենսաթոշակների գծով պարտքերի կուտակմանը և այլն: ՀՀ կառավարությանը ձեռնամուխ եղավ իրականացնելու սոցիալական ոլորտում բազում վերափոխումներ, որոնք հիմնականում ուղղված էին նյութական աղքատության հաղթահարմանը: Սակայն դեռևս առկա են բազում խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն, քանի որ ժամանակակից պայմաններում «աղքատությանը» հասկացությունը կապվում է ոչ միայն արժանավայել կյանքի համար անհրաժեշտ անբավարար եկամուտների հետ, այլև այնպիսի կարևոր ցուցանիշների հետ, ինչպիսիք են՝ առողջությունը, կրթությունը, սնունդը և այլն: Հետևաբար այսօր գերակա խնդիր է ինչպես նյութական, այնպես էլ մարդկային աղքատության մակարդակի կրճատումը:

Չնայած 2003-2008թթ. ՀՀ-ում գրացված կայուն տնտեսական աճի և բնակչության աղքատ խմբերի դրամական եկամուտների հարաբերական ավելացմանը՝ հասարակության մեջ շարունակվում

Էր պահպանվել սոցիալական լարվածությունը և բնակչության բևեռացումը: Ուստի, ՀՀ բնակչության, ինչպես նաև նրա առանձին խավերի և հատկապես անապահով խավի կենսամակարդակի վերլուծության տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը գնալով ավելի ակնառու է դառնում: 2008թ-ի սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն ամբողջ տնտեսության, այլ նաև բնակչության կենսամակարդակի վրա՝ ավելի խորացնելով տարբերությունը բնակչության հարուստ ու աղքատ շերտերի միջև, ավելի նաև կրճատեց միջին խավի և ավելացրեց աղքատների տեսակարար կշիռը: Իհարկե, վերջինս միայն պայմանավորված չէր նշված ճգնաժամով: Այստեղ իր որոշակի բաժինն ունի նաև ՀՀ կառավարության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որը դեռևս բավարար համարել չի կարելի: Այս ամենը հազնեցնում է սոցիալական անարդարության խորացմանը, որն իր հերթին նախադրյալներ է ստեղծում երկրում սոցիալական ու բարոյահոգեբանական ճգնաժամի առաջացմանը: Այն իր բացասական հետևանքներն է ունենում երկրի տնտեսական զարգացման, մարդկային կապիտալի վերարտադրության, բնակչության ժողովրդագրական շարժընթացի ու կառուցվածքի վրա: Այս առումով, տնտեսագետների ու շարժական կենտրոնում է միշտ գտնվել այն հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծումների բացահայտումը, որոնք կբերեն հասարակության մեջ սոցիալական արդարության պահպանմանը, շերտերի միջև բևեռացման խորացման մեղմացմանը, աղքատության վերացմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

ՀՀ բնակչության կենսամակարդակի բարձրացման, դրամական եկամուտների արդարացի բաշխման, հասարակության առանձին շերտերի ձևավորման հիմնախնդիրներին իրենց աջխատություններով անդրադարձել են հայ տնտեսագետները՝ Գ.Ա.Ղարիբյանը, Յու.Մ.Սուվարյանը, Ա.Խ.Մարկոսյանը, Բ.Յ.Եղիազարյանը, Ա.Թորոսյանը և այլոք: Նշված խնդիրներին լուծման ուղղությամբ տրվել են յուրովի մոտեցումներ: Սակայն դեռևս չկա հիմնախնդրի լուծման ընդհանրական մոտեցում, որը կհանգեցնի երկրում սոցիալական արդարության վերականգնմանը, միջին խավի տեսակարար կշռի ավելացմանը, անապահով խավի

կրճատմանը, աղքատության մեղմացմանը, և, վերջապես, արժանավայել ասարելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Մեր կողմից փորձ է արվել դիտարկել, վերլուծել և գնահատել ՀՀ բնակչության, և նրա առանձին խմբերի եկամուտների և ծախսերի բաշխման իրական պատկերը և առաջադրել մոտեցումներ, որոնք կբերեն դրա արդարացի բաշխմանը, բացահայտել անապահով խավի ձևավորման պատճառները, նրանց եկամուտների ու ծախսերի բաշխմամբ պայմանավորված հիմնախնդիրները, անապահով խավին աջակցելու ուղղված պետության կողմից իրականացվող միջոցառումների արդյունավետության չափը: Այս ամենով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է մշակել ՀՀ բնակչության շերտավորման պատճառները բացահայտող տնտեսական ուղիներ, որոնք կնպաստեն բնակչության առանձին խավերի, հատկապես անապահով խավի կենսամակարդակի բարձրացման պետական քաղաքականության բարելավմանը:

Նպատակի իրականացման համար հետազոտությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Ուսումնասիրել բնակչության բարեկեցության աստիճանը գնահատող «կենսամակարդակ», «կյանքի որակ», «կենսակերպ», «կյանքի ոճ» հասկացությունները,
- Բացահայտել բնակչության շերտավորման պատճառները և ներկայացնել բնակչության «անապահով խավ» հասկացությունը բնութագրող հիմնական բնորոշումները,
- Վերլուծել ՀՀ բնակչության ժողովրդագրական առկա շարժընթացները,
- Վերլուծել բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները,
- Հետազոտել բնակչության աղքատության վիճակը ՀՀ-ում,
- Ներկայացնել բնակչության առանձին խմբերի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի անհավասարության գնահատման եղանակները, վերլուծել դրանց անհավասարության պատճառները,

- Հետազոտել ՀՀ սոցիալական ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերը և սոցիալական ոլորտի պետական կարգավորման միջազգային փորձը,
- Բացահայտել ՀՀ-ում բնակչության աղքատ և անապահով խավի կենսամակարդակի բարձրացման սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղղությունները, ինչպես նաև պետական կարգավորման ուղիները, լծակները և մեխանիզմները:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության սոցիալ-տնտեսական խմբերն են, մասնավորապես անապահով խավը, նրանց ձևավորման պատճառները, աջակցման պետական քաղաքականության ուղիները, իսկ առարկան՝ եկամուտների բաշխման գործընթացում ՀՀ բնակչության առանձին շերտերի միջև ձևավորվող հարաբերությունները, որոնցով էլ պայմանավորված է երկրում բարեկեցության մակարդակը և ըստ եկամուտների ու ծախսերի անհավասարության մասշտաբները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական ու ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, հայեցակարգերը, մոդելները, հայ ու արտասահմանյան հետազոտողների կողմից հիմնախնդրին առընչվող ուսումնասիրությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ և այլ երկրների օրենքներն ու իրավական ակտերը, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ ԱԿԾ-ի, ՀՀ Ֆինանսների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունների, միջազգային կազմակերպությունների հրապարակումներն ու պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության (անալիզի) և համադրության (սինթեզի), համակարգային, գիտական վերացարկման, կառուցվածքային, գործոնային վերլուծությունների, վիճակագրական խմբավորումների մեթոդները:

Հետազոտության հիմնական արդյունքները և նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է

հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական, մեթոդական և գործնական արդյունքներով: Այսպես.

- Աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ մարդու անհատական ներուժային հատկանիշների համախմբի և անհատի հնարավոր աշխատանքային պայմանների առկայության տնտեսական գնահատման համար անհատական հարցումների և սկորինգային մեթոդով մշակվել է **«սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության օգտակար գործունեության գործակից»** ու կատարվել դրա գնահատում, որի համար ապահովվել է նաև հաշվարկման ինքնաշխատծրագրային մոդել:
- Մշակվել և գնահատվել է **«կյանքի որակի տնտեսական գնահատման»** ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է բնակչության 1 չափահասի հաշվով դրամական եկամուտների հարաբերությունը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի ու մարդկային կապիտալի առաջնային ձևավորման և կուտակման համար անհրաժեշտ դրամական միջոցների հանրագումարին՝ բազմապատկած սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակցով:
- Առաջարկվել և հաշվարկվել է **«աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ»** նոր ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է գնահատված մարդկային կապիտալի (*Մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ*) և աշխատանքի գնահատված արտադրողականության (*Աշխատանքի ներուժային արտադրողականության ՕԳԳ*) տարբերությունը:
- Տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ բնակչության անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի փոփոխության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցող գործոնների համակարգը՝ աշխատավարձի նվազագույն չափը, կենսաթոշակների նվազագույն չափը, նպաստների միջին չափը, անապահով խավի մասնավոր տրանսֆերտների չափը, դրանց ազդեցության հիմնական բնութագրերը:
- Անապահով խավի պաշտպանության արդյունավետության և կենսամակարդակի բարձրացման համար մշակվել է պետական

կարգավորման անհրաժեշտ միջոցառումների համալիր, որը ներկայացվել է համակարգված սխեմայի տեսքով:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթները չեն կրկնում այլ հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները և որակապես տարբերվում են գոյություն ունեցող մոտեցումներից, որով էլ պայմանավորվում է դրանց գիտական նորույթը:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների կողմից՝ ՀՀ բնակչության առանձին խավերի, մասնավորապես անապահով խավի պաշտպանվածությանն ուղղվող միջոցառումների արդյունավետության բարձրացմանը նպաստող հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերը մշակելու գործընթացներում, միջարթ դրույթներ կարող են օգտագործվել նաև ՀՀ բնակչության կենսամակարդակի բարձրացման, դրամական եկամուտների արդարացի բաշխման հիմնախնդիրների լուծման, անապահով խավի տեսակարար կշռի ու աղքատության նվազման, ինչպես նաև բնակչության միջին խավի տեսակարար կշռի ավելացման գործընթացներում:

Ատենախոսության տեսական ու գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել սոցիալական ոլորտի հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար, իսկ աշխատանքում արժարժված հիմնական դրույթները կարող են կիրառություն գտնել ընդհանուր տնտեսագիտական ու քննարկվող ոլորտին վերաբերող հատուկ առարկաների շրջանակներում:

Արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքում արժարժված հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ և ասպիրանտների գիտական նստաշրջաններում, «Մակրոէկոնոմիկա» ամբիոնի կողմից կազմակերպված գիտական սեմինարներում, «Աշխատանքի ու սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում: Առաջարկված մոտեցումների հիմնական բնութագրիչները փորձարկվել են «Աշխատանքի ու սոցիալական

հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, որի ընթացքում ապացուցվել է դրանց կիրառելիությունը և ներդրման նպատակահարմարությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն արտացոլվել են 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կազմն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, գրականության ցանկից, հավելվածներից, գծապատկերներից, աղյուսակներից. այն շարադրված է 155 համակարգչային էջի վրա՝ առանց հավելվածների:

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱԿՉՈՒ ԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ, ՇԵՐՏԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԱՆԱԴԱՐՈՎ ԻԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 «ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ» ԻԱՍԿԱԳՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՆՈՒՏԱԿԱՆ ԲՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ

Մտքի որակից կախված է կյանքի որակը

Ամերիկացի հոգեբան և բժշկություն փորձագետ Ռ. Ալբերտը (Ռամ Դաս) նկարագրում է կյանքի որակի վերաբերյալ տարբեր կարծիքները հետևյալ կերպ. «Յիմալ այն երում՝ իմ գուրուի տաճարում, կյանքս եղել է շատ պարզ: Քնել եմ գոմաղբի մեջ, լվացվել դույլից, կերել օրվա մեջ մեկ անգամ, նստել ժամերով պատուհանին նայել կամ ուսումնասիրել Գիտու 1 («Բխագավար Գար»)՝ հինդուիզմի սուրբ գիրք): Ես հիշեցի «Լայ \$» ամսագրից մի հոդված, որտեղ նկարագրվում էր ամերիկացի ռազմագետու կյանքի առօրյան. «Ամբողջ օրը նստում եմ սենյակում, քնում գոմաղբի մեջ, լվացվում դույլից, ուտում օրվա մեջ մեկ անգամ»: Հոդվածի նպատակն էր ցույց տալ ու կյանքի սարսափելի պայմանները: Ես նայեցի իմ կյանքը՝ կամովին ընտրել եմ այդպիսի պայմաններ և նաև հաճույք ստացել»¹:

Տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում գոյատևման նույն պայմանները, հետևաբար նաև կենսամակարդակը: Այդ տարբերությունների պատճառները, ի վերջո, որոշվում են կյանքի իմաստի և նպատակի տարբեր ընկալմամբ:

Բնակչություն կենսամակարդակը տնտեսագիտական իսկապոլիտիկան է, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում ենք «կենսամակարդակ» իսկապոլիտիկան տարբեր մեկնաբանումների: Որոշ տնտեսագետներ այն մեկնաբանում են՝ որպես մարդկանց կենսագործունեությունը բնութագրող տարբեր պայմանների ամբողջություն, որով որոշվում է անհատի տեղն ու դերը հասարակության մեջ: Որոշ տնտեսագետներ էլ այն քննարկում են ավելի նեղ իմաստով՝ որպես այդ ամբողջության մի մաս: Այսպես, Ա.Ն. Ազրիլյանի խմբագրությամբ հրատարակված «Մեծ տնտեսագիտական բառարանում» տրվում է «կենսամակարդակ»

¹ Генкин Б.М. Экономика и социология труда// изд. НОРМА Москва, 2007. С.46-47

հասկացողության հետևյալ մեկնաբանումը. բնակչության կենսամակարդակը ներկայացվում է որպես «երկրի բնակչության կյանքի պայմանների ամբողջություն, որը համապատասխանում է նրատնտեսական զարգացման ձեռք բերած մակարդակին»:² Վ.Ֆ. Մայերը ներկայացնում է կենսամակարդակի ներբնորոշումը՝ նշելով, որ «կենսամակարդակը բնակչության կյանքի համար անհրաժեշտ նյութական և մշակութային (հոգևոր) բարիքներով ապահովվածությունն է, նրանց սպառման մակարդակը և այդ բարիքներով մարդկանց պահանջմունքների բավարարման աստիճանը»³:

Առանձին տնտեսագետներ գտնում են, որ կենսամակարդակը բնակչությանն անհրաժեշտ նյութական և հոգևոր կարիքների բավարարվածության մակարդակն է: Այն բնութագրում է մարդու պահանջմունքների կառուցվածքը և դրանք բավարարելու հնարավորությունը: Ըստ նրանց՝ «կենսամակարդակը բնակչության նյութական և մշակութային անհրաժեշտ բարիքներով ապահովվածությունն է, որը բնորոշում է նրանց սպառման մակարդակը և պահանջմունքների բավարարման աստիճանը հասարակության զարգացման տվյալ փուլում»⁴:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր երկրների բնակիչների պահանջմունքները, դրանց զարգացման աստիճանը և բավարարման աստիճանը տարբեր են, Վ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն իրենց աշխատություններում ցույց են տալիս, որ կենսամակարդակի հարցերը քննարկելիս պետք է հաշվի առնել ինչպես ֆիզիկական պահանջմունքների բավարարումը, այնպես էլ այն որոշակի պահանջմունքների բավարարումը, որոնցում մարդիկ ապրում և դաստիարակվում են:⁵ Դա է պատճառը, որ շատ հաճախ կենսամակարդակն ուսումնասիրվում է առանձին վարչատարածքային կտրվածքով՝ երկրի, մարզի, քաղաքի, գյուղի և այլն:

Այ. Մարշալը նշում է, որ «կենսամակարդակի բարձրացումը նշանակում է գիտակցության, էներգիայի ու սեփական արժանապատվության զգացումի այնպիսի բարձրացում, որը

² *Большой экономический словарь /Под ред. А.Н. Азрилияна.-2-е изд. доп. Иперераб.-М.:Институт новой экономики, 1997.-764с.*

³ *Майер В.Ф. Планирование социального развития и повышения уровня жизни народа:-М.: Изд. МГУ, 1998-с.8.*

⁴ *Չորանյան Մ.Խ. Քաղաքային և գյուղական բնակչության կենսամակարդակի մերձեցումը զարգացած և անցիպիզմի պայմաններում. – Եր. Հայաստան, 1980, էջ 6*

⁵ *Маркс К. , Энгельс Ф., соч, 2 изд: Т. 16- М.: Изд. Полит. Литер., 1960, с. 150.*

միջոցները ծախսելիս մարդուն ուղղորդում է դեպի առավել զգուշավորություներ ու խելամտություներ, ստիպում է բացառել սննդի ու խմիչքի այնպիսի ծախսերը, որոնք արտրժակ են գրգռում, բայց չեն ավելացնում ուժերը, և այնպիսի զբաղմունքները, որոնք պատճառում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական վնասներ»:⁶ Ինչպես տեսնում ենք, հեղինակը բնակչության կենսամակարդակը մեկնաբանելիս նեղացնում է պահանջմունքների շրջանակները մինչև անհրաժեշտ պահանջմունքների մակարդակը:

Ըստ Ռ. Արմենակյանի «կենսամակարդակը բնակչության իրական սպառումն արտացոլող սոցիալ-տնտեսական հասկացություներ է, որն արտահայտում է բնակչության պահանջմունքների կառուցվածքը, հասարակական ճանաչում ստացած հիմնական կենսական պահանջմունքների բավարարման իրական մակարդակը»:⁷ Ինչպես նկատում ենք, հեղինակը ևս կենսամակարդակը բնորոշելիս շեշտը դնում է պահանջմունքների բավարարմանը՝ կարևորելով կենսական պահանջմունքները:

Ընդհանրացնելով վերը նշված մեկնաբանումները՝ գտնում ենք, որ **կենսամակարդակը մարդկանց բազմակողմանի ինչպես բանական (գիտակցական), այնպես էլ կենսական պահանջմունքների բավարարման անմիջականորեն ուղղված հասարակական վերարտադրության բոլոր փուլերի և գործընթացների արդյունքների ամբողջություներն է, որի բարձրացման գործում մեծ դեր ունի պետության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականություները**: Կենսամակարդակը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ անհատի և հասարակության, իհարկե, գնահատման գերակայություները տալով հասարակությանը՝ որպես մակրո վերլուծության խնդրո առարկա:

Համաձայն ենք այն մտքին, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք, որի համար էլ պետություներն անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար⁸:

Առանձնացվում են կենսամակարդակի վրա ուղղակիորեն ազդող 3 խումբ գործոններ.

⁶ Маршал А., Принципы экономической науки. Т. ///. Пер. с англ.-М.: Прогресс, 1993,- с.108.

⁷ Արմենակյան Ռ.Ռ. Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը.- Եր. 2004, էջ 8

⁸ ՀՀ Մահմանադրություն (փոփոխություններով), հոդված 34, ընդունված 27.11.2005թ.

1. Մարդկանց կենսագործունեության պահպանման համար անհրաժեշտ նյութական պայմանները՝ սնունդ, հագուստ, բնակարան, կենցաղային պայմաններ:
2. Մարդկանց կյանքի որոշակի մակարդակի պահպանման հետ կապված անհրաժեշտ գործոնները՝ առողջապահության և բժշկական սպասարկման զարգացում, ակտիվ հանգստի համար պայմանների ստեղծում և շրջակա միջավայրի պահպանում:
3. Անհատի սոցիալական, մշակութային, հոգևոր, ստեղծագործական զարգացումը:

Յուրաքանչյուր երկրի հասարակության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները համապատասխանում են իրենց երկրի ազգային առանձնահատկություններին: Հետևաբար, կենսամակարդակի ցուցանիշներն ընդհանրական չեն բոլոր երկրների համար: Օրինակ՝ որոշ երկրներում կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների մեջ են ներառվում ընտանիքի դրությունը, մարդկանց միջև հարաբերությունները, մասնակցությունը քաղաքական կյանքին, կարևորվում է նաև բժշկական ապահովագրությունը, իսկ այլ երկրներում՝ քաղաքական տրոնացման (ուրբանիզացման) մակարդակն ու շրջակա միջավայրի պաշտպանության ցուցանիշները: Մեր կարծիքով, կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները ժամանակ առ ժամանակ պետք է վերանայվեն, քանի որ ժամանակի և հասարակության զարգացման ընթացքում փոփոխվում են մարդկանց պահանջմունքները, դրանց զարգացման աստիճանը, բավարարման չափը:

Առանձնացվում է կենսամակարդակի գնահատման ցուցանիշների միամբողջ համակարգ՝ բաժանելով այն 3 խմբի՝⁹

1. *Կենսամակարդակի ամփոփ ցուցանիշներ*՝ ՀՆԱ-ի, ազգային եկամտի, վերջնական եկամուտների մեծությունը բնակչության 1 շնչի հաշվով, տնային տնտեսությունների կողմից սպառված ապրանքների և ծառայությունների ծավալը, ծնելիության, մահացության, բնակչության բնական աճի գործակիցները, կյանքի տևողությունը, տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածությունը, գործազրկության մակարդակը, աշխատանքային շաբաթվա տևողությունը, կրթական տարբեր մակարդակների

⁹ Պրոֆ Ղուշյանի Հ. ընդհանուր խմբագրությամբ. «Մակրոտնտեսական կարգավորում» ուսումնական ձեռնարկ, Երևան, Տնտեսագետ, 2005. Էջ 384

բնակչության թիվը, կրթության և մշակույթի վրա ծախսվող միջոցների տեսակարար կշիռը պետական բյուջեում, բնակտարածությունը մեկ մարդու հաշվով, շրջակա միջավայրի վիճակը բնութագրող ցուցանիշներ և այլն:

2. *Կենսամակարդակի բնափրային ցուցանիշներ*՝ արտահայտում են կոնկրետ նյութական բարիքների սպառման ծավալները (ապահովվածությունն անձնական գույքով, սննդամթերքի սպառումը, կենսական նվազագույնը և այլն):

3. *Կենսամակարդակի տեսակարար ցուցանիշներ*՝ արտահայտում են կենսամակարդակի կառուցվածքը և համամասնությունները (բնակչության բաշխումն ըստ եկամտային խմբերի, եկամուտների համակենտրոնացումն ու տարբերակումը և այլն):

Մեր կարծիքով, բնակչության կենսամակարդակի բնափրային ցուցանիշներն ամփոփ ցուցանիշների մասնիկն են կազմում, հետևաբար ամենաին պետք է իրարից տարանջատել:

Բացի վերոնշյալ ցուցանիշներից, ՀՀ ԱՎԾ տեղեկագրերում առկա են կենսամակարդակը բնութագրող բազմաթիվ քանակական (որոշում են կոնկրետ ապրանքների և ծառայությունների օգտագործման ծավալը) և որակական (բնակչության բարեկեցության որակական կողմը) ցուցանիշներ, որոնք պատկերացում են տալիս տնային տնտեսությունների եկամուտների ու ծախսերի, առողջության, բնակարանային պայմաններով, սննդի օգտագործման և կենսագործունեության այլ ոլորտների մասին՝ առանձնացնելով աշխատավարձի, թոշակների և նպաստների միջին չափը, բնակչության մեկ շնչի հաշվով կրթության, առողջապահության վրա կատարվող ծախսերը, միջին աշխատավարձի հարաբերակցությունն աշխատունակ բնակչության սպառողական նվազագույնին, միջին կենսաթոշակի հարաբերակցությունը թոշակառուների սպառողական նվազագույնին և այլ ցուցանիշներ: Հաշվարկվում են նաև այնպիսի ցուցանիշներ, որոնք արտացոլում են պահանջմունքների բավարարման որակական կողմը՝ բնակչության մեկ շնչի հաշվով սննդի կարևոր տեսակների, խմելու ջրի օգտագործումը, սննդի կալորիականությունը, տեխնոլոգիական, տեղեկատվության հասանելիությունը, խոսքի ազատությունը (ցենզուրա), կոռուցվածություն մակարդակը և այլն:

Ներկայումս լայնորեն օգտագործվում է կենսամակարդակը բնութագրող ամփոփ ցուցանիշը՝ մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ) կամ մարդկային ներուժի զարգացման համաթիվը (ՄՆԶՀ), որը շրջանառության մեջ է դրվել ՄԱԿ-ի մասնագետների կողմից՝ 1990թ.: ՄԶՀ հիմնական բաղադրիչներն են՝ կյանքի միջին տևողությունը, կրթական մակարդակը և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ հաշվարկված ըստ ազգային արժույթի համարժեքային գնողունակության: Սակայն 2012թ-ից ՀՆԱ-ի փոխարեն օգտագործվում է ՀԱԵ (համախառն ազգային եկամուտ), քանի որ, ըստ ՄԱԿ-ի փորձագետների գնահատման, ՀԱԵ ներառում է ոչ միայն ներքին արտադրությունը, այլև երկրի ռեզիդենտների համար եկամտի աղբյուր հանդիսացող միջազգային ոչ առևտրային բնույթի փոխանցումները, մարդասիրական օգնությունները:

Որպես մարդկային հնարավորությունների չափման միջոց՝ մարդկային ներուժի զարգացումը դիտարկվում է 2 տեսանկյունից, նախ՝ որպես մարդկային ներուժի ձևավորում, գիտելիքների, փորձի, հմտության ձեռքբերում, առողջության լավացում, այնուհետև՝ որպես կուտակված ներուժի ներդրում, օգտագործում գործունեության տարբեր ոլորտներում՝ արտադրական, հանգստի կազմակերպման նպատակներով:

2015թ. հունիսին ՄԱԿ զարգացման ծրագրի հրապարակած «Մարդկային ներուժի զարգացման 2015 զեկույց»-ում ներկայացվել են ՄԱԿ-ի անդամ 193 երկրներից 188 երկրի 2013-2014թթ. մարդկային ներուժի համաթվի տվյալները: Համաձայն զեկույցի՝ ՄԱԿ-ի անդամ երկրներն ըստ ՄՆԶՀ-ի դասակարգվել են «շատ բարձր» (1.0-ից մինչև 0.808), «բարձր» (0.798-ից մինչև 0.702), «միջին» (0.698-ից մինչև 0.555), և «ցածր» (0.548 և ցածր), մակարդակ ունեցող երկրների: ՀՀ-ը սույն ցուցանիշով դասվում է մարդկային ներուժի զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկրների թվին՝ զբաղեցնելով 85-րդ տեղն (2013թ. զբաղեցրել է 87-րդ տեղը) աշխարհի 188 երկրների թվում: ՀՀ-ում կյանքի միջին տևողությունը 74.7 տարի է, մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը (ՀԱԵ) 8.124 ԱՄՆ դոլար է, կրթության միջին տևողությունը՝ 10.9, կրթության սպասվող տևողությունը՝ 12.3

տարի:¹⁰ Հայաստանը ՄՆԶ մակարդակով և իր բաղադրատարրերով 2014թ. բավականին հետ է ՌԴից (50-րդ տեղ)՝ գերազանցելով միայն կյանքի սպասվող միջին տևողությամբ (Ռուսաստանում՝ 70.1 տարի), իսկ հարավկովկասյան տարածաշրջանում գիջում է Վրաստանին (76-րդ տեղում) և Ադրբեջանին (78-րդ տեղում): Թուրքիան գերազանցում է 72-րդ տեղը: Իսկ ամենաբարձր ՄՆՀՅ ունեցող կամ ամենբարեկեցիկ երկրների շարքին են դասվել Նորվեգիան, Ավստրալիան, Շվեյցարիան, Գերմանիա, ԱՄՆ-ն, Կանադան: Իսկ ոչ բարեկեցիկ կամ «ցածր» մակարդակ ունեցող երկրներից են Մոզամբիկը, Գվինեան, Չադը և այլն (տե՛ս հավելված 1.1.1):

Շատ հաճախ տնտեսագիտական գրականության մեջ «բարեկեցություն», «կենսամակարդակ», «կենսակերպ» և «կյանքի որակ» հասկացությունները քննարկվում են որպես փոխադարձ փոխարինելի հասկացություններ: Դեռևս Արիստոտելի մոտ կենսամակարդակ դատողությանը հանդիպում ենք *εὐδαιμονία* (eudaimonia) սահմանմամբ, որն ընդունված է թարգմանել որպես երջանկություն: Իսկ Հարիս Ռեկիտեմը նշում է, որ eudaimonia-ի առավել ճշգրիտ մեկնաբանությունը հենց բարեկեցությունն է: Վ. Բալիկունը կենսամակարդակը քննարկում է լայն առումով՝ այն նույնացնելով բարեկեցության հետ: Ըստ նրա՝ «հասարակական բարեկեցության մակարդակը (կենսամակարդակը) մարդկանց նյութական բարիքներով, ծառայություններով ու կյանքի պայմաններով ապահովվածության աստիճանն է, որոնք անհարժեշտ են նրանց հարմարավետ ու անվտանգ գոյություն համար»¹¹:

Մեր կարծիքով «բարեկեցություն» հասկացությունն ավելի ընդգրկուն է և իր մեջ ներառում է «կենսամակարդակ», «կենսակերպ», «կյանքի որակ», «կյանքի ոճ» հասկացությունները, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է բարեկեցության որևէ կողմը: Իրենց որոշակի տարբերություններով ու առանձնահատկություններով հանդերձ՝ նշված հասկացությունների ընդհանրությունն այն է, որ դրանք բոլորն էլ բնութագրում են բնակչության բարեկեցության բարձրացման այս կամ այն կողմը:

Ներկայացնենք «բարեկեցություն» հասկացության և վերջինիս հիմնական բաղադրատարրերի սոցիալ-տնտեսական բովանդակությունը. «Բարեկեցությունն անհատների՝ սեփական

¹⁰ Human Development Report 2014, *Sustaining Human Progress: Reducing Vulnerabilities and Building Resilience*, UNDP 2014, p.160-163, Human Development Report 2015, *Work For Human Development*, UNDP 2015, p.208-210

¹¹ Баликов. В.З. *Общая эк. Теория. Учебное пособие.* - Новосибирск: ООО "Изд. ЮКЭА", 1998, с. 213

«օգտակարություն» առավելագույնին հասցնելուն ուղղված սպառողական զամբյուղի կամ վերջինիս համապատասխան արժեքների համալրումն է: Այլ սահմանմամբ՝ բարեկեցության բնութագիրը չի սահմանափակվում սպառողական (գնողունակ) զամբյուղի պարունակությամբ, այլև ընդլայնվում է՝ ներառելով ոչ նյութական բարիքներ, ինչպիսիք են հանցագործություններից զերծ համայնքը, մաքուր օդը, և նույնիսկ հարմարավետության այն զգացումը, որը ծնվում է իմացությունից, որ հասարակության մեջ չքավորների թիվը պակասել է:»¹²

Այն տնտեսագետները, որոնք աշխատում էին օգտակարության տեսության ոլորտում, «բարեկեցությունը» դիտարկում էին որպես հասարակության, անհատներին, ընտանիքներին ընկնող օգտակարության քանակական չափորոշիչների գումար: Յետևաբար, օպտիմալ էր համարվում ռեսուրսների այնպիսի բաշխումը, որն այդ տեսակետից առավելագույնը կհասցնի բարեկեցությունը: Ըստ Ա. Մարշալի ռեսուրսների օպտիմալ բաշխվածության կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ եկամուտները կբաշխվեն հավասարաչափ: Յեղիևակը գտնում էր, որ բնակչության տնտեսական բարեկեցությունը կախված է կապիտալի կուտակումից և բնակչության աճի այն չափից, ինչ չափով պայմանավորված է ռեսուրսների բաշխումը:

Մինչդեռ Ա. Պիգուն կարևորում էր բարիքի օգտակարությունը, սակայն վերջինիս չափը որոշել հնարավոր չէ, քանի որ անհնար է բարիքի օգտակարությունն ընդհանրացնել բոլորի համար: Նա պնդում էր, որ տնտեսական բարեկեցությունն առավելագույնի է հասնում այն դեպքում, երբ ապրանքի արտադրության սահմանային հասարակական ծախսերը հավասարվում են սահմանային մասնավոր ծախսերին:¹³

Այդ պատճառով տնտեսագետները հրաժարվեցին բարեկեցության սահմանման հիմքում դնել բարիքի օգտակարությունը և փաստորեն ընդունեցին, որ տնտեսական բարեկեցությունը նույնպես անչափելի է: Յամածայն Ջ. Բենտամի, ընդհանուր բարեկեցությունն ուղղակի առանձին մարդկանց բարեկեցությունների թվաքանակական գումարն է: Այսպիսով, նա շրջանցում է առանձին մարդկանց համար

¹² «Այ Փի Էս» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index), հետազոտություն, մեթոդաբանություն, Եր. 2010թ. էջ 6

¹³ Pigou A.C. The Economics of Welfare, part 1, 1920, <http://www.econlib.org/library/NPDBooks/Pigou/pgEW1.html>

օգտակար ու թյան հավասարեցման հիմնախնդիրը, քանի որ դիտարկում է միայն մեկ դեպք, որի դեպքում նման հավասարեցումը դժվար ու թյուն է չի բերում:

Քեյնսը գտնում է, որ որևէ տնտեսական երևույթ կամ գործընթաց գնահատելիս բախվում ենք չափման միավորի հիմնախնդրին. «Ամենաշատը երեք դժվար ու թյուն է խանգարել ինձ, և ես չեմ կարողացել հստակ ձևակերպել մտքերս... Առաջին՝ չափման միավորի ընտրությունը, որն ամբողջական կիրառելի լինի տնտեսական համակարգի հետազոտության ժամանակ...»:¹⁴ Յետևաբար, հասարակական բարեկեցության գնահատումը հստակ չէ:

Չի կարելի չհամաձայնվել այս տեսակետին, որի, կարծես, շարունակությունն է Յ. Ադաջանյանի հետևյալ մեկնաբանությունը. «Բարեկեցությունն արդար բաշխման սկզբունքով գործող օպտիմալ տնտեսական համակարգ է, որի ռացիոնալ վարքագիծը պայմանավորված է ռեսուրսների արդյունավետ բաշխվածությամբ և օգտագործմամբ»: Այս առումով կան անհստակություններ՝ կապված պահանջարկի արդյունավետ կառուցվածքի ձևավորման, բավարարման հետ: Բացի դրանից, բավականին բարդ խնդիր է ռեսուրսների արդյունավետ օգտագործման սահմանը ներկայացնելը: Մի կողմից դա կապված է ռեսուրսների արդյունավետ բաշխման, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ տեխնոլոգիական մակարդակի ապահովման հետ:¹⁵ Փաստորեն, հեղինակը գտնում է, որ տնտեսական բարեկեցության գնահատման արժեք չափերը հստակ չեն:

Չամաձայնելով և ընդհանրացնելով վերը նշված տնտեսագետների կարծիքները՝ այնուամենայնիվ, գտնում ենք, որ բարեկեցությունը բնակչության առողջ ապրելու, սպառողական զամբյուղի ապրանքների, կենսագործունեության համար անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերման առավելագույն հնարավորությունների, բնակչության ապրելու և աշխատելու, հնարավորությունների ամբողջությունն է:

«Կենսակերպ» հասկացությունը փիլիսոփայական-սոցիոլոգիական հասկացություն է, որը, կենսապայմանների հետ միասին, ներառում է անհատի, որևէ սոցիալական խմբի, նաև ամբողջ

¹⁴ Keynes J. "The General Theory of Employment, Interest and Money", Harcourt Brace, London, 1994, p.37-38

¹⁵ Ադաջանյան Հ., Հավասարակշռության տեսության պարադոքսները, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», թիվ 1 205, էջ 3-17

հասարակության գործունեության բնորոշ տեսակների ամբողջությունը: Այն թույլ է տալիս մարդկանց կենսագործունեության հիմնական տեսակները՝ կենցաղը, աշխատանքը, հասարակական կյանքը և այլն, դիտարկել փոխկապվածության մեջ, ուսումնասիրել և բացահայտել նրանց վարքագծի հիմնական պատճառները (այսինքն՝ կյանքի ոճը), որոնք պայմանավորված են կյանքի կացութաձևով, մակարդակով և որակով: Կենսակերպը բաժանվում է բաժինների՝ ընդդրվելով հետևյալ ցուցանիշները՝ աշխատանքային, մշակութային, հասարակական, կենցաղային, քաղաքական գործունեության, ընտանիքի, կրթության, ազգային առանձնահատկությունների և այլ ցուցանիշներ, որոնց հետ զուգակցվում են կենսապայմանների ցուցանիշները՝ նյութական բարեկեցության, շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական ապահովության, առողջապահության, և այլն:

Բարեկեցության հաջորդ բաղադրատարրը «**կյանքի ոճն**» է: Այն սոցիալ-հոգեբանական հասկացություն է, որն արտահայտում է մարդկանց վարքագծի որոշակի տիպը՝ գոյատևելու, պահանջմունքները բավարարելու համար: Յետևաբար կյանքի ոճը մարդու վարքագծի դրսևորման ձևն է: Այստեղ հիմնական ուշադրությունը դարձվում է մարդկային գործունեության սուբյեկտիվ կողմին, անհատի, ընտանիքի, սոցիալական որևէ խմբի շարժառիթներին, ձևերին, գործողություններին, կողմնորոշումներին, արարքներին, առօրյա վարքագծին:

Սակայն վերոնշյալ հասկացություններով հանդերձ՝ մտածողների, քաղաքական գործիչների և տնտեսագետների կարծիքով 21-րդ դարը որակի դար է, հետևաբար, չնսեմացնելով բարեկեցության մյուս բաղադրատարրերի դերն ու նշանակությունը, գերակա դիրք է ստանում «կյանքի որակ» հասկացությունը: Տնտեսության զարգացման նոր ուղիների որոնումը հանգեցրել է նրան, որ միայն կյանքի որակը կարող է լավագույնս արտահայտել համաշխարհային հասարակության նպատակները, քանի որ մարդկությունը կանգնած է նոր քաղաքակրթության անցման շեմին, այն է՝ «որակի քաղաքակրթություն»:

«**Կյանքի որակ**» հասկացությունը սահմանելիս տնտեսագետների մոտ չկա միասնական և միատեսակ մոտեցում: Առանձին տնտեսագետներ գտնում են, որ այն սոցիալական կարևոր

հասկացողություն է, որը բնորոշվում է մարդու պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների կառուցվածքով: Մյուսները «կյանքի որակ» հասկացողությունը դիտարկում են տնտեսագիտական տեսանկյունից՝ հիմնվելով բնակչության կյանքի նյութական ապահովվածության վրա:¹⁶ Ըստ մեզ, հասկացողության բազմիմաստության պատճառներից մեկն այն է, որ այն կիրառվում է տարբեր համատեքստերում ու նպատակներով:

Ըստ Շելլոկի՝ կյանքի որակի տարբեր սահմանումներն ու մեկնաբանությունները թվով անցնում են 100-ը: Այդ պատճառով մի շարք հետազոտողներ պնդում են, որ կյանքի որակը հնարավոր է ճշգրտորեն սահմանել, ուստի ավելի նպատակահարմար է այն ուսումնասիրել տարբեր կողմերի ու մակարդակների շեշտադրմամբ, քան փորձել որևէ կերպ այն սահմանել:¹⁷

Կյանքի որակը մի շարք բնութագրիչների ամբողջությունն է, որն արտացոլում է բնակչության հոգևոր, նյութական, ֆիզիկական և սոցիալական բարեկեցությունը:¹⁸

«Կյանքի որակ» հասկացողությունն առաջացել է 1950-ական թթ. կեսերին, երբ ակնհայտ դարձավ, որ «կյանքի մակարդակ» հասկացողությունը չի արտացոլում բնակչության լիարժեք բարօրությունը: Համարվում է, որ առաջին անգամ այդ արտահայտությունն առաջացել է Ջ.Գելբրեյդի «Հասարակության բազմությունը» գրքում 1960թ: Քաղաքականության մեջ այդ հասկացողությունն օգտագործվել է ԱՄՆ Նախկին Նախագահ Ջ. Քեննեդիի կողմից «Ազգի վիճակի մասին» զեկույցում 1963թ., որտեղ նշվում էր ամերիկյան կյանքի որակի և ամերիկյան ապրանքների քանակի համահունչ լինելու մասին:

Հետազոտողները կյանքի որակ հասկացողության զարգացման երկրորդ փուլը թվագրում են 1966թ-ից: Հենց այդ ժամանակ է հրապարակվել հավաքական մենագրությունը «Սոցիալական ցուցանիշները» Ռ. Բաուերի խմբագրությամբ՝ սկիզբ դնելով ողջ ամերիկյան և արևմտեվրոպական հասարակագիտությանը «Սոցիալական ցուցանիշների շարժմանը»:¹⁹ Եվ արդեն 90-ական թթ.

¹⁶ «Մյ Փի Էս» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index), հետազոտություն, մեթոդաբանություն, Եր. 2010թ., էջ 6

¹⁷ «Մյ Փի Էս» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index), հետազոտություն, մեթոդաբանություն, Եր. 2010, էջ 35

¹⁸ Экономическая теория: Учебник для студ. вузов/ научн. ред. и рук. авт. коллектива В.А. Камаев.-4 изд.,- М.:Гуманит. изд. центр ВЛАДОС, 1999, с.612

¹⁹ Бочкарева В.К. Интегральный показатель качества жизни. // Народонаселение. -2001, N3, с. 102-108.

սկզբին փորձեր էին արվում կյանքի որակը դիտարկել որպես ինքնուրույն գիտական հասկացություն: Սկզբում կյանքի որակ հասկացությունը կրում էր բավականին վերացական ձև՝ հիմնվելով գլխավորապես տնտեսական անվտանգության վրա: Յետագայում «կյանքի որակ» հասկացության մեջ ներառվեցին գրեթե բոլոր բաղադրիչները՝ ժամանակակից մարդու կյանքի արժեքային համակարգից սկսած, մինչև բնակչության նյութական ապահովվածության մակարդակը:

Այսպիսով, բնակչության կյանքի որակը որոշվում է հասարակության, այդ թվում՝ սոցիալական խմբերի, անհատ քաղաքացիների կենսական ներուժով, նրանց կենսագործունեության պահանջմունքներին, արժեքներին և նպատակներին համապատասխան գործընթացների, միջոցների, պայմանների և արդյունքների բնութագրերով՝ ելնելով որոշակի չափանիշներից՝ նորմերից, ստանդարտներից, կանոններից, սովորույթներից և ավանդույթներից:

Ուստի, այն հարաբերական գնահատում ունի, ինչպես օրինակ, երբ տեղի է ունենում գլոբալացման, մասսաների արժեհամակարգի և ազգային, կրոնական, փիլիսոփայական, բարոյահոգեբանական, ինտելեկտուալ արժեհամակարգերի բախումը: Կյանքի որակը գնահատելիս առանձնացնում ենք ցուցանիշների երկու տեսակ՝ 1.օբյեկտիվ (կրում են բնական և սոցիալական բնույթ, օրինակ՝ սննդամթերքի սպառումը, կենցաղային պայմանները, զբաղվածության զարգացման մակարդակը, կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովվածությունը) և 2.սուբյեկտիվ (կրում են ճանաչողական և զգացմունքային բնույթ, օրինակ՝ կյանքի ընդհանուր բավարարվածության գնահատումը՝ անհատի սոցիալական կարգավիճակը, ֆինանսական վիճակը և ընտանեկան հարաբերությունները):²⁰

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության «կյանքի որակ» տնտեսական հասկացությունը կարող է սահմանվել որպես «զանգվածային գիտակցության մեջ ձևավորված, կենսապայմանների ամփոփ բնութագրերի ընդհանրացված գնահատական»: Այդ բնութագրերը կարող են դիտվել կյանքի որակի տասը խմբային հատկությունների օգնությամբ (տե՛ս Աղյուսակ 1.1.1):

²⁰ © 2010 Российская Академия Естествознания, Качество жизни населения: понятие, показатели и современное состояние, <http://rae.ru/forum2011/14/609>

Կյանքի որակի խմբային հատկությունները²¹


1. Բնակչության որակը	Այն համախմբում է այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ վերարտադրման կարողությունը (ծնելիությունը, մահացությունը, հիվանդությունը, հաշմանդամությունը, կյանքի սպասվող տևողությունը և այլն), ընտանիք կազմելու և պահպանելու կարողությունը (ամուսնություն, ամուսնալուծություն), կրթության և ուսուցման մակարդակը (տարիքային խմբերի համապատասխան ուսուցումը, կրթական մակարդակի ձեռքբերումը և այլն):
2. Բարեկեցությունը	Նյութական կողմը բնութագրում է եկամտի ցուցանիշները, բնակչության ընթացիկ սպառման և խնայողություն մակարդակը (իրական եկամուտը, նրանք բաշխումը բնակչության տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի միջև, տնային տնտեսություններում երկարաժամկետ օգտագործման ապրանքների մատչելիությունը և այլն), ինչպես նաև հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները՝ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ, տնային տնտեսություններին փաստացի սպառումը, սպառողական գների ինդեքսը, գործազրկության և աղքատության մակարդակը:
3. Բնակչության կենսաապայմանները և սոցիալական ենթակառուցվածքները	Ներառվում են բնակարանային պայմանների, բնակչության առողջ ապահովման հաստատության և ներքին տրամադրման, կրթության, մշակույթի, հանգստի, սոցիալական և աշխարհագրական շարժունակության և այլնի բնութագրերը:
4. Բնակչության իրազեկվածությունը (այդ թվում՝ տեխնիկաառնությունը, ռազմական հասանելիությունը)	Տեղեկատվության հասանելիությունը թե՛ տեխնիկական միջոցների, թե՛ խոսքի ազատության միջոցով: Ներառում է նաև հեռահաղորդակցության և տեղեկատվական ենթակառուցվածքների միջոցների մատչելիությունը (բջջային կապի օպերատորները, տեղեկատվական ռեսուրսները, ինտերնետ տեխնոլոգիաները և այլն):
5. Սոցիալական ապահովությունը (կամ սոցիալական ու որսի որակ)	Սոցիալական ապահովություն և սոցիալական պաշտպանություն, ֆիզիկական և նյութական անվտանգություն՝ արտացոլելով աշխատանքային պայմանները:
6. Ծրջակամիջավայրի (կամ էկոլոգիական չափորոշիչի) որակը	Զրի և հողի որակը, տարածքի կենսաբազմազանությունը մակարդակը և այլն՝ կուտակելով օդային տարածքում աղտոտման տվյալները:
7. Սոցիալական անվտանգությունը	Ներառում է ազգային անվտանգություն, ահաբեկչություն, ռազմական կոնֆլիկտների առկայություն, քրեածին տարրերի ազդեցությունները:
8. Հասարակարգային միջավայրը	Պետության կառավարման տեսակը և ինտեգրվածությունը արտաքին տնտեսական և քաղաքական միավորումներին:
9. Աշխարհագրական և աշխարհաքաղաքական տեղադրությունը	Կլիմայական գոտիավորումը, բնական աղետների ռիսկայնությունը, բնական ռեսուրսների առկայությունը և բնական ենթակառուցվածքների հասանելիությունը, կապը հարևան երկրների հետ:
10. Հասարակական միջավայրը	Հասարակական միջավայրի էթնիկական, կրոնական, սեռական և մշակութային փոխադարձ ազդեցությունը հասարակական շերտերի և անհատների վրա:

²¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հետևյալ աղբյուրների հիման վրա՝ Силин А.Н. Социальный менеджмент. Словарь-справочник уч. пособие-М. Университетская книга, 2009г, с.99. © 2010 Российская Академия Естествознания <https://rae.ru/forum2011/14/609>

Վերջին հաշվով «կյանքի որակ» հասկացությունը կարելի է կապել վերոնշյալ 10 խմբային հատկությունների հետ, որոնք կազմում են շրջակա միջավայրը և բնակչության կենսագործունեության ապահովության համակարգը: Մեր կողմից կատարված վերլուծական աշխատանքների արդյունքում փորձ է արվել ներկայացնել բնակչության կյանքի որակի՝ որպես բնակչության կյանքից բավարարվածության աստիճանի տնտեսական գնահատման մեխանիզմը՝ վեր հանելով այն հիմնական չափորոշիչները, որոնք էականորեն կազդեն կյանքի որակի վրա (գծապատկեր 1.1.1):

Գծապատկեր 1.1.1

Կյանքի որակի տնտեսական գնահատման չափորոշիչները



ցուցանիշն իրենից ներկայացնում է բնակչության 1 չափահասի հաշվով դրամական եկամուտների հարաբերությունը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի ու մարդկային կապիտալի առաջնային ձևավորման և կուտակման համար անհրաժեշտ դրամական միջոցների հանրագումարին՝ բազմապատկած սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակցով.

$$ԿՈ_q = (\mathcal{N}_t / (U_2 + U_4)) * U_4_{կգ} \quad (1.1)$$

Որտեղ՝ $ԿՈ_q$ -կյանքի որակի տնտեսական գնահատման ցուցանիշ

\mathcal{N}_t - 1 չափահասի հաշվով դրամական եկամուտներ

U_2 - 1 չափահասի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի արժեք

U_4 - 1 չափահասի հաշվով մարդկային կապիտալի առաջնային ձևավորման և կուտակման ուղղվող դրամական միջոցները

ՍԱԿՎՈՒՄ- 1 չափահասի հաշվով սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակից

Մեր օրերում մեծ կարևորություն է ստանում սոցիալական կապիտալի կուտակումն ու ձևավորումը, որը մարդկային կապիտալի հետ գտնվում է փոխադարձ կապվածության և փոխայմանավորվածության մեջ: Սոցիալական կապիտալը որոշակի խմբին հատուկ սոցիալական հարաբերություններ և նորմեր են, որոնք թույլ են տալիս մարդկանց կոորդինացնել իրենց գործողությունները և հասնել իրենց առջև դրված նպատակներին: «Սոցիալական կապիտալ» հասկացության հիմնադիրներից Ջ. Կաուլմանը նշում է. «Ինչպես ֆիզիկական և մարդկային կապիտալը, այնպես էլ սոցիալական կապիտալն ունի իր ներդրումը գործառնական գործընթացում: Այդ պատճառով վստահելի հեղինակություն և մեծ վստահություն վայելող մարդկանց խումբը կարող է հասնել զգալի հաջողությունների, քան մարդկանց այն խումբը, որը չունի նշյալ հատկանիշները»:²² Յետևաբար, սոցիալական կապիտալ է նաև սոցիալական կարգավիճակը, սոցիալական կապերը, վստահությունը մյուսների կողմից: Եվ իզուր չէ, որ «Ասիական վագրերի» (Յարավային Կորեա, Թայվան, Սինգապուր, Հոնկոնգ) կառավարությունները ներդրումներ են կատարել սոցիալական կապիտալում՝ մեծ ջանքեր գործադրելով բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանը, կրթության և տեղեկատվության հավասար հասանելիությանն ու մատչելիությանը, սոցիալական անհավասարության կրճատմանը, պետության և կորպորացիաների համագործակցությանը:²³

Իրական կյանքում կյանքի որակի ամբողջական հաշվարկը բավական դժվար գործընթաց է: Դեռևս տնտեսագետների կողմից չի մշակվել սոցիալական կապիտալը գնահատող լիարժեք մեթոդաբանություն: Այս ուղղությամբ առաջարկում ենք սոցիալական կապիտալի մեծությունը և անհատի կյանքի որակի վրա դրա ազդեցության գործակիցը հաշվարկել ոչ նյութական և դրամային արժևորում չպարունակող բաղադրիչների գործակցով՝

²² Coleman J.S. *Social Capital in the Creation of Human Capital // Social Capital: a Multifaceted Perspective / Eds. P. Dugupta, I. Serageldin. Wash. DC: World Bank, 2000. P. 19.*

²³ Birdsall N., Ross D., and Sabot R. *Inequality and Growth Reconsidered: Lessons from East Asia // World Bank Economic Review. 1995. Vol. 9 (3).pp.477-508*

օգտվելով անհատի ունակություներին առնչվող հատկանիշների համեմատական հարաբերակցության սկորինգային մեթոդից²⁴: Մասնավորապես, աշխատանքի արտադրողականության վրաս ոցիակական և մարդկային կապիտալների ազդեցության չափը որոշելու համար առաջարկվել է աղյուսակ (տե՛ս հավելված 1.1.2), որտեղ յուրաքանչյուր բաղադրատարրի ազդեցությունը գնահատված է: Գնահատման համար կազմվել է հարցաշար, որը բաղկացած է 28 հարցերից, իսկ յուրաքանչյուր հարցի համար ներկայացվել են տարբերակներ: Գնահատումը կատարվել է հետևյալ սկզբունքով՝ որպեսզի յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը չգերակշռի մյուս գործոնների նկատմամբ, գնահատման հիմքում դրվել է հավանական ազդեցությունների 3 տարբերակներ՝ դրական, բացասական և չեզոք: Ընդ որում, հնարավոր ենք համարել առավել դրական և/կամ բացասական աստիճանների հնարավորությունը, այդ թվում դիտարկվող 1 գործոնի շրջանակներում: Նշենք նաև, որ հարցումն անցկացվել է մոտ 900՝ եկամուտ հետապնդող գործուներությամբ զբաղվող անձանց միջև, որոնց մոտ որպես եկամուտ դիտարկվել է միայն իրենց կողմից անմիջական աշխատանքի դիմաց ստացված եկամուտները:


Աղյուսակը բաղկացած է երկու հատվածներից (դասերից)՝ 1)աշխատատեղի ներուժային արտադրողականություն և 2) ներուժային մարդկային կապիտալ: Յուրաքանչյուր գործոնի գնահատված արժեքների հանրագումարով կազմվել է հնարավոր առավելագույն և նվազագույն արժեքների միջակայք, որը սահմանվել է որպես մեկամբողջություն (100%): Փաստացի ստացված արժեքների հանրագումարը նշված միջակայքի մեջ ստանում է իր մասնաբաժնին համապատասխան տոկոսային արտացոլումը:

Գնահատման արդյունքում առաջին հատվածի համար ստացել ենք. **1)աշխատատեղի ներուժային արտադրողականության օգտակար գործուներության գործակից** (այսուհետ ՕԳԳ), այն ներկայացնում է անհատին ընձեռնված հնարավոր աշխատանքային պայմանների առկայությունը և անհատի ինտեգրումն այդ պայմաններին **(I.) և աշխատատեղի ներուժային արտադրողականության թաքնված պահուստ**

²⁴ Солюянычев П.С., Хамидуллин Ф.Ф. Использование модели скоринга при оценке эффективности предпринимательской деятельности // Российское предпринимательство. - 2007. - № 5 Вып. 1 (90). - с.79-82.

(II.=100%-I.), որը ցույց է տալիս անհատի՝ հնարավոր աշխատանքային պայմանների լիարժեք բարելավման բացակայող մասը, երկրորդ հատվածի համար սահմանվել են՝ **մարդկային կապիտալի**

Սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ-ի և եկամտի հարաբերակցությունը



վերարտադրության ՕԳԳ (III.), որը ցույց է տալիս աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ մարդու անհատական ներուժային հատկանիշների համախումբը, և **մարդկային կապիտալի վերարտադրության թաքնված պահուստ (IV.=100%-III.)**, որը ցույց է տալիս աշխատանքային գործունեության համար մարդու անհրաժեշտ անհատական ներուժային հատկանիշների լիարժեք բարելավման բացակայող մասը:

Գծապատկեր 1.1.2

Համախմբելով աղյուսակի երկու հատվածների արդյունքները՝ ստացել ենք **սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ (V.)**, և **սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության թաքնված պահուստ (VI.=100%-V.)** գործակիցները, որոնք էլ հանդիսանում են վերջնական գնահատման արդյունքներ (տես հավելված 1.1.2):

(1.1) բանաձևի կիրառմամբ՝ հաշվարկվել է կյանքի որակի գործակիցը: Բանաձևի սկզբնամասի գնահատման համար օգտագործվել են ԱՎԾ տվյալները²⁵, իսկ երկրորդ մասի գնահատման համար՝ մեր

²⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 42, 124, 227

կողմից անցկացված հարցումների արդյունքները: Արդյունքում ստացվել է հետևյալը.

ԴԵ- 78.803 դր., ՍԶ- 49.784 դր., ՄԿ- 488+2.659 = 3.147 դր., ՍՄԿ_{վգ}- 0.592 կամ 59.2%

$$ԿՈ_{գ} = (78.803 / (49.784 + 488 + 2.659)) * 0.592 = 0.88$$

Արդյունակ 1.1.2 տվյալները վկայում են, որ 1 չափահաս աշխատողի կյանքի որակի տնտեսական գնահատումը միջին հաշվով կազմել է 0.88 միավոր: Առանձնացնելով աշխատողներին ըստ եկամտային խմբերի՝ հաշվարկվել է նաև յուրաքանչյուր եկամտային խմբի աշխատողների կյանքի որակի տնտեսական գնահատման գործակիցը և կատարվել է համեմատական վերլուծություն ընտրված խմբերի միջև:

Արդյունակ 1.1.2

Սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակից (1 չափահասի հաշվով)


1 չափահասի հաշվով սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակիցը՝ աշխատանքային եկամուտների դասակարգման արդյունքում	նվազագույն՝ մինչև 55.000	ցածր՝ մինչև 100.000	միջին՝ մինչև 250.000	միջինից բարձր՝ մինչև 400.000	բարձր՝ 400.001 և ավել	Համախառն
Հարցվածների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	18%	25%	29%	19%	9%	100%
Աշխատատեղի ներուժային արտադրողականության ՕԳԳ	40.9%	47.5%	54.6%	62.0%	73.6%	53.5%
Աշխատատեղի ներուժային արտադրողականության թաքնված պահուստ	-59.1%	-52.5%	-45.4%	-38.0%	-26.4%	-46.5%
Մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ	50.8%	57.8%	62.4%	70.3%	77.0%	62.0%
Մարդկային կապիտալի վերարտադրության թաքնված պահուստ	-49.2%	-42.2%	-37.6%	-29.7%	-23.0%	-38.0%
Սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ	47.7%	54.6%	59.3%	67.8%	76.0%	59.2%
Սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության թաքնված պահուստ	-52.3%	-45.4%	-40.7%	-32.2%	-24.0%	-40.8%
1 չափահասի հաշվով դրամական եկամուտներ	78,803					
1 չափահասի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղ	49,784					
1 չափահասի հաշվով մարդկային կապիտալի առաջնային ձևավորմանն ու կուտակմանն ուղղվող դրամական միջոցները	3,147					
Աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ	9.9%	10.2%	7.8%	8.3%	3.4%	8.5%
Կյանքի որակի տնտեսական գնահատման ցուցանիշ	<u>0.71</u>	<u>0.81</u>	<u>0.88</u>	<u>1.00</u>	<u>1.13</u>	<u>0.88</u>

Ինչպես նկատում ենք, 400.001 և բարձր դրամ աշխատավարձ կամ գործառնական եկամուտ ստացողների տեսակարար կշիռը մոտ կրկնակի անգամ պակաս է մինչև 55.000 դրամ աշխատավարձ կամ գործառնական եկամուտ ստացողների տեսակարար կշիռից, սակայն նրանց կյանքի որակի տնտեսական գնահատման գործակիցը 1.6 անգամ բարձր է մինչև 55.000 դրամ աշխատավարձ ստացողների կյանքի որակի տնտեսական գնահատման գործակիցից: 400.001 և բարձր դրամ աշխատավարձ ստացողների աշխատատեղի ներուժային արտադրողականության ՕԳԳ 1.7 անգամ բարձր է մինչև 55.000 դրամ աշխատավարձ ստացողների նույն ցուցանիշից: Իսկ մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ-ի մասով՝ տարբերությունը 1.6 անգամ է: Նկատենք, որ մինչև 100.000 դրամ աշխատավարձ ստացողների և մինչև 55.000 դրամ աշխատավարձ ստացողների կյանքի որակի տնտեսական գնահատման գործակիցի տարբերությունը 1.1 անգամ է, տարբերությունը 1.1 անգամ է նաև աշխատանքի ներուժային արտադրողականության ՕԳԳ-ի և մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ-ի միջև: Պարզ է դառնում, որ բոլոր աճողական կարգով ներկայացվող եկամտային խմբերում ներառված աշխատողների սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակիցը համամասնորեն է աճում, այսինքն՝ 2-րդ և 1-ին խմբերի միջև տարբերությունը 1.1 է, 3-րդ և 2-րդ խմբերի միջև տարբերությունը 1.08, 4-րդ և 3-րդի միջև 1.1, 5-րդ և 4-րդի միջև նույնպես 1.1:

Գծապատկեր 1.1.3

Վերոնշյալ վերլուծության հիմնական կիրառական նշանակություններից է նաև այն, որ նրա առաջին և երկրորդ դասերի սկզբնական տարանջատված գնահատումը և դրանց հետագա համադրումը թույլ է տալիս վերլուծական հետևություններ անել ոչ միայն առանձնացված եկամտային խմբերի համար, այլև այն կիրառելի է թե՛ գործատուների, թե՛ աշխատակիցների համար՝ բացահայտելու աշխատակիցների մասնագիտական և աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա ազդող գործոնների ներուժային պահուստները: Հատկապես աշխատատեղի ներուժային արտադրողականության և մարդկային կապիտալի վերարտադրության

Աշխատատեղի ներուժային արտադրողականության և մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ-ների համադրությունը



ՕԳԳ-ների համադրումն ակնհայտ ցույց է տալիս՝ արդյոք աշխատակիցը, իր ողջ ունակություններով հանդերձ, համարժեք գնահատվում է իր աշխատավայրում, այն է՝ աշխատակիցն իր համախառն ունակությունների և մասնագիտական հմտությունների կիրառման դեպքում որքանով է փաստացի վարձահատույց լինում իրեն ընձեռնված աշխատանքային միջավայրով և պայմաններով: Այն արտահայտվում է գնահատված մարդկային կապիտալի և աշխատատեղի գնահատված արտադրողականության տարբերությամբ և ներկայացված

Ե որպես «Աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ»
ցուցանիշ: Այսպիսով.

Աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ = *Մարդկային կապիտալի վերարտադրումը ընդհանուր արտադրության օգուտի մասնաճիտական համտարժեքի ընդհանուր արտադրողականության օգուտի մասնաճիտական համտարժեքի* (1.2)

Նշված ցուցանիշի դրական արժեքը ցույց է տալիս աշխատակցի անհատական հատկանիշների գերակշռումն աշխատանքային պայմանների փոխհատուցման նկատմամբ, իսկ բացասական արժեքը՝ աշխատակցի ունակությունների և մասնագիտական հմտությունների գերազանահատուկ աշխատավայրում: Այլ խոսքերով, ցույց է տալիս մարդկային կապիտալի նշանակության գնահատման իրական աստիճանը:

Գծապատկեր 1.1.3-ի տվյալները վկայում են, որ բոլոր եկամուտների խմբերում առկա է **աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ**, որը նվազագույն արժեքը ստանում է առավել բարձր եկամուտ ունեցող անձանց մոտ, ինչը տրամաբանական է, քանի որ վերջիններս հիմնականում հանդիսանում են ղեկավար կազմի անդամներ: Միջին հաշվով շարքային աշխատակիցն իր աշխատանքային միջավայրում «թերազնահատվում է» իր ունակությունների 8.5%-ով: Յետևաբար, աշխատանքի շուկա նոր մտնող անձանց մոտ դրսևորվում է բացասական մի կարծրատիպ՝ երբ վերջիններս գտնում են, որ մասնագիտական կամ հումանիտար լրացուցիչ պատրաստվածությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ դրա պահանջարկն աշխատավայրում կիրառելի է: Նաև, գտնում ենք, որ նման անհավասարակշռության առաջացման պատճառ է աշխատաշուկայում մասնագետների նկատմամբ առաջարկի և պահանջարկի տարբերակվածությունը, երբ աշխատանքի սղության և իրենց մասնագիտացման նվազ պահանջարկի պատճառով հաճախ բարձր կարգի մասնագետներն ստիպված են կատարել իրենցից ավելի ցածր որակավորում կամ այլ մասնագիտացում պահանջող աշխատանք: Նշվածն իրականացնող տրսևորումն է ստացել հայ իրականության մեջ, երբ բարձրագույն ավարտ մասնագետները զբաղվում են որպես շինարարներ, արհեստավորներ, վարորդներ և դրա հակադարձ արդյունքը՝ իրենց մասնագիտությունների մեջ միևնույն որակավորում ունեցող աշխատակիցներից այս պահին հստակորեն

առանձնանում են ծրագրավորողները, որոնց ընձեռնված աշխատանքային արտադրողականության պայմանները (աշխատավարձ, գործուղումներ, վերապատրաստումներ, հանգստի և աշխատանքային պայմանների արտոնյալ ընձեռումներ) մինչև մի քանի անգամ գերազանցում են մնացյալ մասնագետներից:

Սա փաստում է այն, որ ՀՀ-ում զբաղվածությամբ ունենալով արդյունավետ չէ, իսկ մարդկային կապիտալը չի օգտագործվում ամբողջությամբ: Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը վերջին ժամանակաշրջանում մշակվող և իրականացվող տնտեսական քաղաքականության ունում փորձում է առաջնային տեղ տալ արդյունավետ զբաղվածությանը, այնուամենայնիվ, իրականացվող ջանքերը չեն տալիս ցանկալի արդյունք, որի հետևանքով շարունակում է բարձր մակարդակի մնալ ՀՀ-ից «ուղեղների» արտահոսքը: Այդ առումով, գտնում ենք, որ ՀՀ կառավարության, ինչպես նաև մասնավոր տնտեսվարող սուբյեկտների առաջնահերթ թիրախային նպատակներից մեկը պետք է դառնա ոչ երկի մասշտաբով աշխատատեղերի ապահովումն արդի տեխնիկական, տեխնոլոգիական նորամուծությամբ ունենալով (ֆիզիկական և ոչ նյութական կապիտալներ), ինչպես նաև այլ բարեկարգ պայմաններով, ինչը և «Աշխատատեղի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստը» կուղղի աշխատանքի արտադրողականության աճին: Դա կնպաստի ոչ միայն գործարար միջավայրի տնտեսական ցուցանիշների աճին, այլ և կկրճատի սոցիալական լարվածությունը և մարդկային կապիտալի արտահոսքը:

1.2 Բնակչության շերտավորման պատճառները

Յուրաքանչյուր երկրի կառավարության գերակա խնդիրներից են բնակչության շերտավորմամբ պայմանավորված անհամամասնությունների առաջացումն և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները:

Ըստ Ա. Մանասյանի՝ ազատ շուկայական տնտեսությունն այլ սոցիալական երևույթների հետ մեկտեղ ծնում ու շարունակաբար մեծացնում է տնտեսական և սոցիալական անհավասարությունը և, որպես հետևանք, ձևավորում անապահովների խավ տվյալ հասարակությունում:²⁶

Ներկայումս ՀՀ-ում դիտարկվում է բնակչության բավականին ուժեղ շերտավորում որն ընդգրկում է ինչպես առանձին տարածարջաններ, այնպես էլ ամբողջ հանրապետությունը: Նման շերտավորման, աղքատության և տնտեսական անհավասարության մակարդակն ու բնույթը կարող են բնութագրել երկրի զարգացվածության մակարդակը և կարգավիճակը՝ ցույց տալով հնարավորությունների այն սահմանը, որը բնակչությանը թույլ է տալիս բարելավել ու իրենց կենսամակարդակը, կյանքի որակը:

«Շերտավորում» բառը ծագել է լատինական «stratum»-շերտ և «fasere»-անել բառերից, որն էլ թարգմանաբար նշանակում է հասարակության շերտավորում:²⁷

Մարդկության պատմության վաղ ժամանակահատվածից սկսած առկա է եղել բնակչության շերտավորման հիմնախնդիրը: Այդ տեսանկյունից բացատրելի են մարդկային անհավասարության, անարդարության և սոցիալական արհավիրքների պատճառները և էությունը: Ընդհանուր առմամբ, «շերտավորում» հասկացությունը բնութագրում է բնակչության անհավասարության կառուցվածքը, որում մարդիկ նախ գրավում են տարբերակված կառուցվածքային դիրքեր, և ապա ներառվում առանձին շերտերում, որոնք աստիճանակարգային (հիերարխիկորեն) գնահատվում են որոշակի ընդունելի չափորոշիչներին համաձայն: Բնակչության ըստ կենսամակարդակի շերտավորման բազմաթիվ տեսությունները խմբավորվել են երկու մեծ ուղղություններում՝ 1) կոնֆլիկտի տեսություն և 2) գործառնությունների (\$ուկնկցիոնալիստական) տեսություն: Կոնֆլիկտի տեսությունը հիմնականում ձևավորվել է Կ. Մարքսի գաղափարների՝ մասնավորապես պատմական մատերիալիզմի

²⁶ Մանասյան Ա. ԱՅՌԾ մեթոդաբանական սկզբունքներ և հայեցակարգային ուղեցույցներ, հրատապ հարցադրումներ, խորհրդատվական գրքույկ, Երևան 2002, էջ 2

²⁷ © ИД «Первое сентября», 2003–2017 Цифровые технологии в образовании
<http://festival.1september.ru/articles/212638/>

և դասակարգային պայքարի վրա: Ըստ Մարքսի՝²⁸ պատմական մի ժամանակաշրջանում հասարակության մեջ առաջանում է իշխողների մի խումբ, որն իր ձեռքում է կենտրոնացնում արտադրության միջոցները: Հասարակության մյուս անդամները կախվածության մեջ են ընկնում ունևորներից՝ զրկվելով արտադրության միջոցներից: Արդյունքում ունևորները ժամանակի ընթացքում ավելի են հարստանում, ընդգրկվում են քաղաքական և կրոնական իշխանության մեջ, վերածվում են իշխող կաստայի, որը վերարտադրվում է սերնդեսերունդ:

Ֆունկցիոնալ իստական տեսությունը սոցիալական շերտավորումը բացատրում է մարդկության ի սկզբանե անհավասարության մեջ միշտ կան ավելի խելացիներ ու ավելի հիմարներ, կան ավելի աշխատասերներ և ավելի ծուլներ, այսինքն՝ մարդիկ, ովքեր միմյանցից տարբերվում են իրենց որակով: Մարդիկ ունեն բարեկեցության հասնելու անհավասար պայմաններ, քանի որ մարդիկ ի սկզբանե հավասար չեն ու հավասար չեն ել կարող լինել: Ֆունկցիոնալ իզմի մեկ այլ դրսևորում է սոցիալական անհավասարության և շերտավորման կրոնական մեկնաբանումը, ըստ որի մարդիկ հասարակության մեջ զբաղեցնում են որոշակի սոցիալական դիրք Աստծո կամքով, իսկ աստվածային կամքն անմեկնաբանելի է հասարակ մահկանացուների համար: Գոյություն ունի նաև ռադիկալ սոցիոլոգիական մոտեցում, ըստ որի, այն հասարակությունները, որտեղ առկա է հավասարություն, կամ փորձում է ստեղծել հավասար պայմաններ բոլորի համար՝ «հիվանդ» հասարակություններ են, քանի որ հակասում են մարդու բնույթին: Դոմինանտ անձը գիտակցորեն, թե անգիտակցորեն ձգտում է մյուսների նկատմամբ իշխանության: Իշխանությունը բերում է անհավասարության, իսկ անհավասարությունը ժամանակի ընթացքում հանգեցնում է սոցիալական շերտավորման:²⁹

Ըստ Մաքս Վեբերի՝ սոցիալական շերտավորման տեսության մեջ անհավասարության գլխավոր բաղադրատարրերն են՝

²⁸ Marx K. 1859. *A Contribution to the Critique of Political Economy, Preface*

<https://www.marxists.org/archive/marx/works/1859/critique-pol-economy/preface.htm>

²⁹ © Galstyan V. 2015, *Մոնիտորինգային շերտավորում*, http://vahe.ucoz.ru/index/socialakan_shertavorowm/0-11

հարստությանը, վարկանիշը, իշխանությանը: Վերջիններին հիման վրա էլ ձևավորվում են հասարակության շերտավորման երեք հիմնական խմբերը՝ ա) սոցիալական դաս, բ) վարկանիշային դաս և գ) կուսակցական դաս:³⁰ Եթե Կարլ Մարքսն իր աշխատություններում հասարակությանը բաժանում էր միայն երկու մակարդակի՝ սեփականատերերի դասի և արտադրության միջոցների սեփականությունից զուրկ դասի, ապա Մ. Վեբերն ընդլայնելում է այս կամ այն շերտին պատկանելիության չափանիշներն և ներառում է նաև եկամտի մակարդակը, սոցիալական կարգավիճակը և ուրուշակի քաղաքական շրջանակներին պատկանելիությունը (կուսակցականությունը): Փաստորեն, այս շերտավորման հիմքում դրվում է սեփականությանը պայմանավորված տնտեսական հարաբերությունները (տիրող, վարձակալող, ծառայող և այլն), այսինքն՝ հարստությունը, որը պայմաններ է ստեղծում տնտեսական դասի ձևավորման համար:

Շերտավորման ընդհանրացնող ցուցանիշ է մարդու տեղը և դիրքը հասարակությունում, որը հիմնված է այնպիսի ոչ տնտեսական վարկանիշների վրա, ինչպիսիք են պատիվը, հեղինակությունը և կրոնը: Վերջիններին հետևանքները Վեբերն անվանել է «կյանքի հնարավորություններ» (կյանքի լավացման հնարավորություններ): Նշվածի լավագույն օրինակը Յնդկաստանում մինչ այժմ գործող հասարակարգային կաստաներն են, որի առաջացման հիմքը հասարակության անդամների բարեկեցության տարբեր աստիճաններն էին (հարուստները ցանկանում էին շրջապատված լինել միայն իրենց նմաններով՝ 1.Բրախմա, 2.Կարի, 3.Վայշյա³¹...)

Ռուս-ամերիկացի սոցիոլոգ Պ. Սորոկինը³² նշում է, որ սոցիալական շերտավորումը գործընթաց է, որի արդյունքում անհատները և ընտանիքները դառնում են անհավասար մեկը մյուսին նկատմամբ և խմբավորվում են շերտերի տարբեր վարկանիշով, սեփականությամբ և իշխանությամբ: Նա առանձնացնում է հասարակությունում երեք շերտավորված կառուցվածք՝ տնտեսական, արհեստավարժական և քաղաքական: Սորոկինը

³⁰ Вебер М. Основные понятия стратификации//Перевод с англ. изд. А. И.Кравченко.СОЦИС.1994.№5 с.169-183

³¹ Снесарев Ан. “Невероятная Индия: религии, касты, обычаи” Издательство: Ломоносовъ, 2014 г, с.27.

³² Сорокин П. Человек. Цивилизация. Общество. М., 1992, с.302

կարևորում է նաև բնակչության տնտեսական շերտավորման և եկամուտների բաշխման անհավասարության փոխկապվածությունը: Ուսումնասիրելով տարբեր ժամանակաշրջաններում ՅՆԴԿատանի, Չինաստանի, Եգիպտոսի և այլ երկրների բնակչության շերտավորման և եկամուտների բաշխման փոփոխությունները՝ հանգել է այն եզրակացության, որ տնտեսական շերտավորման դիմապատկերը ենթարկվում է միայն որոշակի տատանումների, այսինքն՝ աղքատների և հարուստների միջև եղած տարբերությունը մեկ մեծանում է, մեկ՝ փոքրանում: Յետևաբար, նագտնում է, որ հասարակության շերտավորումը կրում է փոփոխական բնույթ:

Տ. Պարսոնսը, դնելով սոցիալ-տնտեսական շերտավորման վերլուծության տեսական հիմքերը, սոցիալական շերտավորումը դիտարկում է՝ որպես տվյալ սոցիալական համակարգը կազմող անհատների տարբերակում ըստ կարգավիճակի, որով էլ, որոշակի սոցիալական նշանակության հարաբերություններով պայմանավորված, նրանց միջից առանձնացնում է բարձրագույնների և ցածրագույնների:³³

Բազմաթիվ հետազոտողներ ուսումնասիրություններ են կատարել բնակչության շերտավորման ուղղությամբ՝ փորձելով հիմնավորել իրենց կողմից առաջադրված դրույթները՝ պայմանավորված բնակչության շերտավորման դրդապատճառների դասակարգմամբ և դրանց գնահատմամբ:³⁴

Այսպես, ամերիկացի սոցիոլոգ Բ. Բարբերը հասարակության շերտավորման հիմքում առանձնացնում է հետևյալ պատճառները՝³⁵

- Յեղինակություն, մասնագիտություն, իշխանություն, ունեցվածք
- Եկամուտկամ հարստություն
- Կրթություն
- Կրոնական կամ ծիսական առանձնահատկություն
- Յարազատների սոցիալական դիրք
- Էթնիկ պատկանելիություն

³³ Parsons T. *An analytical approach to the theory stratification // The American Journal of Sociology, Vol 45, No 6 (May, 1940) p. 841-862*

³⁴ Edwards Alba M. *A social-economic group of the gainful workers of the United States. Washington, 1938, p.264.*
Kudasheva T. *Some matters related to the theory and methodology of stratification // Proceeding of Scientific & Practical Conference "The Financial Mechanisms of Improving Innovation Activity in Kazakhstan Economy" December 10-11, 2009. P. 50-53*

³⁵ Barber B. *Social Stratification: A Comparative Analysis of Structure and Process, N. Y., 1957, 519p.*

Է. Էդվարդսը 1938թ. իրականացրեց մեծածավալ հետազոտություն ԱՄՆ-ի օրինակով, որտեղ, օգտագործելով ծավալուն վիճակագրական տեղեկատվություն, առանձնացրեց բնակչության վեց հիմնական խմբեր՝³⁶

1. Արհեստավարժներ՝ ըստ տարբեր մասնագիտությունների
2. Սեփականատերեր, կառավարիչներ և արտադրության ծառայողներ
3. Սպասարկման ծառայողներ և աշխատողներ
4. Բարձրորակ բանվորներ և վարպետներ
5. Կիսաորակավորված բանվորներ
6. Չորակավորված բանվորներ, օժանդակ աշխատանք կատարողներ:

Ինչպես տեսնում ենք, Էդվարդսը բնակչության սոցիալ-տնտեսական խմբերի դասակարգման հիմքում դնում է բնակչության եկամուտ-կրթություն-զբաղվածություն հատկանիշների շղթան: Այստեղ պետք է նշել, որ նման դասակարգման կարևորությունը պահպանվում է մինչև այժմ:

Պրոֆեսոր Վ. Ն. Բոբկովն առաջարկում է հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքն առանձնացնել՝ հենվելով երկու չափանիշների վրա՝ դրամական եկամուտներ և բնակարանային ապահովվածություն, որը հնարավորություն կընձեռի առավել լրիվ պատկերացում ստանալ կյանքի նյութական պայմանների անհավասարության մասին:³⁷

Անհրաժեշտ է նշել, որ շերտավորման տարբեր տեսություններում հասարակությանն ըստ սպառման, շահերի, վարկանիշի, կյանքի ձևի խմբերի բաժանող սոցիալ-տնտեսական շերտավորման հատկանիշների ընտրության ժամանակ, բացի եկամտային գործոնից, առանձնացնում են մի շարք գործոններ, օրինակ՝ կրթության մակարդակն ու զբաղվածության տեսակը, մասնագիտությունը, որոնք ընդլայնում են անհատի հնարավորությունները՝ ստանալու ավելի բարձր եկամուտ և ճանապարհ հարթելու առավել բարձր կյանքի որակին:

Տնտեսական անհավասարության և բնակչության շերտավորման գոյություն ունեցող բազմաթիվ պատճառները փոխկապակցված են: Սակայն այդ բազմազանությամբ հանդերձ՝ բնակչության սոցիալական շերտավորման հիմքում դրվում է նախ և առաջ

³⁶ Edwards Alba M. A social-economic group of the gainful workers of the United States. Washington, 1938, .264p.

³⁷ Бобков В.Н. Каким быть неравенству качества уровня жизни? // Мир России, 2009, N 3, с.61-84

եկամուտների անհավասար բաշխվածությունը, որի արդյունքում էլ ձևավորվում է բնակչության հարուստ, միջին և աղքատ խավը, ինչպես նաև բնակչության անապահով խավը, որն իր մեջ ընդգրկում է ինչպես աղքատներին, այնպես էլ բնակչության ոչ աղքատ հատվածներին, օրինակ՝ թոշակառուներին, միայնակ մայրերին, ուսանողներին և այլն: Տնտեսագիտական գրականության մեջ եկամուտների բաշխման անհավասարությունը պայմանավորող պատճառների վերաբերյալ առկա են բազմաթիվ մոտեցումներ: Մասնավորապես, ամերիկյան տնտեսագետներ Կ.Ռ. Մակկոննելլը և Ս.Լ. Բրյուն առանձնացնում են եկամուտների անհավասարությունը պայմանավորող հետևյալ պատճառները.³⁸

- Ունակությունների տարբերությունները,
- Ուսուցման ու կրթության մակարդակը,
- Մասնագիտական ճաշակն ու ռիսկը,
- Սեփականությանը տիրելը,
- Ծուկայում ունեցած իշխանությունը, հաջողությունը, կապերը, անհաջողություններն ու խորականությունը:

Գտնում ենք, որ նշված գործոններով հնարավոր չէ ամբողջությամբ պարզել բնակչության եկամուտների անհավասարության պատճառները, հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար, որտեղ իրականացվում են վերափոխումներ՝ ապապետականացում, տնտեսության մասնավոր հատվածի զարգացում, աճում է կոռուպիան, ստվերային տնտեսությունը և այլն:

Մեր կարծիքով, եկամուտների անհավասարության վրա ազդող գործոնները կարող են ունենալ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ: Օբյեկտիվ բնույթի գործոնները կախված չեն անհատի անձնական հատկանիշներից, կարողություններից, ունակություններից ու հմտություններից, այլ դրանք տնտեսական, քաղաքական ու ժողովրդագրական բնույթի են: Սրանց մեջ մեծ է հատկապես տնտեսական գործոնների դերը՝ ազգային տնտեսության զարգացման մակարդակը, ստեղծված ազգային եկամտի չափը, ստեղծված արդյունքի վերաբաշխման մեխանիզմը, պետական

³⁸ Макконнелл К.Р., Брю С.Л. Экономикс: Принципы, проблемы и политика. В 2 т.: Пер. С англ. 11-го изд. Т.2.- М.: Республика, 1992, с. 280-281

ծախսումների մեծություները և այլն: Մինչդեռ սուբյեկտիվ գործոնները բխում են անհատի անձնական հատկանիշներից՝ ունակություններից, կրթության որակավորման տարբերություններից, ճակատագրից, մտածելակերպից, սեռից, ռասսայից, ֆիզիկական վիճակից, անհատի հետաքրքրություններից և այլն:

Գործոնների որոշակի ընդլայնում ենք տեսնում Աննելի Քասայի մոտ, ըստ որի եկամուտների անհավասարության վրա ազդող գործոններից են տնտեսական աճը, տեխնոլոգիական առաջընթացը, տնտեսության կառուցվածքը, գործազրկությունը, պետական ծախսումների չափը, գնաճը, արտաքին պարտքը, արտաքին պահուստները, փոխանակային կուրսի փոփոխությունները, բնակչության տարիքային կառուցվածքը (տնտեսապես ակտիվ բնակչության բաժինը), բնակչության աճը, ուրբանիզացիան, մարդկային կապիտալի մակարդակը, մասնավորեցումը, մասնավոր հատվածի բաժինը, հարկերի մակարդակը, երկրի տնտեսության բաց լինելը և աշխատուժի շարժի ազատությունը, սոցիալական քաղաքականությունը, խտրականությունը, հողային ունեցվածքի բաշխումը, մարդկանց վերաբերմունքն անհավասարության նկատմամբ, սովետային տնտեսության չափերը, բնական ռեսուրսների հասանելիությունը և այլն:³⁹

Ընդլայնելով տնտեսագիտական գրականության մեջ եկամուտների անհավասարության և նրա վրա ազդող գործոնների առանձին մեկնաբանումները՝ կարող ենք նշել, որ ներկայումս բնակչության եկամուտների անհավասարության վրա ազդող հիմնական գործոններն են՝ աշխատանքի շուկան ու աշխատավարձի քաղաքականությունը, դրամական եկամուտների աղբյուրները, հատկապես սոցիալական երաշխիքները և մասնավոր տրանսֆերտները, կրթությունը, սեռը, առողջությունը և առողջապահությունից օգտվելու հնարավորությունը, պետության սոցիալական քաղաքականությունը, հարկման համակարգը, տնտեսական աճը, գլոբալացումը, դրամական ինֆլյացիան և այլն, ազգային արժույթի կայունությունը, ինչպես նաև աշխարհագրական վայրը (աշխարհաքաղաքական միավորումների ընդգրկվածությունը,

³⁹ Kaasa Anneli, "Factors influencing inequality in transition economics". University of Tartu, Faculty of Economics and Business Administration. 2003, p. 12-14

բնակչի մայակն գոտին), խաղաղության առկայությունը (երկիրը գտնվում է պատերազմական իրավիճակում, թե՛ ոչ):

Դիտարկենք այն գործոնների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, որոնք ըստմեզ առաջնային են:

Կրթություն: Մարդկության զարգացման կարևորագույն գործոնը կրթությունն է, որը թույլ է տալիս բարելավել կյանքի որակը և նպաստել տնտեսական աճին: Համաշխարհային բանկը (ՀԲ), ՄԱԿ-ը և մի շարք այլ միջազգային կազմակերպություններ կրթությունը համարում են աղքատության դեմ պայքարի կարևորագույն բաղադրատարրերից մեկը: Գիտական ուսումնասիրությունները անհավասարության վրա կրթության ազդեցության վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ:⁴⁰

Մի շարք արևմտյան տնտեսագետների կարծիքով դեռևս նախորդ դարի 80-ական թվականներից եկամուտների անհավասարության մեծացման հիմնական պատճառը տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգում բարձր որակավորված ունեցող աշխատողների նկատմամբ պահանջարկի աճն է, որը, բնականաբար, հանգեցրեց կրթություն ունեցողների աշխատավարձի մակարդակի բարձրացմանը: Նրանք, ովքեր կրթություն չէին ստացել, աշխատավարձի մակարդակի բարձրացում չունեցան, որն էլ բերեց եկամուտների անհավասարության ուժեղացմանը: Չնայած կան հակառակ բնույթի հայացքներ, որոնք կրթությունը չեն համարում եկամուտների անհավասարության հիմնական պատճառներից մեկը: Այսպես, Կ. Ջենքսը 1972թ. հանգեց այն եզրակացության, որ կրթական բարեփոխումները, ունենում են միայն չնչին ազդեցություն եկամուտների անհավասարության վրա: Ըստ նրա՝ կրթության և արհեստավարժության մակարդակի բարձրացման մեջ հաջողությունը հիմնականում պայմանավորված է ընտանեկան պայմաններով և դպրոցից դուրս այլ գործոններով:⁴¹

Այնուամենայնիվ, տնտեսագետների զգալի մասը եկամուտների անհավասար բաշխվածության գործընթացում գերակատեղ է տալիս կրթությանը: Ջեյմս Ջեյմսը և Ալան Կրյուգերը 2003թ. ԱՄՆ-ի օրինակով դիտարկել են կրթության ազդեցությունը եկամուտների

⁴⁰ Кудашева Т.В. Через академическую мобильность к повышению уровня жизни населения // Collection of thesis of the Vth World Congress of Engineering and Technology: Step to Future. 1-2 June 2012, Almaty p. 65-67

⁴¹ Jencks C. et al. Inequality: A Reassessment of the Effects of Family and School in America, New York, 1972, p.399

անհավասարության վրա:⁴² Նրանք հանգեցնել են այն եզրակացության, որ կրթությունը եկամուտները որոշող հիմնական գործոնն է: Տնտեսական անհավասարության կրճատմանը կարելի է հասնել ի հաշիվ մարդկային կապիտալում ներդրումային ակտիվ քաղաքականության իրականացմամբ: Յետագոտելով նախադպրոցական, տարրական, միջնակարգ կրթությունը, նաև ուսուցման հաջորդաստիճանները՝ Ա. Կրյուգերն ապացուցել է, որ ցածր եկամուտներ ունեցողների համար առավել դժվար է բարձրացնել իրենց կրթական և արհեստավարժական մակարդակը: Յետևաբար Ա. Կրյուգերն առաջարկել է քիչ ապահով ընտանիքների կրթության և մասնագիտական պատրաստման վրա տրամադրել շատ ռեսուրսներ, որն անհավասարության կրճատման առավել արդյունավետ միջոց է:

Ռեներն 2006թ. ուսումնասիրեց մոդել, որում կառավարությունն ապահովում է կրթություն, և դրա ֆինանսավորումն իրականացնում է բոլոր անհատներից ռեսուրսների (հարստության) վրա հարկերի բարձրացման հաշվին:⁴³ Նրա կարծիքով չկա հստակ ֆունկցիոնալ փոխկապվածություն եկամուտների անհավասարության և տնտեսական աճի միջև, սակայն որոշակիորեն կարելի է նշել տնտեսական աճի և կրթության միջև ոչ գծային կապի մասին: Այստեղ տեղին է նշել, որ զարգացած երկրների զգալի մասում բարձրագույն կրթությունից «հավելավճարը» սովորաբար տատանվում է 50-ից մինչև 100% սահմաններում:⁴⁴ Սակայն ՀՀ-ում, ինչպես նաև ԱՊՀ երկրներում, շատ դեպքերում, անտեսելով կոռուպցիոն ռիսկերը, բարձրագույն կրթությունը չի ապահովում «հավելավճար», օրինակ ուսուցիչը, բժիշկը ստանում է ավելի քիչ աշխատանքային եկամուտ, քան պատշարը կամ ավտոմեքենավերանորոգողը:

Այսպիսով, մեր կարծիքով կրթության (հատկապես մասնագիտական) և եկամտի առավել բարձր մակարդակի միջև դրական կապի առկայությունն ակնհայտ է:

Յուրաքանչյուր գործատու շահագրգռված է աշխատանքի ընդունել ավելի բարձր մակարդակի գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված անձանց՝ առաջարկելով ավելի բարձր աշխատավարձ: Մյուս կողմից էլ,

⁴² Duncan D., Sabirianova K. *Tax Progressivity and Income Inequality*. «W. J. Usery Workplace Research Group Paper Series» Working Paper 2008-6-5, June 2008, 47p.

⁴³ Чичелёв М.Е. (2007) К вопросу об альтернативе плоской и прогрессивной шкал налогообложения доходов физических лиц. «Финансовый вестник» N17, 2007 г. С.24-35

⁴⁴ © 1999 - 2015 Информационное агентство Zakon.kz, Прогрессивная шкала уронит ВВП <http://www.zakon.kz/183306-progressivnaja-shkala-po-podokhodnomu.html>

կրթությունը որպես մարդկային կապիտալ ձևավորող հիմնական տարր, նպաստում է աշխատանքի շուկայում աշխատողների միջև մրցակցության ձևավորմանը, «առաջ գնալու» հնարավորությանը, որն էլ նորից հանգեցնում է աշխատանքային ավելի բարձր եկամտի մակարդակին: Գտնում ենք, որ ներկայումս ՀՀ-ում ևս կրթության և եկամուտների անհավասարության միջև կապը թեև դրական է, բայց ոչ այնքան կայուն:

Եկամուտների աղբյուրները: Բնակչության եկամուտների անհավասարության վրա ազդող գործոններից են տնային տնտեսությունների եկամուտները և դրանց ձևավորման աղբյուրները: Հենց դրամական եկամուտների կառուցվածքի փոփոխությունը կարող է լինել այն գործոններից մեկը, որն ազդում է բնակչության եկամուտների տարբերակման՝ ուժեղացման կամ թուլացման վրա: Տարբեր ժամանակաշրջաններում կատարվել են հետազոտություններ՝ պարզելու տարբեր երկրներում եկամտի այս կամ այն աղբյուրի ազդեցության չափը եկամուտների անհավասարության վրա:

Այսպես, Ս. Պատլը 2004թ. անցկացրել է հետազոտություն՝ գնահատելով անհավասարության աճի վրա եկամտի հիմնական աղբյուրների բաշխման փոփոխության ազդեցությունը Ավստրալիայի օրինակով, և հանգել այն եզրակացության, որ ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը, աշխատավարձը, սեփականությունից եկամուտը բերում են անհավասարության աճին, այն դեպքում, երբ պետական նպաստները, թոշակները և այլ սոցիալական վճարները՝ դրակրճատմանը:⁴⁵

Իսկ Օ. Ա. Կիսլիցինան, 2003թ. կատարելով նման գնահատումներ ՌԴ օրինակով, ցույց է տվել, որ տնային տնտեսությունների ընդհանուր անհավասարության որոշման մեջ էական դեր խաղում է աշխատավարձը: Դա բացատրվում է նրանով, որ տնային տնտեսությունների ամբողջական եկամտում աշխատավարձի բաժինը բավականին մեծ է (այն պահպանվում է նաև այժմ) մյուս աղբյուրների համեմատ: Ըստ նրա հաշվարկների, թե աշխատավարձը բաշխվի հավասարաչափ, իսկ եկամտի մյուս աղբյուրների բաշխումը մնա անփոփոխ, ապա եկամտում անհավասարությունը կկրճատվի 62%-

⁴⁵ Wilkinson R.G. *Income Distribution And Life Expectancy British Medical Journal*, 18 Jan. 1992 Vol. 304(6820), p. 165-168

ով: ՀՀ-ում ևս բնակչության դրամական եկամուտների 52.1% ձևավորվում է վարձու աշխատանքից ստացված եկամուտներից⁴⁶:

Աշխատանքի շուկա և աշխատավարձի քաղաքականություն:

Բնակչության եկամուտներում անհավասարության հիմնական պատճառն աշխատանքի շուկայում ձևավորվող աշխատավարձն է: Այս դեպքում անհավասարությունը որոշվում է աշխատանքի շուկայում առաջարկով և պահանջարկով: Տարբեր աշխատանքների գծով աշխատանքի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունն էլ որոշում է հասարակության մեջ եկամուտների ներկայացված անհավասարությունը: ԱՊՀ երկրներում՝ Ադրբեյջանում, Բելառուսում, Ղրղզստանում, Ռուսաստանում, ինչպես նաև ՀՀ-ում դրամական եկամուտների հավելածի մեծ մասն ապահովվել է վարձակալությամբ աշխատողների աշխատանքի վարձատրությամբ:

Տնտեսագետների և սոցիոլոգների մեծ մասը հիմնականում ուսումնասիրում են եկամուտների անհավասարության վրա տնտեսական և ժողովրդագրական ազդեցությունները և առավել քիչ ուշադրություն են դարձնում աշխատավարձի ոլորտում պետական քաղաքականության ազդեցության վրա: Նոր դասականները ենթադրում են, որ նվազագույն աշխատավարձը մեծացնում է անհավասարությունը, իսկ ինստիտուցիոնալ ի ներկայացուցիչները պնդում են, որ նվազագույն աշխատավարձը փոքրացնում է այն: 2002թ. Թոմաս Վոլշոն իրականացրեց ուսումնասիրություն, որում ուշադրություն դարձրեց նվազագույն աշխատավարձի ազդեցությունը տնտեսական անհավասարության մակարդակի վրա: Ըստ նրա՝ բարձր նվազագույն աշխատավարձ ունեցող պետությունն ունի ընտանիքի եկամտում առավել ցածր անհավասարության մակարդակ:⁴⁷

Գտնում ենք, որ աշխատանքն ապահովում է եկամուտներ, ինչպես նաև հարաբերականորեն՝ բարեկեցության աճ և սոցիալական բևեռացման թուլացում: Եվ ցանկացած երկրում, այդ թվում նաև ՀՀ-ում, պետք է ուշադրություն դարձնի աշխատանքի շուկայում իրականացվող պետական քաղաքականությանը, սահմանվի աշխատավարձի նվազագույն մակարդակ, քանի որ վերջինս թեև աղքատության և անհավասարության կրճատման հիմնական գործիք

⁴⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ՄՎԾ, էջ 114

⁴⁷ Subramanian S. V., Kawachi Ichiro S.V. *Income Inequality and Health: What Have We Learned So Far? Human Development, and Health, Harvard School of Public Health, Boston, MA* Vol.26, 2004 pp.78-91

չէ, սակայն այն պետք է լինի զբաղված և միևնույն ժամանակ աղքատության գծից ներքև գտնվող բնակչության առկայության բացառումը:

Յարկումը: Եկամուտների վերաբաշխման համակարգի հիմքը հարկումն է: Այն մեծ ազդեցություն ունի հասարակության մեջ եկամուտների բաշխման, հետևաբար նաև անհավասարության վրա: Բազմաթիվ տնտեսագետներ հանգել են այն եզրակացության, որ երկրի հարկային համակարգն անմիջականորեն ազդեցություն ունի տնտեսական աճի տեմպերի վրա,⁴⁸ դեռ ավելի նրանք ապացուցել են, որ երկարաժամկետ տնտեսական աճն ունի ուղիղ կախվածություն երկրի հարկային համակարգից:

Շվեդ տնտեսագետ Կ. Էկլունդի խոսքերով «Պետական արտադրությունը և ծառայությունների մեծ մասը ֆինանսավորվում են հավաքված հարկերից և հետո, քիչ թե շատ, անվճար բաշխվում քաղաքացիների միջև: Դա վերաբերում է կրթությանը, բժշկական ծառայությանը, երեխաների խնամքին և մի շարք այլ ուղղությունների, որի նպատակն է բաշխել կենսականորեն կարևոր միջոցներն ավելի հավասարաչափ»:⁴⁹ Փաստորեն, նա նկատի ունի, որ եկամտի մի մասը հավաքվում և տրամադրվում է ուրիշներին: Մինչդեռ, սոցիալական ուղղվածություն ունեցող մի շարք երկրներում (Շվեդիա, Նորվեգիա, Շվեյցարիա) համարյա պաշտոնական մակարդակով խոստովանում են, որ հարկերը բարձր եկամուտներ ունեցող բնակչությանից ցածր եկամուտներ ունեցողներին վճարումներն են:

Բազմաթիվ տնտեսագետների համար բանավեճի առարկա է անհատական հարկման դրույքաչափերը՝ որն է առավել արդյունավետ՝ աճողը, թե հարթը: Տնտեսագետների մի մասը գտնում են, որ աճող հարկման բարձր մակարդակը նվազեցնում է եկամուտներում անհավասարությունը: Սակայն այս դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ մեծանում է հարկերից խուսափումը, որը կտրուկ նվազեցնում է հարկման արդյունավետությունը: Այստեղ պետք է նշել միայն, որ հարկադրույքները և հարկերից խուսափումը միմյանց հետ ունեն

⁴⁸ John D.W., Pamela H. *Issues in Analyzing the Macroeconomic Effects of Tax Policy// National Tax Journal, Vol 56(3) p. 447-462*

⁴⁹ Օհանջանյան Ս., Աղաջանյան Լ., *Հարկեր և հարկավորում: Ուսումնական ձեռնարկ,- Եր.: Ճարտարագետ, 2006, էջ 11:*

դրական կապ: Այլ տնտեսագետներ կողմնակից են հարկման հարթ սանդղակին,⁵⁰ քանի որ այն պարզ է ու հասկանալի, բոլորի համար ավելի արդար, մատչելի ու արդյունավետ, և, վերջին հաշվով, ստիպում է ֆիզիկական անձանց կատարել վճարումները ժամանակին:

Այսպիսով, արդյունավետ հարկային համակարգի հիմնումը պետությանը թույլ է տալիս լուծել ու անհավասարության նվազեցման և եկամուտների արդար բաշխման խնդիրները:

Առողջություն և առողջապահություն: Ներկա պայմաններում առողջությունը ոչ միայն սոցիալական արժեք է, այլ նաև հասարակության կարևորագույն տնտեսական ռեսուրս, տնտեսական աճի աղբյուր: Գտնում ենք, որ երկրի աշխատանքային ներուժը որոշող հիմնական գործոններից առավել կարևոր է առողջությունը: Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի տեխնոգեն փոփոխությունների ազդեցությամբ մեծանում է առողջության պահպանման դերն ու նշանակությունը:

Հայտնի է, որ գոյություն ունի եկամուտների և առողջության միջև դրական կապ: Առանձին տնտեսագետների հետազոտությունները⁵¹ հանգեցրին այն եզրակացության, որ եկամտի յուրաքանչյուր լրացուցիչ միավոր լավացնում է մարդու առողջությունը, սակայն գնալով ավելի փոքր չափով: Այսինքն՝ հարուստ մարդուց աղքատին տրվող միավորն ավելի մեծ չափով կլավացնի աղքատի առողջությունը, քան կվատացնի հարուստի առողջությունը: Այս տեսությունը ստացել է բացարձակ եկամտի դրոյթներ անվանումը, ըստ որի՝ որքան ցածր է անհատի եկամուտը, այնքան վատ է նրա առողջությունը: Դա պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ կապված ծայրահեղ աղքատությամբ՝ ոչ բավարար սնունդ, որակյալ բժշկական ծառայությունից օգտվելու անհնարինություն և այլն:

Առանձին տնտեսագետներ ցույց են տվել, որ հասարակությունում գոյություն ունի նաև առողջության և եկամուտների բաշխման անհավասարության միջև որոշակի կապ

⁵⁰ Edgar K. Browning and Jacqueline M. Browning (1985). *Why Not a True Flat Rate Tax?* // *Cato Journal*, September 1985, pp.629-650, Pierre-Luc Thibault (2002) *Canada needs a flat rate income tax.* «Montreal» April 13, 2002/ N102

⁵¹ Wagstaff A., E. van Doorslaer *Income Inequality and Health: What Does the Literature Tell Us?* // *Annual Review of Public Health*.2000, Vol 21, p.543-567. Lynch J., Smith G.D., Kaplan J.A., House J.S. *Income Inequality and mortality: importance to health of individual income, psychosocial environment, or material conditions* // *British Medical Journal*, Vol. 320(7243), Apr.29, 2000 p.1200-1204

բացասական կոռեկտացիայի տեսքով:⁵² Այսպես, ռուս տնտեսագետ Օ. Ա. Կիսլիցինսկան, հետազոտելով Ռուսաստանի օրինակով բնակչության առողջության և եկամուտների բաշխման անհավասարության խնդիրները, ցույց տվեց բնակչության եկամուտների բաշխման անհավասարության ժայթքման և առողջության աղետալի վատացման միջև սերտ փոխադարձ կապը: Ըստ նրա՝ բնակչության ներուժային առողջությունը որոշող հիմնական գործոնը սոցիալ-տնտեսական անհավասարությունն է:⁵³

Գտնում ենք, որ առողջությունը սոցիալական բարիք է, այն մարդու ակտիվ ստեղծագործական ու լիարժեք կյանքի կարևորագույն գործոն է, հետևաբար գերակա դեր ունի մարդկային կապիտալի ձևավորման գործում: Եթե անհատն ունի լավ առողջություն, ապա նա ունի առավել լավ հնարավորություններ ավելի շատ վաստակելու և ստանալու առավել բարձր եկամուտ: Իսկ բարձրորակ բժշկական ծառայությունից համընդհանուր օգտվելու հնարավորությունը կարող է նվազեցնել հասարակությունում անհավասարության մակարդակը:

Տնտեսական աճ: Անհավասարության և տնտեսական աճի միջև փոխկապվածությունն առաջին անգամ հետազոտել է ամերիկացի տնտեսագետ Սայմոն Կուզնեցը 1955թ.:⁵⁴ Նա ԱՄՆ-ի, Անգլիայի և Գերմանիայի երկարաժամկետ տվյալների հետազոտման հիման վրա այն տեսակետն է արտահայտել, ըստ որի՝ զարգացող երկրների բնակչության համար գոյություն ունի եկամուտների բաշխվածության անհավասարաչափության ժամանակային ուղի՝ տնտեսական աճն սկզբում հանգեցնում է անհավասարության մեծացմանը, իսկ հետո դրա կրճատմանը: Սահայտնի է Կուզնեցի «շրջված Ս-ձև» կորանվամբ՝ կախվածությունն տնտեսական աճի և եկամուտների անհավասարության միջև, երբ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի փոփոխություններին համապատասխանող Ջինիի գործակցի փոփոխությունները շրջված Ս-ձև կորի տեսք են ընդունում (գծապատկեր 1.2.1):⁵⁵


⁵² Wilkinson R.G. *Income Distribution And Life Expectancy British Medical Journal*, 18 Jan. 1992 Vol304(6820), p.166. Subramanian S. V., Kawachi Ichiro S.V. *Income Inequality and Health: What Have We Learned So Far? Human Development, and Health, Harvard School of Public Health, Boston, MA* Vol.26, 2004, p78-91

⁵³ Кислицына О.А. *Неравенство доходов в России в переходный период: чем оно объясняется? научный доклад 03/08 –Консорциум экономических исследований и образования, серия “научные доклады” 2003, 79с.*

⁵⁴ Kuznets S. *Economic Growth and income inequality. The American Economic Review. Vol 45, N1, Mar., 1955, p.1-28* http://blog.bearing-consulting.com/wp-content/uploads/2012/09/Economic.Growth.and_.Income.Inequality.pdf

⁵⁵ Michael P. Todaro, “Economic Development”, Sixth Edition, Addison-Wesley Publishing Company, 1997, p.160

Կուզնեցի՝ «շրջված U-ձև» կորը



Չե տազայ ու մ այ ս ու ղ ղ ու թ յ ամբ իրականացրած շատ հետազոտողները հաստատում են այս եզրակացությունը,⁵⁶ սակայն մեծ քննադատության է արժանացել տվյալների թերիլինելու, էկոնոմետրիկական մեթոդների ընտրության, վերլուծության քաղաքական կիրառումների համար:

Օ. Կիսլիցինան բերում է տնտեսական աճի և անհավասարության շարժընթացի միջև բացասական փոխկապվածության երկու պատճառ.⁵⁷

1. Արագ տնտեսական աճը մեծացնում է աշխատուժի նկատմամբ պահանջարկը, գործազուրկները գտնում են աշխատանք, իսկ նրանք, ովքեր ունեն մասնակի զբաղվածություն, անցնում են լրիվի: Դա ավելացնում է նրանց եկամուտները, ովքեր գտնվում են բաշխման ստորին մասում ու ընդհանուր անհավասարությունը նվազում է:

2. Չասարակությունն արագ տնտեսական աճով հարուստ է դառնում և լրացուցիչ ռեսուրսները տնտեսականորեն կարող են վերաբաշխվել իօգուտադաշտների, որը կբերի անհավասարության նվազեցմանը:

Կիսելով Կիսլիցինայի տեսակետը՝ գտնում ենք, որ տնտեսական աճն ուղեկցվում է բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ, որն էլ խթան է մեղմելու եկամուտների բաշխման անհավասարությունը և աղքատության մակարդակը:

Գլոբալ ացում: Տնտեսագետներին հուզող հարցադրումներից մեկն այն է, թե արդյոք գլոբալ ացումն ազդում է եկամուտների անհավասարության վրա: Այդ առումով 2003թ. իրականացվել է անհավասարության և գլոբալ ացման փոխկապվածության ռեգրեսիոն վերլուծություն: Արդյունքները ցույց են տալիս, որ գլոբալ ացման համաթիվը (համակցված ցուցանիշ է, որը թույլ է տալիս գնահատել համաշխարհային հանրությանն այս կամ այն երկրի ինտեգրման մասշտաբները և համեմատել երկրներն իրենց

⁵⁶ Kravis I.B., 1960, "International Differences in the Distribution of Income", *Review of Economics and Statistics*, Vol 42, p408-416. Paukert F., 1973, "Income Distribution at Different Levels of Development: A Survey of Evidence", *International Labour Review*, Vol. 108:97-125

⁵⁷ Кислицына О. Неравенство в распределении доходов и здоровья в современной России. М.:РИЦ ИСЭПН. 2005 с.14-16

բաղադրիչներով) միայն 7-11%-ով է բացատրում երկրների միջև եկամուտների անհավասարության տատանումները: Գլոբալացման ամբողջական համաթվի բաժանումը երեք բաղադրատարրերի ցույց է տալիս, որ տեխնոլոգիաների փոխանցումը և անձնական շփումները նվազեցնում են անհավասարությունը, այն դեպքում, երբ տնտեսական ինտեգրացիան մեծացնում է այն⁵⁸:

Ըստ Մ.Ն. Օսմովայի և Ա.Վ. Բոյչենկոյի, վերջին 40 տարիների ընթացքում աշխարհում սոցիալ-տնտեսական անհավասարությունը զգալի մեծացել է:⁵⁹ Նրանց գնահատմամբ 21-րդ դարի սկզբին երկրագնդի 255 ամենահարուստ մարդկանցից 225-ի ընդհանուր հարստությունը գերազանցել է 1 տրիլիոն դոլարը, որը հավասարվում է 2,5 միլիարդ աղքատների տարեկան եկամուտներին, որոնք կազմում են բնակչության 47%: Փաստորեն, գլոբալացումը բերում է ոչ միայն երկրների միջև կապերի ամրապնդմանը, այլև, երկրներին միասնական համաշխարհային տնտեսական համակարգի մեջ ընդգրկելով, սոցիալական անհավասարության և աղքատության հիմնախնդիրներին տալիս է գլոբալ նշանակություն:

Մեր կարծիքով, գլոբալացումը, լինելով մարդկության զարգացման օրինաչափ երևույթ կամ գործընթաց, հնարավոր է մեկնաբանել որպես միանշանակ դրական կամ բացասական երևույթ: Ի վերջո, որպես դրական երևույթ, գլոբալացումը համաշխարհային մասշտաբով բարեկեցության աճի խթան է: Գլոբալացման արդյունքում ամբողջ աշխարհում ստեղծվել են միլիոնավոր աշխատատեղեր, որը նպաստում է սոցիալ-տնտեսական բևեռացման թուլացմանը: Սակայն միևնույն ժամանակ գլոբալացման հետևանքով տեղի է ունենում աշխատուժի արտագաղթ, մասնավորապես բաց սահմանների դեպքում միևնույն քաղաքական, մաքսային միություններում հաճախ համեմատաբար թույլ տնտեսություններում երկրի քաղաքացիներն աշխատանքի առավել բարձր վարձատրության խթանով մեկնում են էժան աշխատուժ փնտրող զարգացած երկրներ, իսկ գլոբալացումը դյուրինացնում է դրա թղթաբանական օրինականացման կողմը՝ ներգաղթողներին տալով աշխատանքային քվոտաներ, վիզաներ և այլն:

Գլոբալացման (տնտեսական միություններին) ստեղծմամբ նաև փոքր երկրների ազգային տնտեսությունները հաճախ զրկվում են

⁵⁸ Heshmati A. *The Relationship between Income Inequality and Globalization. The United Nations University, UNU/WIDER, 2003, 31p.* <https://pdfs.semanticscholar.org/84b3/be43ba638c3387e7007e7e8caa4eae68c796.pdf>

⁵⁹ *Осьмова М.Н., Бойченко А.В., ред. Глобализация мирового хозяйства М.; Инфра-М, 2006, с.376*

սեփական արտադրողին պաշտպանելու ունակությունից, հատկապես փոքր և միջին բիզնեսում, քանի որ վերջիններս պարզապես չեն կարող մրցակցել օտարերկրյա համանման արտադրանքի հետզնային մրցակցությունից, և հաճախ նշված բիզնեսը մրցակցությունից դուրս է մնում ինչպես մասշտաբից էֆեկտի, այնպես էլ այլ գործոնների պատճառով:

Արտագաղթ: Արտագաղթը մարդու սոցիալական և տնտեսական ինտեգրման նպատակների հետ կապված երևույթ է: Յետևաբար, այն տնտեսական զարգացման, ընտանիքի գոյատևման և նրանյունակական բարեկեցության բարձրացման ռազմավարություն է:

Առանձին տնտեսագետներ, ուսումնասիրելով Եվրոմիության երկրներում ժողովրդագրական իրավիճակի վրա արտագաղթի ազդեցությունը, եկան այն եզրակացության, որ սոցիալական բևեռացման վրա արտագաղթի ազդեցությունը կախված է նրանից, թե ինչ չափով են արտագաղթողները և այլ փոքրամասնություններն ինտեգրված տնտեսության և հասարակության մեջ:⁶⁰

Գտնում ենք, որ այն դեպքում, երբ արտագաղթողների կողմից տրանսֆերտները դիտարկվում են որպես եկամտի մուտքային (Եկզոգեն) աղբյուր, ապա ըստ եկամուտների՝ անհավասարությունը կրճատվում է, իսկ այն դեպքում, երբ տրանսֆերտները տնային տնտեսությունների եկամտի հիմնական (ավանդական) աղբյուր են, ապա անհավասարությունը կարող է աճել:

Շատ հաճախ, այն արտագաղթողները, որոնք ունեն ցածր որակավորում, պատրաստ են աշխատելու ավելի ցածր աշխատավարձով, ինչը բերում է աշխատավարձի միջին մակարդակի կրճատմանը: Գլուշենկովը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում, օրինակ արտագաղթողների 10%-ով ավելացումը կրճատել է տեղի աշխատողների աշխատավարձը միայն 0.2%-ով, իսկ Եվրոպայում այս ցուցանիշը տատանվում է 0.3-0.8%-ի սահմաններում:⁶¹ Արտագաղթողների մի զգալի զանգված, նույնիսկ արտերկրում աշխատանքի բացակայության պայմաններում էլ հաճախ նախընտրում է մեկնել զարգացած սոցիալական համակարգ ունեցող երկրներ և «հանձնվել» տեղի իշխանություններին, քանի որ նման դեպքում ներգաղթյալներին տրվող նպաստն ավելի բարեկեցիկ և շահեկան

⁶⁰ Fesus Gabriella, Rillaers Alexandra, Poelman Hugo and Zuzana Gakova. Demographic challenges for European regions. Commission of the European Communities, Brussels, November 2008. 25p.

⁶¹ Глуценко Г.И. Миграция и развитие: мировые тенденции // Вопросы статистики, 2008, N2, с.65-79

դիրք է ապահովում անձին, քան նա կու նենար իր երկրում, նույնիսկ միջին աշխատավարձով աշխատանքով ապահովված լինելու ժամանակ:

Տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունը: Գիտական աշխարհում գոյություն ունի ընդհանուր կարծիք, որ տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաները կարող են հնարավորություն ընձեռել առավել բարձր եկամուտներ ստանալու և կյանքի որակը լավացնելու համար: Նշենք, որ ներկայումս տեղեկատվական ծառայությունների համակարգը բերում է հասարակության նոր շերտավորմանն ըստ դրանց հասանելիության աստիճանի, որը ծնում է սոցիալական անհավասարության նոր տեսակ՝ տեղեկատվական:

Սրանով հանդերձ, գտնում ենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման և օգտագործման հնարավորության աստիճանով պայմանավորված անհավասարությունն իրական չէ, այն կարող է նպաստել կենսամակարդակի բարձրացմանը, բայց ոչ աղքատության մակարդակի կրճատմանը: Յատկապես, եթե համակարգչի առկայությունը և համացանցից օգտվելու հնարավորությունը հաճախ օգտագործվում է ոչ թե ինքնազարգացման, կրթման, աշխատանքային պայմանների բարելավման, կամ հենց աշխատանքի համար, այլ պարզապես՝ որպես ժամանցի և սոցիալական ցանցերից օգտվելու միջոց: Այն այս դեպքում կդիտարկվի որպես եկամտի բարձրացմանն ուղղված ոչ ռացիոնալ ժամանակ և ծախսեր:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր գործուն, որը կարող է ազդել եկամուտների անհավասար բաշխվածության վրա, կարող է կարգավորվել պետության կողմից: Ընդունելով, որ «տնտեսական պարամետրերի միջև փոխհարաբերությունները միջնորդավորված են և բազմաշերտ, ուստի դրանց չափելիությունը բավականին բարդ է»⁶², այնուամենայնիվ, կարծում ենք, որ ցանկացած երկրի կառավարություն իր սոցիալ-տնտեսական քաղաքականության ծրագրի մշակման և իրականացման գործընթացում պետք է ոչ միայն բացահայտի եկամուտների անհավասար բաշխվածության վրա ազդող գործոնները, այլ և գնահատի դրանց ազդեցության աստիճանը:

⁶² Աղաջանյան Հ. «Հավասարակշռության տեսության պարադոքսները» Բանբեր ԵՊՏՀ-ի թիվ 1, 2005, էջ 3-16

1.3 «Անապահով խավ» հասկացության էությունը և դրա ձևավորմանը նպաստող գործոնները

«Ոչ մի հասարակություն չի կարող ծաղկել ու երջանիկ լինել, եթե նրա անդամների մեծ մասն աղքատ է ու դժբախտ: Բացի այդ, պարզ արդարությունը պահանջում է, որ մարդիկ, որոնք կերակրում են, հագնում ու բնակարան են կառուցում ողջ ազգի համար ստանան սեփական աշխատանքի արդյունքի այնպիսի բաժինը, որ իրենք էլ ունենան տանելի սնունդ, հագուստ ու բնակարան»:⁶³

Ներկայումս գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում ավելի ու ավելի է նկատվում բնակչության հարուստ և աղքատ խավերի միջև խիստ բևեռացումը, որի հիմքում ընկած են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործոններ: Յուրաքանչյուր երկրի բնակչության կազմում (հարուստ, միջին, աղքատ խավ) առկա է բնակչության անապահով (խոցելի) խավ, ովքեր գտնվում են աղքատության ռիսկային գոտում: Ցանկացած տնտեսական կամ քաղաքական տատանում անմիջապես անդրադառնում է նրանց ասարելակերպի վրա: Նույնիսկ պատահական կենցաղային ընտանեկան խնդիրը՝ կապված առողջական, կրթության կամ այլ սոցիալական ծախսերի հետ, կարող է տատանել նրանց ֆինանսական կայունությունը:

Գրականության մեջ տնտեսագետները «անապահով խավ» և «խոցելի խավ» հասկացությունները շատ հաճախ դիտարկում են մի հարթության մեջ և, երբեմն, մեկը փոխարինում մյուսով: Ընդունելով այն, որ ըստ էության, այդ երկու հասկացությունները շատ քիչ են իրենց բովանդակությամբ, էությամբ և հասարակության առանձին շերտերի ընդգրկվածության աստիճանով իրարից տարբերվում՝ աշխատանքում երկու հասկացությունները դիտարկում ենք որպես հոմանիշներ: Ընդ որում, «անապահովություն» («խոցելիություն») հասկացության հստակ սահմանում գոյություն չունի: Կարծում ենք, որ սաբնական է, քանի որ յուրաքանչյուր երկրում անապահովության մակարդակը և անապահովների թիվը կախված է երկրի զարգացման աստիճանից, պետության ֆինանսական հնարավորություններից, վարած

⁶³ Смит А. Исследование о природе и причинах богатства народов. Антология экономической классики. Предисловие И.А. Столярова.-М.: МП "Эконом". 1993, с. 146.

սոցիալական քաղաքականությունն ից, և, ընդհանուր առմամբ, երկրի կենսամակարդակից:

1987թ. հրատարակվեց ՅԵԼՖ ԸՖՖԵյրս (Health Affairs) ամսագրի հատուկ հիմնադրույթ հոբելյանական թողարկումը՝ առողջության և աղքատության վերաբերյալ: Յետագոտությունը վերաբերում էր բնակչության այն խմբերին, որոնք այսօր համարվում են անապահով (խոցելի) և համապատասխանում «ֆիզիկապես անկարողություն», «պատրաստ պայքարելու» հասկացություններին: Ամսագրում ուշադրության կենտրոնում էին առողջապահական ծառայությունները և կարիքի մեջ գտնվող մարդկանց առողջապահական միջամտությունները, խոսվում էր աղքատ, անտուն, չապահովագրված, ծեր և միջարժեք խրոնիկ հիվանդություններով տառապող, կամ ցածր եկամուտներով վետերանների մասին, այսինքն՝ մարդիկ ում մերօրերում էլ կարելի է համարել անապահով:⁶⁴

Սակայն պետք է նշել, որ 1987թ.-ից որոշակիորեն փոխվել է անապահով մարդկանց ցուցակը: Հաշվի առնելով սոցիալական բարեփոխումները, անօթնակության խնդիրները, ախտակցությունը, բնակչության շերտերի միջև բևեռացումը և այլ հանգամանքներ՝ այսօր ընդլայնվել է անապահով խավի ցուցակը: Օրինակ, ՅԵԼԻ և Միչիգան համալսարանների հետազոտողներն առանձնացնում են բնակչության հետևյալ անապահով խմբերին՝

- ցածր եկամուտ ունեցող մարդիկ, երեխաներ
- ռասայական և էթնիկ փոքրամասնությունները և գաղթականները
- խրոնիկ հիվանդությամբ տառապող անհատները
- կենսաթոշակային տարիքին մոտանձինք
- հոգեկան խանգարումներ ունեցողներ, թմրադեղեր և ալկոհոլ օգտագործողներ

Ըստ նրանց՝ անապահովությունն ծնող հիմնական հատկանիշները մարդկանց վատ առողջության, հիվանդության և հաշմանդամության առկայությունն է: Եվ այս պայմաններում մարդիկ կանգնում են բուժման և կանխարգելիչ ծառայություններ ստանալու խոչընդոտների առջև: Վերջին հաշվով, հետազոտողները խնդրի լուծումը տեսնում են առողջապահական ապահովագրության ձեռք

⁶⁴ Mechanic David and Tanner Jennifer "Vulnerable people, Groups, and Populations: Social View" *Definitions and Determinants, September-October 2007, p.1220-1230*
http://www.jenniferltanner.com/docs/HA_vulnerablegroupsetc_MechanicTanner.pdf

բերման հնարավորության մեջ:⁶⁵ Մեր կարծիքով, նման բացատրությունը լիարժեք է, քանի որ համընդհանուր բժշկական ապահովագրությունն և որակյալ լայնամասշտաբ առողջապահական համակարգ ունեցող երկրներում, ըստ այդ մեկնաբանման, պետք է որ բացակայեր, կամ նվազագույնի հասներ անապահով խավը:

Ընդ Անն Ադեյը բացահայտում է հարաբերական խոցելիությունը մարդկանց միջև (տարիքը, սեռը, ռասան, ազգությունը) միջանձնային հարաբերությունների շրջանակներում (ըստ ընտանիքի կառուցվածքի, ամուսնական կարգավիճակի, սոցիալական ցանցերի) և մուտքը տարածաշրջանային ռեսուրսներ (ինչպես օրինակ, դպրոցներ, աշխատատեղեր, եկամուտներ և բնակարան):⁶⁶

Անապահովությունը կարող է սահմանվել որպես անհատի կամ հասարակության թույլ կարողությունն ակնկալելու, հաղթահարելու, դիմակայելու և վերականգնելու գծով:⁶⁷ Հենց այդ կարողությունն է, որը կարելի է բնութագրել որպես անհատների, տնային տնտեսությունների և հասարակության կողմից ռեսուրսների ձեռք բերման հասանելիությունը՝ հաղթահարելու սպառնալիքները կամ դիմակայելու վտանգի ազդեցությունը:

Դ. Մեջանիքն և Ջ. Թանները հանգել են այն եզրակացության, որ վերջին մեկ կամ երկու տասնամյակում խոցելիությունը կուտակվում է կյանքի ընթացքում: Վաղ կյանքի դժվարությունները և դրանց բացասական հետևանքները կապված են կյանքի հետագա իրադարձությունների հետ: Դեռահասների, երիտասարդ չափահասների և ծերերի բարօրությունը մեծապես կախված է անհատական զարգացման ուղիներից, ընտանիքի, հասարակության սոցիալական և տնտեսական փորձից:⁶⁸

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ, վերոնշյալում թվարկված անապահով խմբերում ներառվում են նաև հասարակության

⁶⁵ Pollack Harold, Kronebusch Karl "HEALTH INSURANCE AND VULNERABLE POPULATIONS", *Economic Research Initiative on the Uninsured Working Paper Series 5,52p.* www.umich.edu/~eriu/pdf/wp5.pdf

⁶⁶ Aday L.A., *At Risk in America: The Health and Health Care Needs of Vulnerable Populations in the United States, 2d ed.* San Francisco: Jossey-Bass, 2000, 400p.

⁶⁷ *International Federation of Red Cross and Red Crescent Societies, What is vulnerability?* <http://www.ifrc.org/en/what-we-do/disaster-management/about-disasters/what-is-a-disaster/what-is-vulnerability/>

⁶⁸ *Mechanic David and Tanner Jennifer "Vulnerable people, Groups, and Populations: Social View" Definitions and Determinants, September-October 2007, p.1220-1230* http://www.jenniferltanner.com/docs/HA_vulnerablegroupsetc_MechanicTanner.pdf

անդամների հետ դժվար ինտեգրվող նախկինում դատվածություն ունեցող անձինք, անձնական ֆինանսական պարտավորություններով ծանրաբեռնված ֆիզիկական անձինք, սնանկ ճանաչված ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը, ովքեր սնանկությունից հետո մինչև 5 տարի զրկվում են ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու իրավունքից, ինչպես նաև մանկատներից չափահաս դարձած անձիք, մարմնավաճառները և այլն: Յետևաբար, բնակչության, անհատի անապահովությունը մարդկային հարաբերությունների փոխազդեցության, առաջին անհրաժեշտության ռեսուրսների հասանելիության և կյանքի մարտահրավերներին դիմակայելու արդյունքն է, որը պահանջում է տարբեր տեսակի քաղաքական, տնտեսական, սոցիալական միջամտություններ՝ սկսած առանձին քաղաքների, շրջանների և գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումից և կրթական քաղաքականությունից, մինչև անհատական բժշկական միջամտություն: Ըստ մեզ, անապահովությունն հասկացությունը կապվում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ կարիք, ռիսկ, վնասի կամ մերժվածության զգայունություն, երկարակեցության ու կարողության բացակայություն: Ուստի, տվյալ հասկացությունը հարաբերական է և շատ դինամիկ: Գտնում ենք, որ «անապահովություն» հասկացությունը «աղքատություն» հասկացության բաղկացուցիչն է, քանզի այն ամենն ինչ բնորոշ է աղքատին, մասամբ բնորոշ է նաև անապահով մարդուն:

Այսպիսով, տնտեսագիտական գրականության մեջ աղքատության, ինչպես նշել ենք, նաև անապահովության վերաբերյալ միասնական սահմանում գոյություն չունի: Տարբեր ժամանակներում տարբեր տնտեսագետներ տարբեր մոտեցումներ են տվել «աղքատություն» հասկացության սահմանմանը և տարբեր կերպ անդրադարձել այս հիմնախնդրին (տե՛ս հավելված 1.3.1):

Ժամանակակից մոտեցումներում ընդլայնվել է աղքատությունն հասկացությունը, վերացվել այն նեղ սահմանումը, ըստ որի՝ հաշվի էր առնվում բացառապես եկամուտների և սպառման մակարդակը: Աղքատության ամենատարածված մեկնաբանումն է՝ սպառողական զամբյուղում ընդգկված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման անկարողությունը: Այսօր աղքատության համալիր հասկացությունը ներառում է նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք

են կրթությունը և առողջապահությունը, սոցիալական և քաղաքական գործընթացներին քաղաքացու մասնակցության հնարավորությունը, անձի ազատությունը և անվտանգությունը, շրջակամիջավայրի որակը և այլն:⁶⁹

Համաձայն Համաշխարհային բանկի սահմանման՝ աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է: Այն դիտվում է որպես՝⁷⁰

- եկամուտների և ծախսերի ցածր մակարդակ (որպես կանոն՝ համեմատած սահմանված աղքատության գծի հետ), արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն, սոցիալական կապիտալի ցածր մակարդակ.
- սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություններ.
- անվտանգության ցածր մակարդակ՝ տարբեր ռիսկերի նկատմամբ (աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ և այլն) պաշտպանվածության ցածր աստիճան.
- ազդեցության ցածր մակարդակ (ձայնազրկություն)՝ տնտեսական և հասարակական, այդ թվում՝ աղքատների կյանքի վրա ազդեցություն ունեցող կառույցների գործունեությանը մասնակցության, դրանց հետ բանակցելու և դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս: Այլ խոսքերով՝ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անկարողությունն է:

Մեկ այլ սահմանմամբ՝ մարդկային աղքատությունը զրկվածությունն է նյութական ու սոցիալական այն հնարավորություններից, որոնք ապահովում են մարդկանց երկար,

⁶⁹ Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. «Բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը տնտեսական անվտանգության համատեքստում», «21-րդ դար», թիվ 1(7), 2005թ. էջ 97-123

⁷⁰ Ames B., Brown W., Devarjan Sh., Izquierdo Al., *Macroeconomic policy and poverty reduction, Poverty Reduction Strategy Papers Sourcebook. Overview, WB, Chapter 6, April 2, 2001, p1-32*

առողջ ու բարեկեցիկ, այսինքն՝ մարդկային ու նյութական աղքատության հից գերծկյանք:⁷¹

Ընդհանրացնելով վերոնշյալ սահմանումները՝ կարող ենք ասել, որ աղքատությանն այնպիսի տնտեսական և սոցիալական իրավիճակ է, որի պայմաններում հնարավոր չէ բավարարել անհատի կյանքի, աշխատունակության պահպանման և սերնդի շարունակության համար առաջնային անհրաժեշտության պահանջները:

Աղքատությանը բազմազան և փոխկապակցված պատճառների արդյունք է, որոնք միավորված են հետևյալ խմբերում՝⁷²

- Տնտեսական (գործազրկության, ցածր աշխատավարձ, ցածր արտադրողականության),
- Սոցիալ-բժշկական (հաշմանդամություն, ծերություն, հիվանդության բարձր մակարդակ)
- Ժողովրդագրական (միայնակ ծնողներ, ընտանիքում մեծ թվով խնամակյալներ)
- Կրթական-որակավորման (կրթության ցածր մակարդակ, անբավարար մասնագիտական պատրաստվածություն)
- Քաղաքական (ռազմական հակամարտություններ, ստիպողական արտագաղթ)
- Տարածաշրջանային-աշխարհագրական (տարածքների անհավասար զարգացում)
- Կրոն-փիլիսոփայական, հոգեբանական (ասկեզա՝ որպես ապրելակերպ, գժություն (юродство)):

Նկատենք որ, աղքատություն և անապահովություն և հասկացությունները միմյանց հետ սերտ կապված են, քանի որ աղքատության առաջացման վերոնշյալ պատճառները նույնպես կարելի է դասել անապահովություն առաջացնող պատճառների: Այլ խոսքով՝ անապահովությունից դեպի աղքատություն ընդամենը «մեկ քայլ է»: Համաձայն ԱՎԾ-ի նյութերի՝ բնակչությունն ըստ կենսամակարդակի բաժանվում է աղքատների և ոչ աղքատների, ուստի

⁷¹ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ՝ հրատարակված *Տնտեսական բարեփոխումների վերջնական-տեղեկատվական կենտրոնի կողմից «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում»* զեկույց, 2005թ. էջ 18

⁷² Бобков В.Н., Зинин В.Г., Разумов А.А. *Политика доходов и заработной платы. Доклад в рамках проекта МОТ "Преодоление бедности, содействие занятости и местное экономическое развитие в Северо-Западном федеральном округе.* — М., 2004. — С. 10.

գտնում ենք, որ գոյություն ունի բնակչության այնպիսի անապահով խավ, որը հենց կազմում են աղքատները, և գոյություն ունի այնպիսի անապահով խավ, ովքեր ոչ աղքատների կազմում են՝ գտնվելով միջին խավի ստորին դեցիլային հատվածում, ովքեր տնտեսական կամ կենցաղային չնչին սթրեսային տատանման դեպքում անմիջապես դառնում են անապահով: Անապահով խավի մոտ առկա է պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը կամ բացակայությունը:

ՀՀ-ում բնակչության բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը, որն ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը:

Համաձայն ՀՀ ԱՎԾ հրապարակած նյութերի՝ բնակչությունն ըստ կենսամակարդակի բաժանվում է աղքատների, այդ թվում՝ շատ աղքատներ և ծայրահեղ աղքատներ, և ոչ աղքատների: ՀՀ-ում աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին՝ ընդհանուր գծից, շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին՝ ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Համառոտաբար հային բանկը բացարձակ աղքատության շեմ է սահմանում օրական ոչ պակաս քան 1.25 ամերիկյան դոլարը (կուրսը հաշվարկվում է ըստ համարժեքային գնողունակության)⁷³, իսկ ըստ «Հազարամյակի զարգացման նպատակներ» զեկուլյցի՝ օրական 1.25-2 ԱՄՆ դոլարով գոյություն ունող պահպանողը համարվում է «չափավոր աղքատ», իսկ 2-4 ԱՄՆ դոլարի դեպքում՝ «համարյա աղքատ»⁷⁴: Սակայն 2015թ. վերջին եռամսյակում ՀԲ-ն աշխատել է աղքատության ցուցանիշի և աղքատության շեմի որոշման համակարգի վերանայման ուղղությամբ, ըստորի աղքատության գիծը բարձրացել է մինչև 1.90 ԱՄՆ դոլար, ինչն էապես բարձր է 1.25 ԱՄՆ դոլարից⁷⁵:

⁷³ © 2016 [The World Bank Group](http://econ.worldbank.org/WBSITE/EXTERNAL/EXTDEC/EXTRESEARCH/0,,contentMDK:22510787~menuPK:574960~pagePK:64165401~piPK:64165026~theSitePK:469382~isCURL:Y~isCURL:Y~isCURL:Y,00.html)
<http://econ.worldbank.org/WBSITE/EXTERNAL/EXTDEC/EXTRESEARCH/0,,contentMDK:22510787~menuPK:574960~pagePK:64165401~piPK:64165026~theSitePK:469382~isCURL:Y~isCURL:Y~isCURL:Y,00.html>

⁷⁴ The Millenium Depeloment Goals Report 2013, United Nations, NY, p.9

⁷⁵ © 2016 The World Bank Group <http://data.worldbank.org/topic/poverty>

Ցանկացած երկրում աղքատության մակարդակն ավելի խորը գնահատելու համար կիրառվում են աղքատության տարբեր ցուցանիշներ: Ըստ ՄԱԿ-ի՝ աղքատությունը ներառում է գործազրկությունը (եկամտային աղքատություն) և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակությունը նույնիսկ հասանելիությունը (մարդկային աղքատություն): Անհատի որոշակի աշխատանքով ապահովությունը նրա կողմից եկամուտ ստեղծելու հնարավորությունն է, որը բնութագրվում է բազմաթիվ ցուցանիշներով, մասնավորապես՝ սեփական հող, կենդանու առկայություն, ապրանքային շուկաներին հասանելիություն, սեփական հողն ամբողջությամբ մշակելու հնարավորություն, ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորություն, աշխատանքի առկայություն և այլն: Այս ցուցանիշների հաշվարկման միջոցով հնարավոր է գնահատել տվյալ տարածքում որոշակի աշխատանքով զբաղվելու հնարավորությունն չունեցող, այսինքն եկամտային աղքատություն ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, որոնք էլ կհանդիսանան միջամտության թիրախ պետության կողմից եկամտային աղքատության նվազեցման համար:

Բարեկեցիկ կյանքի հնարավորությունների սահմանափակությունը, անհասանելիությունը (մարդկային աղքատություն) բնութագրվում է կրթական և առողջապահական ծառայությունների ֆիզիկական և նյութական անհասանելիությամբ, կենտրոնացված գազամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում, ոռոգման ջուր, անցանելի ճանապարհներ ունենալու հնարավորությամբ և այլն: Այս ցուցանիշների հաշվարկման միջոցով հնարավոր է գնահատել տվյալ տարածքում բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակությունը և հասանելիությունը, այսինքն՝ արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ֆիզիկական բացակայության կամ անբավարար լինելու պատճառով դրանցից օգտվել չկարողացող մարդկանց տեսակարար կշիռը, որոնք էլ ևս կհանդիսանան միջամտության թիրախ պետության կողմից մարդկային աղքատության նվազեցման համար:

Այսպիսով, եկամտային և մարդկային աղքատությունների համաթվերը միավորվում են մեկ աղքատության ընդհանրացված

համաթվի մեջ: Ըստ մեզ, աղքատության՝ ըստ հատկանիշների սահմանումը հարաբերական է, և ենթակա է տատանման ժամանակի, հասարակարգի, պետական կարգի, ապրանքների և ծառայությունների հասանելիության և միջարքայլ հանգամանքներից ելնելով (էթնիկ, կրոնական, գենդերային): Մեր աշխատության մեջ նպատակը և հնարավորությունը՝ այս ամենի մեջ տարանջատել և վերլուծել տնտեսական բաղադրիչը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ սոցիալապես անապահով խավն իր մեջ ներառում է ինչպես բնակչության այն հատվածը, որը կազմում է աղքատ խավը (տնտեսական մոտեցմամբ), այնպես էլ հասարակության աղքատության շեմին գտնվող բնակչության այն հատվածը, որը կազմում է միջին խավի ստորին դեցիլային խավը: Յետևաբար, սոցիալապես անապահով խավի կենսամակարդակի բարձրացմամբ պայմանավորված հիմնախնդիրների լուծման, աղքատության վերացման և միջին խավի զարգացման ուղիները միաձուլվում են:

**ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ
ԳԼԱՅՍՏՈՒՄԸ**

**2.1 ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական
ցուցանիշների վերլուծություն**

Յուրաքանչյուր պետության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության գերակա խնդիրն է ստեղծել բարենպաստ պայմաններ բնակչության բարեկեցության բարձրացման համար, որն արտահայտվում է բնակչության կենսամակարդակի միջոցով: Վերջին ժամանակաշրջանում բնակչության «կենսամակարդակ» հասկացությունը ձեռք է բերել ավելի բազմաբովանդակ նշանակություն և բնութագրում է բնակչության պահանջմունքները բավարարելու նպատակով նյութական հնարավորությունները՝ իր մեջ ներառելով սկզբունքորեն նոր տիպի սոցիալ-տնտեսական զարգացման անցմամբ պայմանավորված տարբեր սոցիալական տեսանկյունների՝ աշխատանքի և կենցաղի պայմաններ, բնակչության եկամուտների և ծախսերի մակարդակն ու կառուցվածքը, կրթության, առողջապահության, մշակույթի, արվեստի զարգացման մակարդակը և այլն, այլ կերպասած, այն բոլոր գործոնները, որոնք կապահովեն «առողջ» մարդկային կյանք: Այդ առումով անհրաժեշտ է նշել, որ բնակչության կենսամակարդակի վրա զգալի ազդեցություն ունեն ոչ միայն տնտեսության զարգացման մակարդակը, տնտեսական աճի տեմպը, հասարակության յուրաքանչյուր անդամին տնտեսական աճից մասնաբաժնի չափը, երկրում ձևավորված աշխատավարձի մակարդակը և դրանց միջև հարաբերակցությունը, այլ նաև երկրում առկա ժողովրդագրական իրավիճակը՝ բնակչության թվաքանակը, նրա կառուցվածքը, շարժընթացի միտումները և այլն:

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բնութագրման համար անհրաժեշտ է գնահատել նաև երկրի ժողովրդագրական ցուցանիշները: Հետևաբար, ՀՀ բնակչության կենսամակարդակի մասին հիմնական և ամբողջական պատկերացում կազմելու համար վերլուծենք ՀՀ ժողովրդագրական իրավիճակը:

ՀՀ բնակչության կենսամակարդակի փոփոխությունները բնութագրվում են բնակչության թվաքանակի փոփոխության

միտումներով: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, հիմք ընդունելով 2011թ. մարդահամարի արդյունքները, երկրի մշտական բնակչությունը կազմել է 2.998.600 մարդ (նշենք, որ ներկայումս բնակչության հաշվառման ժամանակ ընդգրկվում են ՀՀ քաղաքացիություն և երկքաղաքացիություն ունեցող անձինք, փաստորեն, բնակվելով, աշխատելով այլ երկրներում, հաշվառված են ՀՀ մշտական բնակչության կազմում), որի 63.6% կազմում է քաղաքային բնակչությունը, 36.4%-ը՝ գյուղական: Վերջին տասարիների ընթացքում բնակչության տարեկան աճի տեմպերը եղել են կայուն՝ կազմելով 0.1-0.2%: Բնակչության ծնելիության մակարդակն ունեցել է կայուն աճման միտում և 2004թ-ի 1000 բնակչի հաշվով ծնելիության ընդհանուր գործակիցը 11.7 պրոմիլից 2015թ-ին հասել է 13.9 պրոմիլի, իսկ 1990թ. այն կազմել է 22.5 պրոմիլ: Բնակչության ծնելիության մակարդակը բնութագրող ցուցանիշ է նաև ծնելիության տարիքային գործակիցը (վերարտադրության տարիքի (15-49) 1000 կնոջ հաշվով ծնվածների թիվը), որը 2008թ. կազմել է 43.3 միավոր, իսկ 2015թ.՝ 53.4 միավոր: Համեմատության համար նշենք, որ 1990թ. այն եղել է 87.9 միավոր: Ծնելիության մակարդակի նվազումը 1990թ.-ի հետ համեմատած պայմանավորված է ինչպես այն ժամանակ հանրապետությունում առկա տնտեսաքաղաքական ճգնաժամային իրավիճակով, բնակչության վերարտադրությունն ապահովող զգալի հատվածի արտագաղթով, այնպես էլ ամուսնալուծությունների աճման միտումով: Վերջինս, չնայած 2014թ. համեմատ 2015թ.-ին նվազման միտում է ունեցել, սակայն շարունակում է ունենալ բարձր մակարդակ: Այսպես, ՀՀ-ում նոր կազմավորվող 1000 ամուսնական զույգին 2015թ. բաժին է ընկել 367 ամուսնալուծություն, 2008թ.՝ 162, 1990թ.՝ 154 (տես աղյուսակ 2.1.1):

Ինչպես նկատում ենք, ամուսնալուծությունների թվաքանակի ավելացման միտումը պահպանվել է նաև վերջին տասարիների կտրվածքով, որը խիստ մտահոգիչ է՝ պայմանավորված նրանով, որ այն նպաստում է ՀՀ-ում միայնակ մայրերի թվաքանակի ավելացմանը, ինչն էլ բերում է երկրի տնտեսական ու ազգային անվտանգությանն ուղղված հիմնախնդիրների առաջացման: Այդ առումով ՀՀ կառավարության գերակա խնդիրներից է նախ և առաջ բացահայտել

ամուսնալուծության ներհիմնական պատճառները, որի հիման վրա մշակել և իրագործել միջոցառումների համակարգ, որոնք կնպաստեն երիտասարդներին ամուրու լիարժեք ընտանիք ստեղծելուն, հնարավոր ամուսնալուծության ներքին կատեգորիան, իրանելու բազմազավակ ընտանիքների ձևավորմանը:

Աղյուսակ 2.1.1

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ժողովրդագրական ցուցանիշները⁷⁶

	2004	2008	2010	2011*	2012*	2013*	2014	2015
Բնակչությունը տարվերջի դրությամբ, 1000 մարդ	3215.8	3238.0	3262.6	3021.4	3026.9	3017.1	3010.6	2998.6
քաղաքային	2062.3	2073.4	2088.5	1912.7	1917.5	1914.1	1912.9	1907.0
գյուղական	1153.5	1164.6	1174.1	1109.4	1109.4	1103.0	1097.7	1091.6
Բնակչության տարեկան տեմպերը %	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
Ճնշվածներ 1000 բնակչի հաշվով	11.7	12.7	13.8	14.4	14.0	13.8	14.3	13.9
Մահացածներ 1000 բնակչի հաշվով	8.0	8.5	8.6	9.3	9.1	9.0	9.2	9.3
Բնակչության բնական աճը 1000 բնակչի հաշվով	3.7	4.2	5.2	5.1	4.9	4.8	5.1	4.6
Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարի	73.4	73.8	74.1	74.2	74.3	74.8	75.0	75.0
տղամարդ	70.3	70.4	70.6	70.7	70.9	71.5	71.8	71.7
կին	76.4	76.9	77.2	77.5	77.5	77.9	78.1	78.2
Բնակչության ընդհանուր թվաքանակից								
Աշխատունակ տարիքից ցածր, 1000 մարդ	758.2	653.9	639.4	609.1	609.8	611.8	616.8	623.7
Աշխատունակ տարիքի, 1000 մարդ	2036.9	2198.6	2247.1	2050.2	2051.5	2034.0	2015.1	1987.2
Աշխատունակ տարիքից բարձր 1000 մարդ	420.7	385.5	376.1	362.1	365.6	371.3	378.7	387.7
Ամուսնության գործակից	5.3	5.7	5.5	6.5	6.3	6.1	6.3	5.9
Ամուսնալուծության գործակից	0.6	0.9	0.9	1.1	1.1	1.2	1.5	1.2
Բնակչության միգրացիայի մնացորդը +-	-2.4	-1.8	-0.7	-1.2	-3.1	-8.1	-7.2	-8.6

⁷⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, ՀՀ ԱՎԾ 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, ՀՀ ԱՎԾ 2013, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ 2016, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013, ՀՀ ԱՎԾ, 2013

Ընտանիքների ու սուսնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալ-տնտեսական վիճակից ելնելով ՀՀ-ում գերադասելի 2-3 երեխայով ընտանիքի մոդելից անցում է կատարվել պարզ վերարտադրության համար ոչ բավարար 1-2 երեխայով ընտանիքի մոդելին, ինչպես նաև ավելացել է վերջին տարիներին երեխա չունեցող ընտանիքների տեսակարար կշիռը (տե՛ս հավելված 2.1.1):

Չնայած նրան, որ ՀՀ կառավարությունը նման իրավիճակը բարելավելու ուղղությամբ իրականացնում է որոշակի միջոցառումներ՝ ծննդաբերության հետկապված ծախսերը մտցնելով պետական պատվերի ցանկի մեջ, ծնված առաջին և երկրորդ երեխայի համար հատկացնելով 50 000 դրամ, երրորդ ու չորրորդ երեխային՝ 1 000 000 դրամ, իսկ հինգերորդ և ավելի երեխայի համար՝ 1 500 000 դրամ, մինչև 7 տարեկան երեխայի բժշկական սպասարկումը կատարվում է պետական պատվերի շրջանակներում, սակայն ինչպես ցույց է տալիս իրականությունը, այն բավարար համարել չի կարելի, հատկապես եթե հաշվի առնենք, որ բուժհաստատություններում դեռևս առկա են կոռուպցիոն ռիսկեր: Մեր կարծիքով, խնդիրն այստեղ կայանում է մի շարք հանգամանքներում՝ ա) երիտասարդության շրջանում լայն տարածում ձեռք բերող առողջական հիմնախնդիրները, բ) բնակչության ցածր կենսամակարդակի առկայությամբ, որը պայմանավորված է տարրական պահանջմունքներն ամբողջությամբ չբավարարող եկամուտների ցածր մակարդակով, գ) ներկայումս ծննդաբերության պլանավորման առաջնային պայմաններից է նաև երեխայի բարեկեցիկ ապագայի վստահության առկայությունը, դ) կանանց ուշ ամուսնությունները՝ կապված աշխատանքային ոլորտում հաջողություններ ունենալու ձգտումների հետ: Նման ռազմավարական նշանակության խնդրի լուծման համար անհրաժեշտ է ակտիվացնել տնտեսության մասնավոր հատվածը: Ընդհանուր առմամբ, մասնավոր ձեռնարկություններ (Ազբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկը, Հայէկոնոմ բանկը) իրենց աշխատողներին երեխա ունենալու դեպքում տալիս են խրախուսող որոշակի գումար, սակայն այն պետք է կրի մասսայական բնույթ, որը և կթողնի իր դրական հետևանքները բնակչության վերարտադրության վրա:

Այս պիսով, ՀՀ բնակչության ֆիզիկական վերարտադրության տեսանկյունից ծնելիության մակարդակի անկումը հետխորհրդային Հայաստանի համար կարևորագույն սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական մարտահրավերներից է: Իսկ իրավիճակը մեղմելու ուղին ակտիվ, նպատակային ու հետևողական պետական և ոչ պետական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) միջամտությունն է, մասնավորապես, ծնվածների թվաքանակի ավելացման համար անհրաժեշտ է ջանքեր գործադրել, հատկապես, բարենպաստ սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական պայմաններ ստեղծել արտագաղթի կրճատման և ներգաղթի ավելացման համար:

ՀՀ բնակչության միգրացիոն բացասական մնացորդը 2004-2011թթ. ունեցել է նվազման միտում, սակայն սկսած 2012թ-ից նկատվում է տվյալ ցուցանիշի աճ, որը շարունակվում է նաև 2015թ.: Գտնում ենք, որ պաշտոնապես հրապարակված տվյալներն ամբողջովին չեն արտացոլում արտագաղթի իրական ծավալները: Այսպես, ըստ 2016թ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների, 2012-2015թթ. արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 21.5%-ի տեղաշարժերը 2015թ. դրությամբ եղել են ներհանրապետական, այդ թվում նաև ԼՂՀ-ում, և միայն 78.5% միջպետական, որից 89.3%-ը ՌԴ-ում: Ընդ որում, ըստ հարցումների, ՌԴ և այլ երկրներ մեկնած/ժամանած տնային տնտեսությունների անդամները որպես մեկնման/ժամանման պատճառներից հիմնականը նշել են աշխատելը, աշխատանք փնտրելը, ընտանեկան այլ հանգամանքները:⁷⁷ Համեմատության համար նշենք, որ ըստ 2004թ. ՏՏԿԱՀ արդյունքների, տնային տնտեսություններից մոտ 20% ուներ 15 և բարձր տարիքի բացակասում, որոնցից գրեթե կեսը մեկնել էին ՌԴ: Իսկ հիմնական պատճառը շարունակում էր մնալ աշխատելը: Իսկ սա արդեն վկայում է վերջին տաս տարվա ընթացքում ՀՀ բնակչության կենսամակարդակի վատթարացման մասին, քանի որ մարդկանց մեծ մասը հիմնականում աշխատանք չունենալու, կամ ոչ բավարարելի ամուսնական պայմաններում բռնել են արտագաղթի ուղին:

Տեղին է նշել, որ ծնելիության նվազման և զանգվածային արտագաղթի, ինչպես նաև մահացության և ծնելիության

⁷⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016, ՀՀ ԱՎԾ Եր. 2016, էջ 24

հարաբերակցության փոփոխության հետևանքով կառուցվածքային տեղաշարժեր են կատարվել ՀՀ բնակչության տարիքային կազմում: 2015թ.-ին 2014թ-ի հետ համեմատարձանագրվել է 1000 բնակչի հաշվով մահվան դեպքերի աճ 1.1%-ով, իսկ վերջին 12 տարիների ընթացքում այն ավելացել է 15%-ով: Այդօրինակ տեղաշարժը պայմանավորված է մահացության կառուցվածքում որոշ հիվանդությունների տարեցտարի ավելացումը:

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ժողովրդագրական ցուցանիշներից է բնակչության ծերացումը: Այն բնակչության կառուցվածքում տարեց բնակչության տեսակարար կշռի աճն է և բնակչության վերարտադրության, ծնելության, մահացության և դրանց հարաբերություններում առկա տեղաշարժերի, ինչպես նաև արտագաղթի հետևանք է: Այսպես, վերջին 12 տարիներին կյանքի միջին տևողության աճը, ժողովրդագրական մյուս ցուցանիշների փոփոխությունն արագացրեցին բնակչության ծերացման գործընթացը: 63 և ավելի բարձր տարիք ունեցող մարդկանց տեսակարար կշռը ՀՀ բնակչության ընդհանուր թվի մեջ վերջին տարիներին ավելացել է և 2015թ. կազմել մոտ 387700 մարդ կամ բնակչության 12.9%: Ըստ միջազգային ժողովրդագրական նորմերի, եթե որևէ երկրի բնակչության 60 և ավելի բարձր տարիք ունեցողների տեսակարար կշռը կազմում է մինչև 8%, ապա այդ երկրի բնակչությունը համարվում է երիտասարդ, իսկ սկսած 12%-ից՝ երկրի բնակչությունը համարվում է ծերացած: Յետևաբար, մեր երկրի բնակչությունը գնահատվում է ծերացած, որն էլ կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիր է ՀՀ կառավարության համար երկրի տնտեսության կայուն զարգացման, ազգային անվտանգության ապահովման, և, վերջին հաշվով, բնակչության կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից: Իսկ, որպեսզի բնակչության ծերացման խորացում չնկատվի, անհրաժեշտ է բնակչության ծավալուն ներգաղթային հոսք և ծնելիության մակարդակի կտրուկ աճ:

Եթե համեմատենք ՀՀ բնակչության ժողովրդագրական ցուցանիշներն այլ երկրների համանման ցուցանիշների հետ, ապա կտեսնենք, որ Հայաստանը հարաբերականորեն գտնվում է բարվոք վիճակում, և, նույնիսկ, առաջնային դիրքեր է զբաղեցնում: Սակայն,

դա հուսադրող չէ, քանի որ բնակչության կենսամակարդակի տեսանկյունից, բավական հետե մնում մի շարք երկրներից (տե՛ս հավելված 2.1.2):

Հավելված 2.1.2-ի տվյալները վկայում են, որ ԱՊՀ երկրների շրջանակում ՀՀ-ն ծնելիության, մահացության և բնակչության աճի գործակիցներով զիջում է միայն իսլամական դավանանք ունեցող երկրներին: Ընդ որում, նշենք, որ ողջ աշխարհում քրիստոնյա դավանանքի երկրները ժողովրդագրական ցուցանիշներով զիջում են այլ դավանանք ունեցող երկրներին: ՀՀ-ն բնակչության բնական աճի ցուցանիշով առաջ է ՌԴ-ից, Ուկրաինայից, բալթյան երկրներից և եվրոպական որոշ երկրներից, իսկ կյանքի տևողության ցուցանիշով զիջում է միայն զարգացած երկրներին:

Այժմ դիտարկենք ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող առանձին ցուցանիշները: ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր և առաջնային ցուցանիշ է բնակչության դրամական եկամուտները, որոնց կազմում մեծ տեսակարար կշիռ է կազմում միջին ամսական անվանական աշխատավարձը: Վերջին 12 տարիներին ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձն աճման միտում է դրսևորել և 2008թ.-ին 2004թ.-ի համեմատ ավելացել է ավելի քան 2 անգամ, 2015թ.-ին 2008թ.-ի համեմատ ավելացել է 96.3%-ով, իսկ 2015թ. 2004թ. համեմատ ավելացել է 3.95 անգամ, սպառողական գների ինդեքսը 2015թ. նախորդ տարվա համեմատ նվազել է 0.1%-ով, իսկ 2004-2015թթ. միջինը կազմել է 104.4%:

Աղյուսակ 2.1.2

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող մասնակի ցուցանիշներ⁷⁸

Ցուցանիշներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012*	2013	2014	2015
Միջին ամսական անվանական աշխատավարձ	43445	52060	62293	74227	87406	96019	102652	108092	140739	146524	158580	171615
Միջին ամսական իրական աշխատավարձը	40603	51750	60537	71099	80189	92862	94873	100364	110295	138491	153960	165492
Սպառողական գների ինդեքս %	102.0	99.8	105.2	106.6	105.2	106.5	109.4	104.7	103.2	105.6	104.6	99.9
Աշխատավարձի սահմանված նվազագույն չափ	13000	13000	15000	20000	25000	30000	30000	32500	32500	35000/ 45000 ¹	50000	50000/ 55000

* 2012-2013թթ. աշխատավարձերի ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով 2012թ. ցուցանիշը վերահավասարվել է ըստ 01.01.2013թ.-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ

⁷⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, ՀՀ ԱՎԾ

օրենքի (ՅՕ-246)՝ գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկային (պայմանականորեն) դրույթաչափերը կիրառելու մեթոդով:

Եթե համեմատելու լինենք նույն ժամանակաշրջանում միջին ամսական իրական աշխատավարձի շարժընթացը, ապակտեսենք, որ այն ավելացել է 4 անգամ: Այսինքն, ըստ պաշտոնական տվյալների միջին անվանական աշխատավարձի և միջին իրական աշխատավարձի մակարդակներն ավելացել են համամասնորեն, որը պետք է հանգեցնեք բնակչության կենսամակարդակի եթե ոչ նվազմանը, ապա պահպանմանը: Այս իրավիճակը կասկածի տեղիք է տալիս, քանի որ 2004-2015թթ. կենսամակարդակը բնութագրող այնպիսի կարևոր ցուցանիշ, ինչպիսին է աղքատության մակարդակը ՀՀ-ում բավական բարձր է և բնակչության յուրաքանչյուր երրորդ մարդը համարվում է աղքատ: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ կենսամակարդակը որոշվում է տնային տնտեսության, ընտանիքի ամսական սպառումը բաժանելով տնային տնտեսության անդամների թվի վրա, որոնց միջին թվաքանակը 2015թ. կազմել է 3.7 մարդ, իսկ 1 շնչի համար նվազագույն սպառողական զամբյուղը 44,700 դրամ, ուստի մեծ է հավանականությունը, որ միայն մեկ աշխատող չափահաս անդամ ունեցող խոշոր տնային տնտեսությունների կենսամակարդակը ցածր կլինի, եթե նույնիսկ այդ աշխատողի վարձատրությունը միջին մակարդակի է:⁷⁹

ՀՀ տնտեսության ճյուղերի համար բարեկեցության ցուցանիշ ստանալու համար դիտարկենք միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում 2015թ-ի դրությամբ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների: Ըստ ՀԲ-ի կողմից հաշվարկված մեթոդաբանության՝ ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը միջին ընթացիկ գներով մեկ շնչի հաշվով ամսական կտրվածքով 2015թ. կազմել է 44700 դրամ: Վերջինիս վրահարաբերելով 2015թ. միջին ամսական աշխատավարձի տվյալներն ըստ տնտեսական գործունեության տվյալների՝ տեսնում ենք, որ ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2015թ. նվազագույն սպառողական զամբյուղից մեծ է միջինում 3.83 անգամ (տես՝ աղյուսակ 2.1.3): Այդ ցուցանիշը զգալիորեն տատանվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների. այն առավելագույնն է \$ինանսական գործունեության ոլորտում՝ 8.75: Փաստորեն, \$ինանսական ոլորտում նշված հարաբերությունը մոտ 3.5 անգամ գերազանցում է իր նվազագույն արժեքից. գյուղատնտեսության, անտառային

⁷⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 28, 42

տնտեսության և ձկնորսության ոլորտում՝ 2.53: Չնայած որ նշված ճյուղերում ներգրավված գյուղատնտեսները, ինքնազբաղվածները և գործարարներն օգտվում են հարկային արտոնության ներքին հիմնական գործունեության մասով ազատված են եկամտային հարկից և շահույթահարկից, հարկ է նշել, որ հաճախորանց գործունեության իրական ծավալները հաշվառման կենտրոններ չեն ներկայացվում: Այդուհանդերձ, ՀՀ տնտեսությունում, ըստ տնտեսական գործունեության տեսակների, գոյություն ունի աշխատավարձերի մեծ վարվերություն (վարիացիա), ինչն էլ ազդում է բնակչության կենսամակարդակի վրա, քանի որ, ինչպես նշել ենք, մեկ աշխատողի աշխատավարձն ուղղվում է ողջ ընտանիքի անդամների, կամ ավելի ճիշտ՝ մեկից ավելի անձանց կարիքների բավարարմանը:

Աղյուսակ 2.1.3

Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների⁸⁰

Տնտեսական գործունեության տեսակը	Միջին ամսական անվանական աշխատավարձ 2015թ.	Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերությունը նվազագույն սպառողական գամբյունին
Ընդամենը	171,615	3.83
Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն և ձկնորսություն	113,126	2.53
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	360,975	8.07
Մշակող արդյունաբերություն	155,557	3.48
Էլեկտրականության, գազի, ջրի և ջրամատակարարում	225,888	5.05
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	164,285	3.67
Շինարարություն	203,537	4.55
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	128,058	2.86
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	141,639	3.16
Կացության և հանրային սննդի կազմակերպում	101,737	2.27
Տեղեկատվություն և կապ	329,533	7.37
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	391,478	8.75
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	129,638	2.90
Մասնագիտական, գիտական և տեխնիկական	167,573	3.74

⁸⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016 ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը, 2016, ՀՀ ԱՎԾ


գործունեություն		
Վարչարարական և օժանդակ գործունեություն	131,611	2.94
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	217,485	4.86
Կրթություն	115,882	2.59
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	136,784	3.06
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	116,288	2,60
Սպասարկման այլ ծառայություններ	101,302	2.26

Նշյալ հիմնախնդիրը մեղմելու համար ՀՀ կառավարության քաղաքականության ուղղությունը տնտեսական մեթոդներով գործառուների համար խթանների ստեղծումն է՝ բարձրացնելու ցածր վարձատրվող ճյուղերի աշխատողների աշխատավարձը՝ նպաստելով հարուստներ-աղքատներ սոցիալական բևեռացման թուլացմանը: Սրանով հնարավոր կլինի մեծացնել տնտեսության մասնավոր հատվածի աջակցությունը՝ ուղղված բնակչության և հատկապես անապահով խավի կենսամակարդակի բարձրացմանը: ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում և կարգավորվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» և «Քաղաքացիական ծառայողների մասին» ՀՀ օրենքներով:

Եթե փորձենք համեմատել նվազագույն աշխատավարձի չափն աղքատության պարենային գծի հետ, ապա կարող ենք պատկերացում կազմել նվազագույն աշխատավարձ ստացող բնակչության կենսամակարդակի մասին: Ենթադրելով, որ նվազագույն աշխատավարձը նվազագույն պարենային զամբյուղի ամսական արժեքը գերազանցել է 10582 դրամով, 2015թ-ին՝ միջինը 27242 դրամով, սակայն, չենք կարող ասել, որ 1 շնչի հաշվով նվազագույն աշխատավարձը բավարարում է նվազագույն պարենային պահանջմունքները, քանի որ, ըստ ԱՎԾ-ի տվյալների, 2015թ-ին 1 շնչի հաշվով օրական էներգետիկական կազմել է 2232 կկալ և նվազագույն պարենային զամբյուղի շուրջ 60.7%-ն ըստ կալորիաների բաժին է ընկնում հացամթերքին, 6.5%-ը՝ կաթնամթերքին, մսամթերքին՝ 3.9%-ը, ձկնեղենին՝ 0.1%-ը, կարտոֆիլին՝ 4.9%-ը, բանջարեղենի մյուս տեսակներին՝ 3.4%-ը, շաքարին բաժին է ընկնում 4.2%-ը, մրգին ընդամենը 2.1%-ը⁸¹, իսկ

⁸¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016 ՀՀ ԱՎԾ, էջ 42 և հեղինակի հաշվարկներ

այ սպիսի կառուցվածքը կարող է շատ մարդկանց համար ընդունելի և ցանկալի չլինի, բացի այդ նվազագույն աշխատավարձն օգտագործվում է ոչ միայն պարենային զամբյուղի ապրանքներ ձեռք բերելու համար, այլ նաև սպառողական առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների գծով



պահանջ մուկները բավարարելու համար: Յետևաբար, միջազգային իրականության մեջ նվազագույն աշխատավարձի հաշվարկման և սահմանման համար հիմք է հանդիսանում ոչ թե պարենային զամբյուղը, այլ սպառողական զամբյուղը, որն իր մեջ բացի անհրաժեշտ պարենից ընդգրկում է նաև ոչ պարենային բնույթի ապրանքներ, ինչպես նաև բազմապիսի կենցաղային ծառայություններ:

Այսպիսով, այն, որ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի համար հիմք է ընդունվում պարենային զամբյուղը, գտնում ենք ոչ ճիշտ, քանի որ սահմանված նվազագույն աշխատավարձի մակարդակը բավարարչեարժանավայել կյանքի պայմաններ ունենալու համար:

Գծապատկեր 2.1.1

Նվազագույն պարենային զամբյուղի արժեքը և նվազագույն աշխատավարձի չափը ՀՀ-ում 2004, 2009-2015թթ.⁸²

Ըստ Եվրոպական Սոցիալական Վերանայված Խարտի այն նվազագույն աշխատավարձը սահմանվում է երկրի միջին

⁸² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, էջ 91, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, էջ 78: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2010 էջ 37, 2011 էջ 37, 2012 էջ 40, 2013 էջ 39, 2014 էջ 40, 2015 էջ 43, 2016 էջ 42, ՀՀ ՄՎԾ

աշխատավարձի 60%-ի չափով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ նշենք, որ ՀՀ-ում 2015թ. նվազագույն աշխատավարձի չափը պետք է կազմեր միջին իրական աշխատավարձի՝ 165492 դրամի 60%-ը՝ 99000 դրամ: Սակայն, 2014թ. հունիսի 1-ից «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի մակարդակը՝ 50000 դրամը,⁸³ կրկնակի անգամ քիչ է միջազգային նորմերով ընդունված մակարդակից: Դեռ ավելին, ըստ Եվրոպական Սոցիալական Վերանայված Խարտիայի, եթե նվազագույն աշխատավարձը կազմում է միջին աշխատավարձի 50%, ապա աշխատավարձի բաշխումը նորմալ է, իսկ 40%-ի դեպքում՝ ցածր է, այն դեպքում, երբ 2015թ. դրոշյամբ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը կազմել է միջին աշխատավարձի 33.2%-ը:⁸⁴ Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ իրական կյանքում ոչ թե պաշտոնապես սահմանված նվազագույն աշխատավարձի չափն է հանդես գալիս որպես աշխատանքի ընդունման չափանիշ, այլ նվազագույն աշխատավարձի այն մակարդակը, որը ձևավորվում է աշխատանքի առաջարկ և պահանջարկ ներկայացնողների միջև: Այսպես, թեև 2015թ. հունիսի 1-ից «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է 55000 դրամ,⁸⁵ սակայն, այսօր Երևան քաղաքում աշխատանք են առաջարկում այն դեպքում, երբ աշխատանքի օրական վարձատրությունը կազմում է առնվազն 4000-4500 դրամ, իսկ մարզերում՝ 3500-4000 դրամ: Եթե ընդունենք, որ մեկ ամսում միջին հաշվով աշխատանքային օրերը 21-ն են, ապա Երևան քաղաքում նվազագույն աշխատավարձը կկազմի 84-94.5 հազար, իսկ մարզերում՝ 73.5-84 հազար դրամ: Հետևաբար, միջին ամսական նվազագույն աշխատավարձը կկազմի 73500-94500, ընդ որում, ըստ հետազոտությունների, մարդիկ նշյալ գումարից ցածր վարձատրության դեպքում չեն համաձայնվում աշխատել, բացառությամբ խիստ հազվադեպ դեպքերից: Ստացվում է, որ իրականում, աշխատողները համաձայն են աշխատել միջին ամսական իրական աշխատավարձի մոտ 60%-ով: Այս հանգամանքը նույնպես պետք

⁸³ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ ընդունված 12.12.2013թ. ՀՕ-187-Ն
⁸⁴ ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր, Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով, Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագիր, 2006թ. դեկտեմբեր, 373 էջ
⁸⁵ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ ընդունված 01.12.2014թ. ՀՕ-205-Ն

Է գտնվի ԶԶ կառավարության ու շահարկության կենտրոնում, քանի որ այն ամրագրված է նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից ընդունված կոնվենցիաներում:

Այսպիսով, ԶԶ տնտեսության զարգացման ներկայիս պայմաններում բնակչության (հատկապես աշխատող և սոցիալապես անապահով) կենսամակարդակի բարձրացման համար խիստ անհրաժեշտ է ոչ միայն աշխատանքով ապահովված լինելը, այլ և այդ աշխատանքով վատակած աշխատավարձով հնարավորություն ունենալ բավարարել անհատի և նրա ընտանիքի նյութական և հոգևոր պահանջմունքները: Այն պետք է դառնա ԶԶ կառավարության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության բարեփոխման գերակա խնդիրը, որն էլ ուղղված կլինի բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովմանը, մարդկային կապիտալի վերարտադրությանը, քանի որ 21-րդ դարը որակի դար է:

2.2 Բնակչության դրամական եկամուտների և սպառողական ծախսերի բաշխվածության վրա ազդող գործոնները

Ժամանակակից պայմաններում զարգացած երկրների զգալի մասում շուկայական տնտեսության առանձնահատկություններից է սոցիալական ուղղվածությունը: Տնտեսության զարգացումը թույլ է տալիս, մի կողմից, իրականացնել ավելի բարդ սոցիալական ծրագրեր, մյուս կողմից, սոցիալական խնդիրների լուծումը բնակչության բարեկեցության բարձրացման և կայունության ապահովման կարևոր գործոն է: Ազգային արտադրությունը ստեղծում է ապրանքներ՝ մարդկանց կարիքները բավարարելու համար: Արտադրանքն իրացվում է բաշխումից հետո, որից էլ ստացված եկամուտները որոշում են հասարակության բարեկեցության մակարդակը: Այդ գործընթացի հիմքում դրվում են բաշխողական հարաբերությունները, այսինքն՝ մարդկանց միջև հարաբերությունները՝ կապված արտադրանքի ստեղծման մեջ հասարակության յուրաքանչյուր անդամի մասնաբաժնի հետ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում եկամուտները բաշխվում են այնպես, որ արտադրության

գործոնների յուրաքանչյուր սեփականատեր ստանալի է կամ ուտը՝ կախված այդ գործոնների նկատմամբ առաջարկից ու պահանջարկից, ինչպես նաև յուրաքանչյուր գործոնի սահմանային արտադրողականության յուրաքանչյուր:

Ավստրիացի տնտեսագետ Ֆրիդրիխ Վիգենը գրում է, որ մարդկանց միջև եկամտի բաժանումը և ըստ գործոնների բաշխումը՝ երկու տարբեր խնդիրներ են:⁸⁶ Յետևաբար, բաշխման հարաբերություններում ամերիկյան տնտեսագետներ Կ.Ռ. Մակկոնելը և Ս. Լ. Բրյուն տարբերում են եկամուտների ֆունկցիոնալ և անհատական բաշխումը:⁸⁷ Ֆունկցիոնալ բաշխումը համախառն եկամտի բաշխումն է արտադրության գործոնների՝ աշխատանքի, կապիտալի, բնական ռեսուրսների (պաշարների) և ձեռնարկատիրական ունակության յուրաքանչյուր սեփականատերերի միջև: Եկամուտի ֆունկցիոնալ բաշխումը ձևավորում է բնակչության սկզբնական եկամուտները՝ աշխատավարձը, տոկոսը, ռենտան և շահույթը: Եկամուտների անհատական բաշխումը պետության վերաբաշխողական միջամտության արդյունք է, որի միջոցով եկամուտներ են ունենում բնակչության այնպիսի խմբեր (օր.՝ անապահով մարդիկ, գործազուրկներ, անաշխատունակներ), որոնք չէին կարող այն ունենալ, եթե լինեին միայն ֆունկցիոնալ բաշխումը:

Իրական կյանքում հնարավոր չէ առաջնորդել «յուրաքանչյուրից իր կարողությունների չափով, յուրաքանչյուրին իր պահանջմունքների չափով» եկամուտների ձևավորման սկզբունքով, քանի որ մարդկանց հնարավորությունները, կարողությունները, ներուժը, այսինքն՝ ողջ մարդկային կապիտալը տարբեր է, հետևաբար մարդկանց աշխատանքն ունի տարբեր արժեքներ և վերջինս էլ առաջացնում է ճեղքվածք մարդկանց եկամուտների հավասար բաշխվածության միջև: ԶԶ բնակչության կենսամակարդակի վերլուծության հիմքում, առաջին հերթին, դրվում են բնակչության դրամական եկամուտները, դրանց ձևավորման և բաշխման հարաբերությունները:

⁸⁶ Визер Ф. Теория общественного хозяйства // Австрийская школа в политической экономии: К. Менгер, Е. Бем-Баверк, Ф. Визер. М., 1992. 458 С.

⁸⁷ Макконнел К.Р., Брю С.Л., Экономикс: принципы, проблемы и политика. В 2т. Т.1/Пер. С 11-го англ. Изд. –М.: Республика, 1992, с.139-141

Հասարակության կողմից ստեղծված ազգային եկամտի այն բաժինը, որը ստանում է յուրաքանչյուր սուբյեկտ՝ քաղաքացի, ընտանիք կամ տնային տնտեսություն, տնտեսության մեջ իր մասնակցության չափից կախված անվանում ենք բնակչության եկամուտ, որը տնտեսագիտորեն երկրի ողջ տնային տնտեսությունների եկամուտների ամբողջությունն է:

Ինչպես վկայում են աղյուսակ 2.2.1-ի տվյալները, վերջին տասնամյակում տեղի են ունեցել ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքի էական փոփոխություններ: Այսպես, դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2004թ. 85.7%-ից ավելացել է և 2015թ. կազմել 94.7%, իսկ ոչ դրամական՝ բնափրային մուտքերը համապատասխանաբար կազմել են 14.3% և 5.3%: Այս փոփոխությունները վկայում են հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Միայն 2010թ. դրամական եկամուտների տեսակարար կշիռն աննշան իջել է, իսկ ոչ դրամական եկամուտներինը՝ աննշան աճել, ինչը, մեր կարծիքով, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության արդյունք է:

Աղյուսակ 2.2.1

ՀՀ տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտների կառուցվածքը (մեկ շնչի հաշվով)⁸⁸

	2004	2005	2008	2009	2010	2012	2014	2015
Դրամական եկամուտներ, այդ թվում	14450*	15949	26866	28038	31553	39056	49535	52377
	85.7	85.2	90.8	91.8	91.6	92.9	94.1	94.7
1. Վարձու աշխատանք	7009	8221	14491	15328	16738	20453	25231	28800
	41.6	43.9	49.0	50.2	48.6	48.7	47.9	52.1
2. Ինքնազբաղվածություն	1158	1458	2385	1534	2193	3038	4870	4842
	6.9	7.8	8.1	5.0	6.4	7.2	9.3	8.8
3. Գյուղմթերքի և անասունի վաճառք	1603	1618	1771	1667	1181	2223	2648	2674
	9.5	8.6	6.0	5.5	3.4	5.3	5.0	4.8

⁸⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, ՀՀ ՄՎԾ, էջ 104, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ՄՎԾ 2012, էջ 122, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ՄՎԾ 2009, էջ 88, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ՄՎԾ, էջ 114,

4.Սեփական ու թյուր ունի (վարձակալ ու թյուրան վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	23	36	35	25	30	112	195	115
	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.3	0.4	0.2
5.Պետական թոշակներ և նպաստներ	1962	2253	4870	5615	5888	7192	8308	9284
	11.6	12	16.5	18.4	17.1	17.1	15.8	16.7
6.Տրանսֆերտներ	1817	1680	2692	2669	3927	4223	6126	4698
	10.8	9	9.1	8.7	11.4	10.0	11.6	8.5
Որից՝ Հայաստանում ապրող բարեկամներից	373	328	449	354	494	492	666	467
	2.2	1.8	1.5	1.2	1.4	1.1	1.3	0.8
Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	1431	1349	2243	2315	3431	3731	5452	4226
	8.5	7.2	7.6	7.5	10.0	8.9	10.4	7.6
7.Այլ եկամուտներ (արժեթղթերի վաճառք, փոխառություններ)	878	683	622	1200	1596	1815	2157	1964
	5.2	3.7	2.0	3.9	4.6	4.3	4.1	3.6
Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում	2406	2776	2710	2503	2881	2987	3088	2932
	14.3	14.8	9.2	8.2	8.4	7.1	5.9	5.3
1.Սննդամթերքի սպառում սեփական տնտեսություններ	2086	2494	2426	2230	2537	2696	2804	2660
	12.4	13.3	8.2	7.3	7.4	6.4	5.3	4.8
2.Անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	320	282	284	273	344	291	284	272
	1.9	1.5	1.0	0.9	1.0	0.7	0.6	0.5
Ընդամենը՝ ամբողջական եկամուտ	16856	18725	29576	30541	34434	42043	52624	55309
	100	100	100	100	100	100	100	100

Համարիչ ու մ` դրամ, հայ տարար ու մ` դրամական եկամուտների նկատմամբ %-ով

Նշենք, որ պատկերն այլ է քաղաքային և գյուղական բնակչության եկամուտների կառուցվածքում (տե՛ս հավելված 2.2.1): Եթե քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2004թ. 93.1%-ից 2015թ. հասել է 97.9%-ի, իսկ բնափրային եկամուտների տեսակարար կշիռը կազմել համապատասխանաբար 6.9% և 2.1%, ապա գյուղական բնակավայրերում նույն ցուցանիշները 2004թ. և 2015թ. համապատասխանաբար կազմել են 71.6%-ից 88.1% և 28.4%-ից 11.9%: Վերջինս վկայում է գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները, երբ շատ դեպքերում առկա են նաև բարտերային հարաբերությունները:

2004-2009թթ. փոփոխություններ են կատարվել բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում` վարձու աշխատանքից ստացված եկամուտների բաժնի ավելացման առումով: Վարձու աշխատանքից եկամուտների բաժինը 2004թ. 41.6%-ից ավելացել է և

2009թ. կազմել 50.2%, որի պատճառներից մեկը նվազագույն աշխատավարձի ամենամյա բարձրացումն է (բացառությամբ 2005թ.): Սկսած 2010թ-ից վարձու աշխատանքից եկամուտների տեսակարար կշիռն ունեցել է նվազման միտում մինչև 2014թ., իսկ 2015թ. ավելացել է և կազմել 52.1%: Դա բացատրվում է հիմնականում տրանսֆերտների բաժնի աճով մինչև 2014թ., 2015թ.-ին տրանսֆերտների բաժնի կտրուկ անկմամբ՝ 8.5%, ինքնազբաղվածության բաժնի աճով մինչև 2014թ. և 2015թ.-ից ինքնազբաղվածության բաժնի նվազմամբ, այլ եկամուտների բաժնի աճով մինչև 2014թ., 2015թ.-ից այլ եկամուտների բաժնի նվազմամբ:

Այդ գործընթացը տեղի է ունեցել միաժամանակ և քաղաքային, և գյուղական բնակավայրերում, թեև վերջինիս բաժինը մնում է շատ ցածր մակարդակի վրա՝ 2015թ. քաղաքային բնակավայրում կազմելով 59.1%, գյուղական բնակավայրում՝ 37.6% (տե՛ս հավելված 2.2.1): Սակայն է հիմնականում գյուղական բնակավայրերում շուկայական հարաբերությունների զարգացման ցածր մակարդակի և մանր բնամթերային տնտեսությունների գերակայության հետ:

Ցածր մակարդակի վրա են գտնվում սեփականությունից ստացված եկամուտները, ինչը վկայում է շուկայական, մասնավորապես, վարձակալական հարաբերությունների զարգացման դանդաղ տեմպերի և կորպորատիվ սեփականության ձևավորման գործընթացի դժվարությունների մասին:

Դրա հիմնական պատճառներից են. 1) 2008թ-ից քաղաքաշինական տեմպերի դանդաղեցումը, 2) բնակչության գնողունակության անկմամբ պայմանավորված՝ փոքր և միջին գործարանների գործունեության դանդաղեցումը և անկումը, ինչը հանգեցրեց վարձու տարածքների նկատմամբ պահանջարկի անկումն առաջարկի նկատմամբ:

Բնակչության եկամուտներում մեծանում է պետական թոշակների և նպաստների տեսակարար կշիռը՝ 2004թ. 11.6%, 2009թ. 18.4%: Սկսած 2010թ. դրսևորել է նվազման միտում մինչև 2014թ.՝ կազմելով 15.8%, իսկ 2015թ.-ից աճ է նկատվել՝ կազմելով 16.7%: Նվազման միտումը կապում ենք համաշխարհային ֆինանսատնտեսական հետևանքների հետ: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ բնակչության եկամուտների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ

են կազմել այլ երկրներից ստացվող տրանսֆերտները, որոնց նշանակությունը վերջին ժամանակաշրջանում մեծացել է: Այսպես, տրանսֆերտների տեսակարար կշիռը 2009թ. 8.7%-ից 2010թ. աճել է մինչև 11.4%՝ գերազանցելով նույնիսկ 2004թ. 10.8%-ը, իսկ 2014թ. այն կազմել է 11.6%՝ գերազանցելով 2010թ. 11.4%-ը: Սակայն նկատենք, որ տրանսֆերտների տեսակարար կշիռը զգալի նվազել է 2015թ. և կազմել 8.5%՝ ետ մնալով 2004թ. • տվյալներից: Նշենք, որ ավելի ցայտուն է այլ երկրներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշիռի նվազումը, որը պայմանավորված է արտաքին աշխարհի քաղաքական և տնտեսական քաղաքականություններով: Դրամական եկամուտներում տրանսֆերտների բարձր տեսակարար կշիռն առկայության վերաբերյալ բացատրման տարբեր մեկնաբանումներ կան՝ մի կողմից բնակչության «ուրիշի հաշվին ապրելու» սկզբունքը, մյուս կողմից հանրապետությունում ավելի ցածր վարձատրվելու և նվազագույն պահանջմունքները չբավարարելու հանգամանքը ստիպում է այլ երկրում աշխատելը, որն էլ արդեն կրում է շարունակական բնույթ և հանգեցնում ավելի բացասական երևույթի՝ աշխատանքային արտագաղթի ավելացմանը: Ընդ որում, դա ավելի շատ վերաբերում է գյուղական բնակչությանը, որի շրջանում նրանց տեսակարար կշիռը 2004թ. 5.3%-ից 2015թ. աճել է մինչև 7.9%:

Մեր կարծիքով, այս երևույթը կարող է հանգեցնել «հոլանդական հիվանդության», որը տնտեսության հետագա զարգացման համար կունենա զգալի բացասական հետևանքներ:

Բնակչության կենսամակարդակի գնահատման հաջորդ կարևոր ցուցանիշը տնային տնտեսությունների սպառողական ծախսերն են, որն ավելի վստահելի ցուցանիշ է եկամուտների տվյալների համեմատ, քանի որ վերջիններս հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից:

Աղյուսակ 2.2.2-ի տվյալներից երևում է, որ սննդամթերքի վրա կատարված ծախսերը «կլանում են» եկամուտների չափազանց մեծ մասը: 2004-2010թթ. սպառողական ծախսերի մոտ 53%-ը բաժին է ընկել սննդամթերքին, միայն վերջին չորս տարիներին դրանց տեսակարար կշիռն իջել է ոչ պարենային ապրանքներին և ծառայություններին ուղղվող սպառողական ծախսերի աճի հաշվին: Սա, իհարկե, վկայում է

բնակչության կենսամակարդակի բարելավման մասին, ընդ որում, այս ցուցանիշն առավել բարելավվել է քաղաքային բնակավայրերում: Պարզ է, որ մայրաքաղաքի բնակչության հաշվին քաղաքային բնակավայրերում կենսամակարդակն ավելի բարձր է, չնայած որ գյուղական բնակավայրերում վերոնշյալ ցուցանիշը ևս բավական կրճատվել է՝ 2004թ. 62.5%-ի դիմաց 2015թ. կազմել 50.9% (տե՛ս հավելված 2.2.2):

Աղյուսակ 2.2.2.

ՀՀ տնային տնտեսության ներքին միջին ամսական սպառողական ծախսերի կառուցվածքը (մեկ շնչի հաշվով)⁸⁹

	2004	2005	2008	2009	2010	2012	2013	2014	2015
Սպառողական ծախսեր, թվում՝	19251	2110	2887	2766	2864	3483	3678	4077	4286
այդ	*	9	8	7	6	2	7	0	7
1. Մննդամթերք	10797	1203	1498	1414	1484	1697	1762	1863	1870
		5	4	5	4	0	2	5	5
	56.1	57.0	51.9	51.1	51.8	48.9	47.9	45.7	43.6
2. Այլ կոհուլային խմիչքի գնում	163	179	227	238	272	242	235	244	237
	0.8	0.8	0.8	0.9	1.0	0.7	0.6	0.6	0.6
3. Ծխախոտի գնում	808	835	1019	1035	1009	1199	1289	1404	1414
	4.2	4.0	3.5	3.7	3.5	3.4	3.5	3.4	3.3
4. Ոչ պարենային ապրանքներ	2787	3014	4730	4294	4439	6159	6568	7442	8074
	14.5	14.3	16.4	15.5	15.5	17.7	17.9	18.3	18.8
5. Ծառայություններ, այդ թվում՝	4696	5046	7918	7955	8082	1026	1107	1304	1443
						2	3	5	7
	24.4	23.9	27.4	28.8	28.2	29.5	30.1	32.0	33.7
Առողջ ապահովություն	1500	1427	1035	888	1136	876	1407	1035	2659
Կրթություն	708	805	1221	833	141	440	511	214	488
Բնակ-կոմունալ	1146	1365	2635	2950	3008	4305	4501	5518	5689
Այլ ծառայություններ	1342	1449	3027	3284	3797	4641	4654	6278	5601

*Համարիչում՝ դրամ, հայտարարում՝ սպառողական ծախսերի նկատմամբ, %-ով

Այնուամենայնիվ, ըստ է. Էնգելի «աղքատության» ցուցանիշի «եթե ընտանիքն իր եկամուտների 50%-ից ավելին ծախսում է սննդի վրա, ապա համարվում է աղքատ»:⁹⁰

2004-2015թթ. բնակչության սպառողական ծախսերի կառուցվածքում նկատվել է ոչ պարենային ապրանքների և ծառայությունների բաժնի անընդմեջ աճ՝ սպառողական ծախսերի կառուցվածքում միջինը կազմելով համապատասխանաբար 16.5% և

⁸⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2009, ՀՀ ԱՎԾ, էջ 96, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2012, ՀՀ ԱՎԾ, էջ 133, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 124

⁹⁰ Engel E., *Das Rechnungsbuch der Hausfrau und seine Bedeutung im Wirtschaftsleben der Nation*. Berlin, 1881, p 41-42

28.6%-ը: Սպառողական ծախսերի ավելի որակական բնութագրիչ է (Սննդամթերք + Առողջապահություն + Կոմունալ ծախսեր) /Սպառողական ծախսեր հարաբերությունը, որը, կարծում ենք, ավելի բովանդակալից է ցույց տալիս բնակչության կենսագոյատևմանն ուղղվող ծախսերի իրական հատվածը, հատկապես, երբ կոմունալ ծախսերը և սննդամթերքի գները վերջին 2-3 տարում աճել են:

SSYUR-ի ընթացքում կատարված հարցումների հիման վրատրվել է կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը, ըստ որի 16 և բարձր տարիքի 33 քաղաքացիների համար առաջնային խնդիր է համարվում ոչ պարենային առաջնային կարիքների բավարարումը, 2008թ.-ից սկսած առաջնային խնդիր է նաև բնակարանային հիմնահարցը, իսկ տնային տնտեսություններում սննդի ապահովման խնդիրը կայուն կերպով մղվել է երկրորդային պլան, չնայած որ եկամուտների մոտ կեսն ուղղվում է հենց սննդամթերքին: Սակայն մտահոգիչն այն է, որ մարդկային կապիտալ ստեղծող հիմնական տարրերը գերխնդիր չեն համարվել, որն իսկ արդեն նպաստում է 33 բնակչության կենսամակարդակի, կյանքի որակի դանդաղ տեմպերով բարելավմանը (տե՛ս հավելված 2.2.3):

Հանրապետությունում վերջին ժամանակահատվածում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման գործընթացում հասարակության ներսում նկատվում է շերտավորման բարձր աստիճան՝ բնակչության եկամուտների և սպառման անհավասարաչափության բարձր մակարդակ, որը թույլ է տալիս դատել նաև երկրում տնտեսական անհավասարության մակարդակի մասին:

Համաձայն աղյուսակներ 2.2.3-ի և 2.2.4-ի տվյալների՝ 2004-2008թթ. 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը նվազման միտում է դրսևորել՝ 10.6 անգամից հասնելով 7.8 անգամի, 2009թ.-ից այդ հարաբերակցությունը գնալով աճել է և 2015թ. կազմել 8.4 անգամ, իսկ ծախսերի մասով 2004-2009թթ. 5.8 անգամից դարձել 5.1 անգամ, 2010թ.-ից դրսևորել չնչին չափով աճման միտում՝ 2015թ. կազմելով 5.6 անգամ: 1996թ. տվյալներով առավել հարուստ խավի 20%-ի և առավել աղքատ խավի 20%-ի եկամուտների հարաբերակցությունը մոտ 39 էր,

իսկ երբ այդ թիվն անցնում է 30-ից, ապա երկիրը սոցիալական առումով հայտնվում է պայթուցավտանգ իրավիճակում:⁹¹

Աղյուսակ 2.2.3

Բնակչության եկամուտների բաշխման անհավասարության ցուցանիշները⁹²

ՏԱՐԻՆԵՐ	2004	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը	10.6	7.8	8.0	8.0	8.0	8.5	8.2	8.8	8.4
10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը	20.8	14.1	14.5	14.2	14.8	15.9	15.0	16.6	16.4
Ձիևի գործակից	0.395	0.339	0.355	0.362	0.371	0.372	0.372	0.373	0.374

Բնակչության «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցն ըստ սպառողական ծախսերի 2004թ. կազմել է 9.5 անգամ, 2010թ.՝ 7.9 անգամ, իսկ 2015թ. կազմել 9.0 անգամ, մինչդեռ ըստ եկամուտների 2004թ.՝ 20.8 անգամ, 2010թ. կազմել 14.5 անգամ, իսկ 2015թ.՝ 16.4 անգամ:

Եթե հաշվի առնենք նաև տնտեսության առնվազն 35%-անոց ստվերայնությունը⁹³ և եկամուտներ թաքցնելը, ապա ապահով բնակչության եկամուտները կգերազանցեն անապահով բնակչության եկամուտներին ավելի քան 22.5 անգամ: Տեղին է հիշել, որ այդ գործակիցը համարվում է «ընդունելի», երբ նրամեծությունը չի գերազանցում 6-8 անգամը:⁹⁴ Նույնը վերաբերում է նաև ամենաապահով և ամենաանապահով բնակչության ծախսերի հարաբերակցությանը (տե՛ս աղյուսակ 2.2.4):

Գոյություն ունեն որոշակի օրինաչափություններ և սահմաններ բնակչության առանձին խմբերի միջև եկամուտների կամ սպառման բաշխման ժամանակ:

Աղյուսակ 2.2.4

⁹¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, ՀՀ ԱՎԾ, էջ 78

⁹² Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. Մարտի 27-ի N442-Ն որոշում, էջ 112, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, Եր. 2016, էջ 128

⁹³ © Transparency International, 2016 <https://www.transparency.org/cpi2015/>

⁹⁴ Մարկոսյան Մ. «Բնակչության դրամական եկամուտների ձևավորման և բաշխման հիմնախնդիրները ՀՀ-ում», Եր. 2008, էջ 184

Բնակչության սպառման անհավասարության ցուցանիշները⁹⁵

ՏԱՐԻՆԵՐ	2004	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության ծախսերի հարաբերակցությունը	5.8	5.2	5.1	5.2	5.4	5.2	5.2	5.6	5.6
10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության ծախսերի հարաբերակցությունը	9.5	8.0	7.9	8.1	8.5	8.2	8.2	9.1	9.0
ՁիՆԻԻ գործակից	0.260	0.242	0.257	0.265	0.267	0.269	0.271	0.277	0.279

Շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևորագույն գործառնություններից է պետական կարգավորման տարբեր լծակների և մեխանիզմների միջոցով հասարակության ներսում, բնակչության տարբեր շերտերի միջև եկամուտների կամ սպառման բաշխման որոշակի սահմանի ապահովումը: ՁիՆԻԻ գործակիցը բնակչության եկամուտների կամ սպառման բաշխման օբյեկտիվ գնահատականն է:

ՀՀ-ում եկամուտների համակենտրոնացման ՁիՆԻԻ գործակիցը 2004թ. եղել է բավականին բարձր և կազմել 0.395: Թեև 2008թ.-ին ցուցանիշն աննշան բարելավվել է, այնուամենայնիվ 2009թ.-ից դրսևորել է աճման միտում՝ 2015թ. կազմելով 0.374: Նույն օրինաչափությամբ է փոփոխվել ՁիՆԻԻ գործակիցն ըստ սպառման՝ 2004թ. կազմելով 0.260, 2015թ.՝ 0.279: Ինչպես երևում է 2.2.3 և 2.2.4 աղյուսակների տվյալներից, ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարությունն ավելի խորն է՝ սպառման բաշխման համեմատ: Դա բնական է՝ հաշվի առնելով եկամուտները թաքցնելու հակվածությունը:

Սկսած 2009թ.-ից եկամուտների և սպառման բաշխման անհավասարաչափության գործընթացն ավելի է ծավալվել, որի պատճառներից մեկն էլ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էր, որի արդյունքում էլ, փաստորեն, նկատվում է առավել ապահովների և առավել անապահովների միջև խոր «ճեղքվածքը»: Սա վկայում է ետճգնաժամային տարիներին վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության բնույթի փոփոխության մասին:

⁹⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, ՀՀ ԱՎԾ, էջ 57, էջ 117, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2012, ՀՀ ԱՎԾ, էջ 61, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2010, ՀՀ ԱՎԾ, էջ 57, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2006, ՀՀ ԱՎԾ, էջ 40, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, Եր.2016 էջ 128

Մյուս կողմից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իրական կյանքում որոշակի պատճառներից ելնելով չի կարող լինել բացարձակ արդարություն և հավասարություն, և հաշվի առնելով, որ տնտեսագիտության տեսության մեջ ևս գոյություն ունի ամենահարուստ և ամենաաղքատ բնակչության խմբերի եկամտի կամ սպառման բաշխման «թույլ ատրեյի (ընդունելի)» սահմանի՝ 0.15-0.17 միջակայքում՝⁹⁶ գաղափարը. կարող ենք նշել որ, ՀՀ-ում գործունենք «անարդար» հասարակության հետ: Ըստ էության, Ձիևիի բարձր գործակիցը խորացնում է ապահով և անապահով բնակչության խմբերի միջև հակասությունները, ինչը կարող է հանգեցնել սոցիալական ցնցումների և խաթարել սոցիալական համագործակցությունը գործատուների ու վարձու աշխատողների միջև և վտանգել պետության տնտեսական հիմքերը:

Հետևաբար, իզուր չէ, որ Ձիևիի համակենտրոնացման գործակիցը ներառված է երկրի տնտեսական անվտանգության մակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգի մեջ: Միաժամանակ, հետազոտությունները կատարելիս չմոռանանք, որ վիճակագրությամբ ներկայացված տվյալները պետք է ընդունել որոշակի վերապահումներով՝ նկատի առնելով հատկապես բարձր եկամուտները թաքցնելու առանձին անհատների հակվածությունը:

ՀՀ բնակչության անապահով և ապահով խավերի բեռնացվածությունը պայմանավորված է եկամուտների անհավասարությամբ, հետևաբար գտնում ենք, որ բնակչության եկամուտների հավասար բաշխման և հասարակության շերտավորման որոշակի չափով մեղմման հնարավորությունների նախադրյալը կայուն տնտեսական աճի ապահովումն է:

ՀՀ բնակչության կենսամակարդակի գնահատումն ամբողջական դարձնելու համար, անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ տնտեսության առկա վիճակը: Այդուհանդերձ 2.2.5-ի տվյալները ցույց են տալիս որ 2004-2007թթ. տնտեսությունն ապահովել է կայուն տնտեսական աճ՝ ունենալով աճման միտում: Վերջինիս վրա իր ազդեցությունն է թողել նաև գործազրկության մակարդակի կրճատումը, անվանական աշխատավարձի ավելացումը, միգրացիայի ծավալների ավելացումը:

⁹⁶ Մարկոսյան Ա., Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև, Եր., «Ձանգակ-97», 2004, էջ 221

Նույն ժամանակահատվածում զգալի տեմպերով ավելացել է 1 շնչի հաշվով ՅՆԱ-ն՝ 2004թ. 1112.8 ԱՄՆ դոլարից 2007թ. կազմելով 2853.3 ԱՄՆ դոլար: Համախմբված բյուջեից սոցիալական ծախսերի և մասնավոր տրանսֆերտների ավելացման հետ միասին 2004-2007թթ. նկատվել է բնակչության աղքատության մակարդակի կրճատում, որն էլ որոշակիորեն ազդել է բնակչության բարեկեցության վրա:

Աղյուսակ 2.2.5

ՅՆԱ ցուցանիշները 2004, 2007-2015թթ.⁹⁷

* Սկսած 2015թ.-ից ՅՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է՝ համաձայն Ազգային

	2004	2007	2008	2009	2010	2011	2012*	2013*	2014*	2015
Անվանական ՅՆԱ (մլրդ.դր.)	1907.9	3149.3	3568.2	3141.7	3460.2	3777.9	4266.5	4555.6	4828.6	5032.1
Անվանական ՅՆԱ (մլն. ԱՄՆ \$)	-	9206.3	11662.0	8648.0	9260.3	10142.1	10619.4	11121.3	11609.5	10529.1
Իրական ՅՆԱ-ի տարեկան %-ային աճ	10.5	13.7	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.3	3.6	3.0
1 շնչի հաշվով արտադրված ՅՆԱ հազ. դր.	593.6	976.1	1103.3	968.5	1062.7	1252.8	1410.8	1507.5	1602.2	1674.8
1 շնչի հաշվով արտադրված ՅՆԱ ԱՄՆ \$	1112.8	2853.3	3606.1	2666.1	2844.0	3363.2	3511.6	3680.1	3852.1	3504.3
ԱՄՆ \$-ի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	458.0	342.08	305.97	363.28	373.66	372.50	401.76	409.63	415.92	477.92

Հաշիվների Համակարգ 2008 միջազգային ստանդարտի: Ըստ որի վերանայվել է նաև 2012-2014թթ. ՅՆԱ ցուցանիշները:

Ակնհայտ է՝ ՀՀ տնտեսության նախնական չի մնացել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից: Վերջին տարիների շարունակական բարձր աճի դիմաց 2009թ. առաջին անգամ Հայաստանում գրանցվել է տնտեսական անկում: Ըստ էության, անկումը սկսվել էր դեռևս 2008թ-ի վերջին, որն առավել արագացավ 2009թ.: Արդյունքում ակնկալվող բարձր տնտեսական աճի դիմաց ՀՀ-ում գրանցվել է ընդամենը 6.9% աճ, իսկ արդեն 2009թ. գրանցվել 14.1% անկում, որի արդյունքում գործազրկության մակարդակն ավելացել է աշխատատեղերի կրճատման հետևանքով, աղքատության մակարդակը բարձրացել է: Եվ միայն 2010թ-ից սկսած նկատվել է տնտեսական աճի դանդաղ վերականգնում՝ հավելաճը նախորդ տարվա նկատմամբ կազմելով 2.2%, 2011թ.՝ 4.7%: Բավականին զգալի էր 2012թ. ՅՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2007-2008թթ. մակարդակին: 2013թ.-ից սկսած տնտեսության զարգացման

⁹⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, ՀՀ ԱՎԾ

միտումները շարունակվել են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով և 2014թ. կազմել 3.5%, իսկ 2015թ. ՀՆԱ-ի աճի միտումները գրանցվել են դանդաղ տեմպերով՝ կազմելով 3%:

2015թ. ՀՆԱ-ն երկրի բնակչության մեկ շնչի հաշվով կազմել է 1.674.800 դրամ կամ 3504 ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, 2011թ. ցուցանիշը կազմել էր 3363 ԱՄՆ դոլար, «նախաճգնաժամային» 2008թ. 3606 ԱՄՆ դոլար:

Երկրների բնակչության բարեկեցության աստիճանը համեմատելու համար ամենատարածված ցուցանիշներից մեկը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն է: Հիմք ընդունելով ՀԲ-ի տվյալները՝⁹⁸ կարող ենք փաստել, որ տվյալ ցուցանիշով ՀՀ-ն (ըստ ՀԲ-ի տվյալների 1 շնչի հաշվով ՀՆԱ 2015թ. կազմել է 3500\$) ավելի վատ վիճակում է գտնվում հարևան երկրների շարքում՝ մոտեռակի անգամ գիջելով ՌԴ-ին (9057\$) և Ղազախստանին (10508\$), կրկնակի անգամ՝ Ադրբեյջանին (5496\$) և Բելառուսին (5740\$), շատ չնչին տարբերությամբ ետ է մնում հարևան Վրաստանից (3796\$), իսկ Մոլդովային (1842\$) գերազանցում է 1658\$-ով: Այսպես, թեև ՀՀ-ում զգալի տեմպով ավելացել է 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն 2000-ական թթ.-ի համեմատ, սակայն դիտարկվող երկրների շրջանում ՀՀ-ում մեկ շնչի հաշվով աշխատանքի արդյունավետությունը դեռևս գտնվում է «ոչ բարվոք» վիճակում: Նախատեսվում է, որ 2025թ.-ին 2011թ.-ի համեմատ, երկրի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն գրեթե կեռապատկվի՝ կազմելով շուրջ 10.000 ԱՄՆ դոլար⁹⁹:

ՀՀ-ում տնտեսական նոր աճն էականորեն չի բարձացրել բնակչության հիմնական զանգվածի կենսամակարդակը, այսինքն՝ չի նպաստել աղքատ և անապահով խավի էական կրճատմանը: Այդ մասին է վկայում ՀՆԱ նկատմամբ աղքատության էլ աստիկության գործակիցը, որը ցույց է տալիս աղքատության մակարդակի փոփոխությունը՝ կախված ՀՆԱ-ի կամ տնտեսական անկման/աճի յուրաքանչյուր տոկոսի փոփոխությունից (տե՛ս հավելված 2.2.4):

Հավելված 2.2.4-ի տվյալները վկայում են, որ 2004-2008թթ. էլ աստիկության գործակիցը կազմել է -0.57, որը նշանակում է, որ նույն թվականներին արձանագրված տնտեսական աճի

⁹⁸ The World Bank. <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD>

⁹⁹ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. Մարտի 27-ի N442-Ն որոշում, էջ 29

յուրաքանչյուր տոկոսային կետն աղքատության ընդհանուր մակարդակը նվազեցրել է 0.57%-ային կետով: Ընդ որում, այդ գործակիցն առավել բարձր է, բացի Երևան քաղաքից, այլ քաղաքային բնակավայրերում:

2008-2010թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում տնտեսական անկման (կամ ՅՆԱ-ի նվազման) յուրաքանչյուր %-ային կետի նկատմամբ աղքատության ընդհանուր մակարդակը բարձրացել է 2.35%-ային կետով, 2008-2012թթ.՝ 11.29%-ային կետով: 2008-2013թթ. գրանցվել է ՅՆԱ-ի նկատմամբ աղքատության էլաստիկության դրական գնահատական, որի արդյունքում տնտեսական աճի յուրաքանչյուր %-ային կետ աղքատության մակարդակն ավելացրել է 7.62%-ային կետով (2013թ.ՅՆԱ-ի աճը 2008թ. համեմատ կազմել է 2%, աղքատության մակարդակը գերազանցել է 2008թ. գրանցված աղքատության մակարդակը 15.1%-ով):

2014թ.-ին 2008թ.-ի համեմատ ՅՆԱ-ի աճը կազմել է 5.45%, իսկ աղքատության մակարդակը բարձր է եղել 2008թ. աղքատության մակարդակից 7.9%-ով, ինչի արդյունքում 2008-2014թթ. գրանցվել է ՅՆԱ-ի նկատմամբ աղքատության էլաստիկության դրական գնահատական (2014թ. 2008թ.-ի նկատմամբ տնտեսական աճի յուրաքանչյուր %-ային կետ աղքատության մակարդակն ավելացրել է 1.45%-ային կետով): Սակայն, 2013-2015թթ. տնտեսական աճը նախադրյալներ է ստեղծել բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար (2013թ.-ի համեմատ ՅՆԱ-ն աճել է 10.23%-ով, իսկ աղքատության մակարդակը կրճատվել է 8.03%-ով), որի արդյունքում 2013թ.-ի նկատմամբ 2015թ. տնտեսական աճի յուրաքանչյուր %-ային կետ աղքատության մակարդակն իջեցրել է 0.78%-ային կետով (տես հավելված 2.2.4):

Այսպիսով, 2015թ. արձանագրված 3% տնտեսական աճը, այնուամենայնիվ, չի բավարարում աղքատության նվազմանը: Տնտեսական աճի հետևանքով աղքատները շահում են, սակայն ավելի քիչ՝ քան հարուստները, քանի որ վերջիններս են հիմնականում օգտվում տնտեսական աճի արդյունքներից: Իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով, երբ տնտեսությունն անկում է ապրում, ավելի շատ տուժում են հենց աղքատ անապահով

խավերը, իսկ հարուստներն անգամ ճգնաժամի պայմաններում շարունակում են հարստանալ: Հետևաբար, կատարված վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ-ի համար խիստ կարևոր է ոչ միայն կայուն տնտեսական աճի ապահովումը, այլև դրա արդյունքի այնպիսի բաշխումը, որը կհանգեցնի ինչպես աղքատների և անապահովների տնտեսարար կշռի կրճատմանը, այնպես էլ հարուստների-աղքատների եկամուտների բևեռացման թուլացմանը:

2.3 ՀՀ բնակչության աղքատության մակարդակի առկավիճակը և անապահով խալի դրամական եկամուտների գնահատումը

Ներկայիս ապրանքների և ծառայությունների լիության և բազմազանության մեջ անապահովությունը, աղքատությունը մարդկության ամենաամտահոգիչ հիմնախնդիրն է: Աշխարհի բոլոր երկրների համար, անկախ նրանց զարգացման մակարդակից, զանգվածային աղքատությունը, անապահովությունը, սոցիալական մերժվածությունը, եկամուտների անհավասար բաշխումը և սոցիալական անպաշտպանությունը կա և կլինի համընդհանուր հիմնահարց և լուծման անհրաժեշտ խնդիր:

Ըստ Հազարամյակի զարգացման նպատակների ծրագրի՝ առաջնային նպատակ է շարունակում մնալ ծայրահեղ աղքատության և սովի կրճատումը: Չնայած նրան, որ մի շարք երկրներում և տարածաշրջաններում եկամուտների բաշխման անհավասարության և աղքատության մակարդակն արդեն իսկ կիսով չափ կրճատվել է 1990-2011թթ. միջև ընկած ժամանակահատվածում (1990թ. օրական 1.25 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտով մարդկանց տնտեսարար կշիռը 36%-ից կրճատվել է և 2011թ. կազմել 15%), այնուամենայնիվ աշխարհում ծայրահեղ աղքատությունն այսօր էլ մնում է քաղաքակրթության դժվար լուծելի խնդիր և 2015թ. 836 միլիոն մարդ շարունակում է ապրել օրական 1.25 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտով, սոված, ապրուստի համար անհրաժեշտ տարրական միջոցների՝ սննդի, ջրի, էլեկտրաէներգիայի սպառման հնարավորություններից և նորմալ սանիտարական պայմաններում ապրելու հնարավորություններից զրկված, իսկ աշխատող մարդկանց կեսից ավելին աշխատում է անապահով պայմաններում:¹⁰⁰ ՀԲ-ն բարձրացնելով աղքատության

¹⁰⁰ The Millennium Development Goals Report 2015, United Nations, NY 2015, p. 4-15

շեմը 1.25 ԱՄՆ դոլարից 1.90 ԱՄՆ դոլարի՝ աշխարհում աղքատների թվաքանակը էական կավելանա:

Մյուս կողմից, Երկրագնդի 85 գերհարուստ մարդիկ տնօրինում են 1.7 տրիլիոն դոլար հարստություն, որը հավասար է աշխարհի աղքատ բնակչության 50%-ի ունեցվածքին: Ներկայումս աշխարհում կա 1453 միլիարդատեր, որոնց ընդհանուր կարողությունը 5.5 տրիլիոն դոլար է կազմում, որը կարող է բավականացնել ամբողջ աշխարհում աղքատության մակարդակի կրճատմանը:¹⁰¹

Ճայրահեղ աղքատությունն տիրում է այն տարածաշրջաններում, որտեղ վատ առողջությունը և թերուսումը գրկում են մարդկանց արդյունավետ աշխատանքից, բնական ռեսուրսները սպառված են կամ փչացած, կոռուպցիայի, հակամարտությունների և վատ կառավարման արդյունքում հասարակական ռեսուրսները վատնվում են, ինչպես նաև թուլանում են սոցիալական անվտանգության ապահովման հիմքերը, որոնք էլ առաջացնում են հիասթափություն և անձնական ներդրումներ կատարելու համար: Յետևաբար, մարդկությունը պետք է պայքարի աղքատության դեմ սկսած վերոնշյալից:

Եթե տարիներ առաջ «աղքատություն» հասկացությունը, առաջին հերթին, կապվում էր արժանավայել կյանքի համար անհրաժեշտ անբավարար եկամուտների հետ, ապա այսօր այն կապվում է այնպիսի կարևոր ցուցանիշների հետ, ինչպիսիք են՝ առողջությունը, կրթությունը, սնունդը, այսինքն՝ ցուցանիշներ, որոնք գնահատում են մարդկային զարգացման աստիճանը: Իսկ 2000թ-ին աղքատության նկարագրությանն ավելացան նաև բնակչության խոցելիության կամ սոցիալական տարատեսակ ռիսկերից անպաշտպանվածության, ձայնազրկության, անզորության և իշխանությունից զրկվածության ցուցիչները:¹⁰² Յետևաբար, աղքատությունն ավելի գլոբալ երևույթ է, հիմնախնդիր է, որին պետք է ցուցաբերել նաև գլոբալ մոտեցում:

ՅՅ-ում աղքատությունը և բնակչության եկամուտների անհավասարությունը կարևոր քաղաքական, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ են, ընդ որում, եթե անհավասարությունը բնութագրում է հասարակությանն ամբողջությամբ, ապա աղքատությունը վերաբերում է բնակչության մի մասին, իսկ

¹⁰¹ WORKING FOR THE FEW. Political capture and economic inequality 178 OXFAM BRIEFING PAPER 20 JANUARY 2014 <http://www.ipu.org/splz-e/unga14/oxfam.pdf>

¹⁰² «Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ» Մարդկային զարգացման ազգային զեկուլյց2009, Հայաստան 2009 էջ 59

վերջինիս ծավալները պայմանավորված են երկրի տնտեսական զարգացման մակարդակով:

Դեռևս 1988-1991թթ. ընկած ժամանակահատվածում արդյունաբերությանը (որի արդյունքում շարքից դուրս եկավ հանրապետության արտադրական ներուժի 1/3-ը, գոհվեց ավելի քան 25000 մարդ, իսկ մի քանի տասնյակ հազար մարդ խեղանդամվեց), դարաբաղյան հակամարտությանը, փախստականների ներգաղթը Չայաստան և մի շարք այլ արտատնտեսական գործոններ հիմք հանդիսացան ՀՀ-ում աղքատության մակարդակի աճին: 90-ականներին ՀՀ-ում սկսվեցին արմատական վերափոխումներ՝ հայտնվելով տնտեսական և էներգետիկ ճգնաժամի, նաև տրանսպորտային և ռազմական շրջափակման մեջ, որոնց հետևանքով էլ ոչ գյուղատնտեսական հատվածում կրճատվեցին մոտ 645 հազար աշխատատեղ: Բնակչության սոցիալական, տնտեսական և կենցաղային ծանր պայմանները սկիզբ դրեցին մարդկանց հսկայածավալ արտագաղթի գործընթացին: Չնայած որ 1994թ.-ից ՀՀ տնտեսության տնտեսական աճի բարձր տեմպեր (1994-2002թթ.՝ տարեկան միջինը 6.68%¹⁰³) թույլ տվեցին կրճատել աղքատության մակարդակը, այսօր արտատնտեսական և ներտնտեսական, ինչպես նաև բարոյահոգեբանական որոշակի գործոններից ելնելով՝ աղքատ բնակչությունը Չայաստանում շարունակում է մեծ տեսակարար կշիռ կազմել: Այստեղ կարևորն այն է, որ աղքատության բարձր մակարդակը պայմանավորված է ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական, հասարակական պատճառներով:¹⁰⁴

Հիմք ընդունելով 2011թ. հոկտեմբերի մարդահամարի տվյալները՝ ՀՀ մշտական բնակչությունը 2016թ.-ի տարեսկզբին կազմել է 2.998.600 մարդ, նույն թվականին աղքատության մակարդակը կազմել է բնակչության 29.8%: Ստացվում է, որ բնակչության մոտ ամեն երրորդն աղքատ է (շուրջ 893,583 մարդ): Համեմատության համար նշենք, որ 2015թ. ԱՄՆ-ում բնակչության աղքատության մակարդակը կազմել է 13.5% (բնակչությունը 2015թ. վերջին կազմել է 324,118,787 մարդ), իսկ ԱՊՀ երկրներից ՌԴ-ում 13.3% (բնակչությունը 2015թ. վերջին կազմել է 144,097,000 մարդ), Ղազախստանում՝ 2.7% (բնակչությունը 2015թ. վերջին կազմել է 17,544,000 մարդ),

¹⁰³ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն, Եր., Տոներ 2004թ., էջ 20

¹⁰⁴ Թադևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից: Նորավանք գիտակրթական հիմնադրամ,-Եր.: Բավիդ, 2003, էջ 10

Բել առուսում 5.1% (բնակչությունը 2015թ. վերջին կազմել է 9,513,000 մարդ), Վրաստանում՝ 14.8% (բնակչությունը 2015թ. վերջին կազմել է 3,679,000 մարդ):¹⁰⁵

ՀՀ-ում ներդնելով տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը՝ 1996թ.-ից իրականացվել է աղքատության մակարդակի գնահատում, և մինչ օրս կիրառվել աղքատության գնահատման երեք մեթոդաբանություն: Ըստ մինչ 2004թ. կիրառվող մեթոդաբանության՝ նվազագույն սպառողական զամբյուղի կամ վերջինիս արժեքային արտահայտությամբ աղքատության ընդհանուր գծի հիմքն էր հանդիսանում պարենային զամբյուղը, որոնց հաշվարկման համար էլ օգտագործվում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից զարգացող երկրների համար առաջարկվող մեկ շնչի հաշվով օրական 2100 կկալ սպառման էներգետիկային մակարդակը: 2004թ.-ից աղքատության գնահատման մեթոդաբանությունը որոշակի փոփոխություններ կրեց: Աղքատության պարենային գիծն արդեն հաշվարկվում էր՝ ըստ տարբեր ժողովրդագրական խմբերի համար անհրաժեշտ պարենամթերքի սպառման օրական միջին տարբեր կալորիականությամբ: Սա հիմնված է սպառման ազրեգատի ավելի ընդարձակ հաշվարկման վրա՝ ներառելով բացի ստանդարտ պարենային և ոչ պարենային բաղադրիչներից նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը՝ տնային տնտեսությունների կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքներից ստացվող ծառայությունների արժեքը: Ըստ այս մեթոդաբանության՝ գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով սպառումը՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները՝ նախկինում կիրառվող մեկ շնչի հաշվով սպառման գնահատման մոտեցման փոխարեն: Եվ 2009թ. ՀԲ-ի փորձագետների աջակցությամբ կիրառվել է աղքատության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանություն, ըստ որի՝

¹⁰⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 24
U.S. Census Bureau. *Income and Poverty in the United States:2015, Current population reports, September 2016* p. 12
©Copyright Worldometers.info <http://www.worldometers.info/world-population/us-population/>
©2016 The World Bank Group, <http://http://www.worldbank.org/>
©2011Forbes.comLLC™. http://forbes.kz/news/2013/04/26/newsid_26367?mark=%D1%83%D1%80%D0%BE%D0%B2%D0%B5%D0%BD%D1%8C%20%D0%B1%D0%B5%D0%B4%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8

ձևավորվել է նոր նվազագույն պարենային զամբյուղ, որն էլ հիմք է ծառայում ծայրահեղ (պարենային) և ընդհանուր (ստորին և վերին) աղքատության գծերը հաշվարկելու համար, այսինքն՝ կիրառվել է առաջնային կարիքների բավարարման արժեքի մոտեցումը: Ընդ որում, հին (2004-2008թթ) մեթոդաբանությամբ հաշվարկված արդյունքները համահունչ են 2009թ.-ին վերանայված մեթոդաբանությամբ ստացված արդյունքների հետ:

Ինչպես երևում է աղյուսակ 2.3.1-ից 2015թ. 2004թ-ի համեմատ աղքատության մակարդակը նվազել է մոտ 23.7%-ային կետով (2004թ.53.5%-ից կրճատվելով 2015թ. կազմել է 29.8%): Ծայրահեղ աղքատության մակարդակը ևս նվազման միտում է դրսևորել 2.4%-ային կետով: Նկատենք՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից տուժել է հիմնականում ՀՀ բնակչության աղքատ և անապահով խավը: Եթե 2008թ. աղքատության մակարդակը կազմել է բնակչության 27.6%-ը, ապա 2010թ.-ին այն կազմել է 35.8%, աղքատության մակարդակն աճել է 29.7 %-ով, և նրանցից մոտ ամեն հինգերորդը՝ 21.3% կազմել է շատ աղքատ բնակչությունը, իսկ 3%-ը՝ ծայրահեղ աղքատ: ճգնաժամային երկու տարվա ընթացքում շուրջ 270 հազար մարդ դարձել է աղքատ՝ նրանց քանակը հասնելով մոտ 1,2 մլն-ի (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով): Նույն ժամանակաշրջանում շուրջ 290 հազարը դարձել է շատ աղքատ՝ շատ աղքատների թվաքանակը հասնելով 694 հազար մարդու: Եվ միայն 2010թ.-ից հետո աղքատության մակարդակը դրսևորել է նվազման միտում՝ 2013թ. կազմելով 32.0%, 2014թ՝ .30%, իսկ 2015թ. 2014թ.համեմատ կրճատվել է 0.2%-ային կետով՝ կազմելով 29.8%:

Աղյուսակ 2.3.1

ՀՀ բնակչության աղքատության գնահատման ցուցանիշներն ըստ 2009թ.-ի մեթոդաբանության¹⁰⁶

Ցուցանիշների անվանումը	2004*	2008*	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Աղքատության մակարդակ (%)	53.5	27.6	34.1	35.8	35.0	32.4	32.0	30.0	29.8
Ծայրահեղ աղքատության մակարդակ (%)	4.4	1.6	3.6	3.0	3.7	2.8	2.7	2.3	2.0
Աղքատության խորություն (%)	7.4	5.1	7.8	8.1	7.9	5.6	5.9	4.5	4.7

¹⁰⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն, ՀՀ ԱՎԾ 2008-2016

Աղքատության սրության %	2.4	1.4	2.4	2.5	2.4	1.6	1.7	1.3	1.3
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ (դրամ)	12651	17644	17483	19126	21306	21732	22993	23384	24109
Աղքատության ստորին ընդհանուր գիծ (դրամ)	20704	24388	25217	27410	29856	30547	32318	33101	34234
Աղքատության վերին ընդհանուր գիծ (դրամ)	25386	29903	30920	33517	36158	37044	39193	40264	41698

*Համադրելիության նպատակով ցուցանիշները վերահսկվողներ են ըստ 2009թ.-ի կիրառված մեթոդաբանության

Թեև ՀՀ-ում վերջին ժամանակահատվածում նկատվում էր տնտեսական աճ, բնակչության աղքատության, ինչպես նաև ծայրահեղ աղքատության մակարդակի նվազում, այդուհանդերձ, ՀՀ բնակչության կենսամակարդակը չի բարելավվել, քանի դեռ ներկայումս յուրաքանչյուր երրորդ մարդն աղքատ է, դեռ ավելին, ամկա են բնակչության անապահով, սոցիալապես խոցելի ստվար խավ: Ինչպես արդեն նշել ենք, «անապահով խավ» հասկացությունն ավելի ընդգրկուն է, որի մեջ կարելի է ներառել ինչպես բնակչության աղքատ խավին, այնպես էլ ոչ աղքատ խավին:

Տեսականորեն «աղքատության» հասկացության բոլոր բնորոշումները և հատկանիշները կարելի է վերագրել անապահով խավին, սակայն գոյություն ունի բնակչության մի հատված, ովքեր աղքատ չեն, բայց և անապահովված էլ չեն, այսինքն՝ գտնվում են բնակչության աղքատ և միջին խավի միջև: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում գնահատել ինչպես ՀՀ բնակչության աղքատ խավի իրական վիճակը, այնպես էլ բնակչության անապահով խավի իրական վիճակը:

Այսպես, եթե, ըստ պաշտոնական վիճակագրության, աղքատները 2015թ. կազմել են ՀՀ բնակչության 29.8%, ապա ոչ աղքատները՝ բնակչության 70.2%, որոնց մեջ էլ հենց ներառված է անապահով բնակչության մի մասը, որը գտնվում է աղքատության շեմին, այսինքն «մեկ քայլով վերև» աղքատներից:

ՄԱԿ-ի վրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից անցկացված «Աղքատության չափման հեռանկարները» սեմինարում¹⁰⁷ խոսվում է սոցիալական մերժման մասին, որին միասնական գնահատական դեռևս տրված չէ: Այն ուսումնասիրվում է և օբյեկտիվ, և սուբյեկտիվ

¹⁰⁷ Семинар “Перспективы измерения бедности” Измерение перекрестных неравенств с помощью индекса социального отторжения: предложение для Европы и Центральной Азии, Европейская Экономическая Комиссия, Организаци Объединенных Наций, Конференция Европейских Статистиков, 2013, Женева, Швейцария, 12с..

ցուցանիշներով: Այսպես, սոցիալական մերժումն ընդգրկում է 3 փոխկապված սոցիալական ոլորտները՝ տնտեսական կյանքից դուրս մնալը, սոցիալական ծառայություններից դուրս մնալը, քաղաքացիական հանրությունից դուրս մնալը: Սոցիալական մերժման ինդեքսի հաշվարկման համար հիմք է ընդունվում այս երեք ոլորտները՝ յուրաքանչյուր ոլորտներառելով 8 ցուցանիշ: Սոցիալական մերժման առաջին ոլորտի ցուցանիշները ներառում են ընթացիկ եկամուտներից և հիմնական կարիքներից, ֆինանսական ծառայություններից և նյութական ակտիվներից զրկանքը, նպաստների և բնակության տարածքի բացակայությունը, որոնց կարիքն ունեն տնային տնտեսությունները, սակայն իրենց չեն կարող թույլ տալ: Սոցիալական ծառայություններից դուրս մնալը ներառում է այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են առողջապահական ծառայությունների, կրթության, նաև հանրային ծառայությունների հասանելիության ու մատչելիության ցուցանիշները: Հանրային կյանքից դուրս մնալը ներառում է քաղաքական, մշակութային, սոցիալական մասնակցության և աջակցության համակարգերից հասանելիության և մատչելիության զրկանքի ցուցանիշները:

Միևնույն ժամանակաշրջանի համար մասնագետների կողմից հաշվարկվել է 7 երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի սոցիալական մերժման ինդեքսը: Արդյունքները վկայում են, որ ՀՀ-ի սոցիալական մերժման ինդեքսը կազմում է 27, որը բավականին բարձր է հինգ պետություններից և զիջում է միայն Տաջիկստանին 6 միավորով: Ամենացածր միավորը գրանցվել է Մակեդոնիայի Հանրապետությունում՝ կազմելով 5 միավոր: Վերոնշյալ երկրների շարքում Հայաստանն ավելի վատ վիճակում է գտնվում սոցիալական մերժման 3 ցուցանիշների տեսանկյունից՝ տնտեսական կյանքից դուրս մնալ, սոցիալական ծառայություններից դուրս մնալ, քաղաքացիական հանրությունից դուրս մնալ: Տնտեսական կյանքից դուրս մնալ ցուցանիշով զիջում է միայն Տաջիկստանին 4%-ով, իսկ ամենացածր միավորը գրանցվել է Ուկրաինայում: Առավել ցածր միավոր է գրանցվել Հայաստանում սոցիալական ծառայություններից դուրս մնալ ցուցանիշով՝ 27%, իսկ ամենից բարձրը մյուս երկրների համեմատ քաղաքացիական հանրությունից դուրս մնալ ցուցանիշն է՝ 38% (տե՛ս հավելված 2.3.1): Նշենք, որ ողջ աշխարհում բնակչության թվաքանակի, ՀՆԱ-ի և մարդկային

զարգացման մակարդակի խիստ տարբերությամբ՝ այսօր մարդիկ տուժում են սոցիալական մերժումից, կրում են միևնույն տիպի զրկանքներ, անկախնրանից, թե որ երկրում են ապրում:

Մեր կարծիքով, մի շարք սոցիալական զրկանքներ կրող հասարակությունը հենց բնակչության անապահով խավն է:

ՀԲ-ը, հիմնվելով ՀՀ ԱՎԾ տվյալների վրա, իրականացրել է ՀՀ բնակչության բազմաչափ աղքատության գնահատում, որի վերջնական արդյունքները հրատարակվել են 2016թ: Բազմաչափ աղքատության ցուցանիշը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել աղքատության բազմակողմանիության, խորության ու տևականության մասին, բացահայտում է զրկանքներ կրող տնային տնտեսություններին և լրացնում նյութական աղքատությանը: Այսպես, դիտարկվել են 5 չափումներ՝ հիմնական կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, առողջապահություն և աշխատանք, որոցում ներառվում են մի շարք ցուցանիշներ: Ըստ գնահատման՝ որևէ չափման մասով զրկված են համարվում այն տնային տնտեսությունների անդամները, որոնք նշում են տվյալ չափման կշռված ցուցանիշների ավելի քան 1/4 մասից զրկվածության մասին: Գնահատման արդյունքում 2015թ. ՀՀ-ում բազմաչափ աղքատության տեսակարար կշիռը կազմել է 29.1% (տես հավելված 2.3.2)¹⁰⁸:

Յետևաբար, սոցիալական մերժվածությունը, բազմաչափ աղքատությունը, անապահովությունը համամարդկային և գլոբալ խնդիր է, որի լուծման համար պայքարում են գրեթե բոլոր երկրները՝ անկախ զարգացման աստիճանից:

Տնտեսագիտության մեջ քաղաքակիրթ հասարակությունը բաժանվում է հետևյալ համամասնությամբ՝¹⁰⁹

- հարուստներ, ովքեր կազմում են հասարակության 5-6%-ը,
- միջին խավ՝ հասարակության 80%-ը,
- աղքատներ՝ հասարակության 14-15%-ը:

Միայն այս սոցիալական կառուցվածքն է ապահովում հասարակությունների և երկրներների կայունություն: Լինելով հասարակության ամենաստվար հատվածը՝ միջին խավը մի կողմից կապող օղակ է հասարակության երկու բևեռների՝ հարուստների և

¹⁰⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 67

¹⁰⁹ Реальная Россия: Социальная стратификация современного российского общества, М., 2006, с.15

աղքատների միջև, մյուս կողմից միջնորդում է խուսափելու վերջիններիս միջև սոցիալական բախումներից և ճգնաժամներից:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բնակչությանը բավական հեռու է վերոնշյալ սոցիալական կառուցվածքից, քանի որ այսօր սոցիալապես մերժված հասարակությունն ունի ընդունելի սահմանից ավելի մեծ տեսակարար կշիռ:

Այսպես, ՀՀ-ում 2012 թվականի փետրվարին առանձին տնտեսագետների կողմից զանգվածային հարցման տվյալները տալիս են բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատումը, որի համաձայն՝ հայաստանյան հասարակության 61.4%-ն իրեն դասում է միջին խավին: Ընդ որում այդ 61.4%-անոց խմբից առանձնացվել է հարցվողների այն հատվածը, որի եկամուտների չափն աղքատության վերին ընդհանուր գծից ցածր է: Արդյունքում ստացվել է միջին խավի գտված պատկեր՝ Հայաստանում օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներին համապատասխանող միջին խավը 49.12% է:¹¹⁰ Իսկ, ըստ 2015թ. բնակչության կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի, հարցվողների 36.1%-ը դասել է միջին կենսամակարդակ ունեցողների դասին, իսկ 3.2%-ը՝ միջինից բարձր կենսամակարդակ ունեցողների դասին:¹¹¹

Իր հերթին, մեր կողմից կատարված ուսումնասիրության ընթացքում հասարակությունը բաժանել ենք 3 դեցիլային խմբի (1-4 դեցիլը՝ աղքատներ, 5-7 դեցիլը՝ միջին խավ, 8-10՝ հարուստներ), և որոշել յուրաքանչյուր խմբի դրամական եկամտի և սպառողական ծախսերի բաշխումը (տե՛ս հավելվածներ 2.3.3 և 2.3.4):

Աղյուսակ 2.3.2-ի տվյալները վկայում են, որ աղքատ և միջին խավերի դրամական եկամուտների ավելացման աղբյուրներից է հարուստների դրամական եկամուտների վերաբաշխումը: Այսպես, 2004-2015թթ. հարուստների դրամական եկամուտները նվազել են ընդամենը 2.3%-ային կետով, որի հաշվին 2.1%-ային կետով ավելացել է աղքատների եկամուտների բաժինը՝ 2004թ. 14.3%-ի փոխարեն 2015թ. կազմելով 16.5%: Միջին խավի դրամական եկամուտների բաժինն ավելացել է 0.2%-ային կետով: Ստացվում է, որ նշված

¹¹⁰ Մելքունյան Յու. Միջին խավն արդի հայ հասարակությունում, հիմնական բնութագրիչներ և զարգացման հեռանկարներ, սեղմագիր սոց.գիտությունների թեկ., Եր.2013, էջ 13-14

¹¹¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 200

Ժամանակահատվածում կառավարության հիմնական ուշադրության կենտրոնը եղել են աղքատները, իսկ միջին խավը դուրս է մնացել ուշադրության ունից: Յետևաբար, այս խավի դրամական եկամուտները շատ չնչին չափով են ավելացել, ինչը վկայում է այն փաստը, որ վերջին տասնամյակում ՀՀ բնակչության կենսամակարդակի էական դրական փոփոխություն չի նկատվել:

Աղյուսակ 2.3.2

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումն ըստ 3 խմբերի,¹¹² %

Բնակչության խմբերը	Բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները											
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Աղքատ	14.3	15.1	17.0	16.8	16.8	16.5	16.6	16.6	16.1	16.6	16.0	16.4
Միջին	24.8	26.5	26.8	26.2	26.8	27.3	26.1	26.9	25.9	25.8	25.0	25.0
Հարուստ	60.9	58.4	56.2	57.0	56.4	56.2	57.2	56.5	58.0	57.7	59.0	58.6
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Այսպես, մինչ համաշխարհային ճգնաժամը՝ 2004-2007թթ. հարուստների դրամական եկամուտների բաժինն ընդամենը եկամուտներում նվազել է 3.9%-ային կետով, իսկ աղքատ և միջին խավի դրամական եկամուտների բաժինն ավելացել է համապատասխանաբար 2.5 և 1.4 տոկոսային կետերով: ճգնաժամից հետո հարուստների դրամական եկամուտների բաժինը դրսևորել է աճման միտում 2.2%-ային կետով՝ 2008թ. 56.4%-ի փոխարեն 2015թ. կազմել 58.6%: Նույն ժամանակահատվածում աղքատների դրամական եկամուտների բաժինը կրճատվել է 0.4%-ային կետով, իսկ միջին խավինը՝ 1.8%-ային կետով: Սա նշանակում է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հիմնականում տուժել է աղքատ և միջին խավը, իսկ հարուստ խավը, ընդհակառակը, դեռ ունեցել է եկամուտների ավելացում հիմնականում միջին խավի դրամական եկամուտների հաշվին: Յատկանշական է նաև այն, որ 2010թ-ից հետո յուրաքանչյուր տարի հարուստ խմբի դրամական եկամուտների կրճատումը հանգեցնում է կամ աղքատ խմբի, կամ միջին խմբի դրամական եկամուտների զգալի ավելացմանը, այսինքն՝ կարծես թե ապահովվում է հավասարակշռությունն աղքատ և միջին խմբերի դրամական եկամուտների բաժինների միջև:

Որպեսզի պարզենք միջին խավի կողմից կատարված սպառողական ծախսերի մակարդակը, օգտվենք վերը նշված մեթոդաբանությունից:

¹¹² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ էջ 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, ՀՀ ԱՎԾ, էջ 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, ՀՀ ԱՎԾ, էջ 93, և հեղինակի հաշվարկներ

Աղյուսակ 2.3.3

ՀՀ բնակչության սպառողական ծախսերի բաշխումն ըստ 3 խմբերի, %¹¹³

Բնակչության խմբերը	Բնակչության մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը											
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Աղքատ	19.2	19.2	20.1	19.5	20.3	20.4	20.3	20.2	20.3	20.3	19.7	19.5
Միջին	25.7	25.7	26.1	25.9	26.9	27.0	26.2	25.8	26.4	26.4	25.9	26.0
Հարուստ	55.1	55.1	53.8	54.6	52.8	52.6	53.5	54.0	53.3	53.3	54.4	54.5
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Աղյուսակ 2.3.3-ի տվյալները վկայում են, որ աղքատ և միջին խավի սպառողական ծախսերի մակարդակի փոփոխությունները պայմանավորված են հարուստների սպառողական ծախսերի փոփոխություններով: 2015թ. հարուստների սպառողական ծախսերի բաժինը 2004թ.-ի համեմատ կրճատվել է 0.6%-ային կետով, որը 0.3%-ային կետով ավելացրել է աղքատների խմբի բաժինը՝ 2004թ. 19.2%-ի փոխարեն 2015թ. կազմելով 19.5%, և 0.3%-ային կետով միջին խավի բաժինը՝ 2004թ. 25.7%-ի փոխարեն 2015թ. կազմելով 26.0%:

Եթե համեմատենք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ և հետո բնակչության 3 խմբերի սպառողական ծախսերի բաշխումը, ապա կտեսնենք, որ 2004-2007թթ. հարուստների սպառողական ծախսերի բաժինը նվազել է 0.5%-ային կետով, ինչի հաշվին էլ ավելացել են աղքատ և միջին խավերի սպառողական ծախսերի բաժինները համապատասխանաբար 0.3 և 0.2 %-ային կետերով: Սկսած 2008թ.-ից հարուստների սպառողական ծախսերի բաժինը դրսևորել է աճման միտում՝ 2015թ. կազմելով 54.5% 2008թ. 52.8%-ի փոխարեն: Իսկ նույն ժամանակահատվածում աղքատ խմբի սպառողական ծախսերի բաժինը կայուն կերպով փոփոխվել է մոտավորապես 0.8%-ային կետով, մինչդեռ 2008-2015թթ. միջին խավի սպառողական ծախսերի բաժինը կրճատվել է 0.9%-ային կետով: Ստացվում է, որ ճգնաժամից հետո հարուստների սպառողական ծախսերի ավելացումը մեծ մասամբ պայմանավորված է միջին խավի սպառողական ծախսերի կրճատմամբ:

¹¹³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ էջ 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, ՀՀ ԱՎԾ, էջ 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, ՀՀ ԱՎԾ, էջ 93, և հեղինակի հաշվարկներ

Կատարված վերլուծության արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում մեծ դժվարությամբ է ձևավորվում միջին խավը: Վերջինս 2004-2015թթ. ստացել է եկամուտների միջինը 26.1%, մինչդեռ քաղաքակիրթ աշխարհում այդ ցուցանիշը 3-3.5 անգամ ավելի բարձր է: Սպառողական ծախսերի գծով միջինը ևս կազմել է 26.19%, որը պետք է լիներ 60-70%, ինչն էլ կայուն հասարակության բարեկեցության երաշխիքն է: Կարող ենք ասել, որ հանրապետության բնակչության աղքատության պատկերի վրա ձևավորվել է հարուստների երկիր, քանի որ եկամուտների և սպառողական ծախսերի մեծ մասը կենտրոնացված է բնակչության ոչ մեծ մաս կազմող՝ մոտ 30.9% (ընդունելով 29.8% աղքատության մակարդակը, և վերոհիշյալ 39.3% միջին և միջինից բարձր խավը) հարուստների ձեռքին: Ընդ որում, նկատվում է ՀՀ բնակչության 3 խմբերի և՛ եկամուտների, և՛ սպառողական ծախսերի մակարդակների միջև խզվածություն: Եթե միջին խավի եկամուտներն աղքատ խավի եկամուտներից ավել են եղել միջինը 1.6 անգամ, ապա հարուստ խմբի եկամուտները միջին խավի եկամուտներից ավել են եղել 2.2 անգամ: Գրեթե նույն պատկերն ենք ստանում սպառողական ծախսերի գծով. միջին խավի սպառողական ծախսեր աղքատ խավի սպառողական ծախսերից ավել են եղել միջինը 1.3 անգամ, ապա հարուստ խմբի սպառողական ծախսերը միջին խավի սպառողական ծախսերից ավել են 2.1 անգամ, որոնք բավականին բարձր ցուցանիշներ են: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ բնակչության այն խումբը, որ դասվում է միջին խավին, իր եկամուտների և ծախսերի գծով ավելի մոտ է աղքատներին և համալրում է անապահով խավի այն ներուժը, որն դեռևս աղքատ է, բայց գտնվում է աղքատության ռիսկային գոտում:

ՀՀ բնակչության դեցիլային խմբերի սպառողական ծախսերի ուսումնասիրությունը բացարձակ մեծություններով ցույց է տալիս, որ բնակչության կեսից ավելին աղքատ է, միջին խավը և անապահով խավը կազմում է բնակչության սովոր հատվածը (տե՛ս հավելված 2.3.5):

Վերոնշյալ մեթոդաբանության հիման վրա անապահով խավն ընդգրկելով 1-4.5 դեցիլային խմբերում՝ անհրաժեշտություն է առաջանում գնահատել ՀՀ բնակչության անապահով խավի ինչպես դրամական եկամուտների, այնպես էլ սպառողական ծախսերի

փոփոխությունները՝ կախված առաջնային նշանակություն ունեցող գործոններից:

Գոյություն ունեն անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի փոփոխության վրա ազդող բազմաթիվ տնտեսական և սոցիալական գործոններ, այդ թվում՝ գործազրկության մակարդակը, գնաճը, համախմբված բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ, իրական ՀՆԱ-ի աճը, բնակչության բնական աճը, համախմբված բյուջեի հարկային եկամուտները և տուրքերը ՀՆԱ-ի նկատմամբ, համախմբված բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, միջին ամսական անվանական աշխատավարձը և այլն: Իրական կլիներ համախմբված ձևով դիտարկել բոլոր գործոնների ազդեցությունն անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի փոփոխության վրա, բայց, քանի որ ունենք ընտրանքի ավելի փոքր ծավալ՝ 15 տարի, և որոշ ցուցանիշների գնահատման մեթոդաբանության փոփոխություն, հետևաբար, առանձին-առանձին դիտարկել ենք մեր կողմից առավել կարևորած գործոնների՝ աշխատավարձի սահմանված նվազագույն չափի, կենսաթոշակների նվազագույն չափի, աղքատության ամսական նպաստի միջին չափի, և անապահով խավի տրանսֆերտների միջին չափի ազդեցությունը որպես կախյալ փոփոխական համարվող անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վրա (տե՛ս հավելված 2.3.6):

Հաշվարկվել է ՀՀ բնակչության անապահով խավի դրամական եկամուտները և սպառողական ծախսերը, ստացված արդյունքները միջինացվել, շարքերը հարթեցվել են, այնուհետև ՀՀ բնակչության անապահով խավի դրամական եկամուտների փոփոխության գնահատման համար առաջադրվել են հետևյալ էկոնոմետրիկ մոդելները, որոնց համար օգտագործվել է EViews 7.0 ծրագրային փաթեթը (ներկայացված է ստորև)։

$$\begin{aligned} \text{INCOME}_t &= C(1) + C(2)*\text{WAGE}_t + \varepsilon_t \quad (2.3.1) & \text{CONST} &= C(1) + C(2)*\text{WAGE}_t + \varepsilon_t \quad (2.3.5) \\ \text{INCOME}_t &= C(1) + C(2)*\text{BENEFIT}_t + \varepsilon_t \quad (2.3.2) & \text{CONST} &= C(1) + C(2)*\text{BENEFIT}_t + \varepsilon_t \quad (2.3.6) \\ \text{INCOME}_t &= C(1) + C(2)*\text{PENSION}_t + \varepsilon_t \quad (2.3.3) & \text{CONST} &= C(1) + C(2)*\text{PENSION}_t + \varepsilon_t \quad (2.3.7) \\ \text{INCOME}_t &= C(1) + C(2)*\text{TRANSFER}_t + \varepsilon_t \quad (2.3.4) & \text{CONST} &= C(1) + C(2)*\text{TRANSFERT}_t + \varepsilon_t \quad (2.3.8) \end{aligned}$$

Որտեղ՝ INCOME_t – կախյալ փոփոխական, ցույց է տալիս բնակչության 1 շնչի հաշվով անապահով խավի դրամական եկամուտները,

$CONST_t$ - կախյալ փոփոխական, ցույց է տալիս բնակչության շնչի հաշվով անապահով խավի սպառողական ծախսերը,

$WAGE_t$ - անկախ փոփոխական, ցույց է տալիս աշխատավարձի սահմանված նվազագույն չափը,

$BENEFIT_t$ - անկախ փոփոխական, ցույց է տալիս աղքատության ամսական նպաստի միջին չափը,

$PENSION_t$ - անկախ փոփոխական, ցույց է տալիս կենսապաշտպան նվազագույն չափը,

$TRANSFER_t$ - անկախ փոփոխական, ցույց է տալիս անապահով խավի մասնավոր տրանսֆերտների միջին չափը

$C(1)$ - մոդելի գործակից, ազատանդամ

$C(2)$ - գործակից, ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում եկամուտն անկախ փոփոխականների միավորով փոփոխվելու դեպքում,

ε_t - մոդելի սխալ :

Գնահատելով (2.3.1), (2.3.2), (2.3.3), (2.3.4), (2.3.5), (2.3.6), (2.3.7), (2.3.8) էկոնոմետրիկ մոդելները փոքրագույն քառակուսիների եղանակով կատանանք հետևյալ արդյունքները (տե՛ս հավելվածներ 2.3.7, 2.3.8, 2.3.9, 2.3.10, 2.3.11, 2.3.12, 2.3.13, 2.3.14), որտեղից երևում է, որ էկոնոմետրիկ մոդելների դետերմինացիայի գործակիցների արժեքները բավականին բարձր են: Բոլոր գործակիցների միաժամանակ գրոլիները հավանականությունը հավասար է գրոյի: Դարբին-Վաթսոնի վիճակագրի արժեքները գտնվում են ընդունելի մակարդակում: Մոդելների սխալների հատկությունների լրացուցիչ ստուգման արդյունքում պարզվել է, որ մոդելների սխալներն ունեն նորմալ բաշխում, ինչը վկայում է մոդելների վստահելիության մասին:

Կատարելով մի շարք թվաբանական գործողություններ՝ կունենանք հետևյալ գնահատված էկոնոմետրիկ մոդելները՝

$INC\hat{O}M E_t = 234 + 0.41 * WAGE_t$ (2.3.9)	$INC\hat{O}M E_t = 503 + 0.62 * BENEFIT_t$ (2.3.10)
$INC\hat{O}M E_t = 183 + 1.37 * PENSION_t$ (2.3.11)	$INC\hat{O}M E_t = 218 + 12.24 * TRANSFER_t$ (2.3.12)
$C\hat{O}N S_t = 647 + 0.32 * WAGE_t$ (2.3.13)	$C\hat{O}N S_t = 470 + 0.51 * BENEFIT_t$ (2.3.14)
$C\hat{O}N S_t = 624 + 1.06 * PENSION_t$ (2.3.15)	$C\hat{O}N S_t = 592 + 10.38 * TRANSFER_t$ (2.3.16)

Որ տեղ՝ **INCŌMET** – տ-րդ տարվա անապահով խավի դրամական եկամուտների կանխատեսվող մակարդակն է,

CŌNSt - տ-րդ տարվա անապահով խավի սպառողական ծախսերի կանխատեսվող մակարդակն է,

Ստացված մոդելների գործակիցները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1. Եթե 15 տարվա ընթացքում աշխատավարձի նվազագույն չափը տարեկան միջինն ավելացել է 3571 դրամով, ապա յուրաքանչյուր 3571 դրամ նվազագույն աշխատավարձի միջին չափի ավելացման դեպքում անապահով խավի դրամական եկամուտները կավելանան $0.41 \cdot 3571 = 1464$ դրամով, իսկ անապահով խավի սպառողական ծախսերը՝ $0.32 \cdot 3571 = 1143$ դրամով:

2. Եթե 15 տարվա ընթացքում աղքատության նպաստի միջին չափը տարեկան միջինն ավելացել է 1918 դրամով, ապա յուրաքանչյուր 1918 դրամ աղքատության նպաստի միջին չափի ավելացման դեպքում անապահով խավի դրամական եկամուտները կավելանան $0.62 \cdot 1918 = 1189$ դրամով, իսկ անապահով խավի սպառողական ծախսերը՝ $0.51 \cdot 1918 = 978$ դրամով:

3. Եթե 15 տարվա ընթացքում կենսաթոշակի նվազագույն չափը տարեկան ավելացել է միջինը 929 դրամով, ապա յուրաքանչյուր 929 դրամ կենսաթոշակի միջին չափի ավելացման դեպքում անապահով խավի դրամական եկամուտները կավելանան $1.37 \cdot 929 = 1273$ դր., իսկ անապահով խավի սպառողական ծախսերը՝ $1.06 \cdot 929 = 985$ դր.:

4. Եթե 15 տարվա ընթացքում անապահով խավի տրանսֆերտների չափը տարեկան միջինն ավելացել է 102 դրամով, ապա յուրաքանչյուր 102 դրամ միջին տրանսֆերտների ավելացման դեպքում անապահով խավի դրամական եկամուտները կավելանան $12.24 \cdot 102 = 1248$ դրամով, իսկ անապահով խավի սպառողական ծախսերը՝ $10.38 \cdot 102 = 1059$ դրամով:

Այսպիսով, ՀՀ բնակչության անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վրա մեծ ազդեցություն են գործում կենսաթոշակի նվազագույն չափը, աղքատության նպաստի միջին չափը, աշխատավարձի նվազագույն չափը, անապահով խավի մասնավոր տրանսֆերտների չափը, ուստի, յուրաքանչյուր գործոնի մակարդակի ավելացումը կնպաստի ՀՀ բնակչության անապահով խավի կենսամակարդակի բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 3 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼ ԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1 ՀՀ բնակչության կենսամակարդակի պետական կարգավորման հիմնախնդիրները

Արագ զարգացող հասարակության մեջ յուրաքանչյուր մարդ ապահովագրված չէ ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տարբեր ռիսկերի ազդեցությունից (գնաճ, գործազրկություն, անապահով ծերություն, հաշմանդամություն և այլն): Այս առումով, մարդու նյութական անապահովությունը, խոցելիությունը, ինչպես նաև աղքատությունն առանձին դեպքերում անխուսափելի է: Նման հիմնախնդիրների առաջացումը պահանջում է լուծում, որին իրենց մասնակցությունը ցուցաբերեն ինչպես պետությունը, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածը, ՀԿ-ները: Սակայն այստեղ առաջնությունը տրվում է պետությանը, քանի որ, եթե մասնավոր հատվածի և ՀԿ-ների գործունեությունն՝ ուղղված նշված հիմնախնդիրների լուծմանը, կարող են կրել կամավոր, պատահական բնույթ, ապա պետության դերն արտացոլվում է նրա գործողությունների շարունակական, պարտադիր և անհրաժեշտ բնույթով: Վերջինս, հասարակությանը սոցիալական ընդվզումներից զերծ պահելու համար, շահագրգռված է սոցիալական ոլորտի կայունության հաստատմանը և բնակչության արժանավայել կյանքի պայմանների ստեղծմանը: Այդ առումով, պետության կողմից իրականացվող միջոցառումներն ամրագրվում են օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Հետևաբար, սոցիալական պետությունը պետք է վարի ակտիվ սոցիալական քաղաքականություն:


Սոցիալական քաղաքականությունը որպես պետական քաղաքականության հիմնական բաղադրատարր՝ պետության գործունեությունն է՝ ուղղված երկրում առկա սոցիալական բնույթի հիմնախնդիրների լուծմանը, մասնավորապես այնպիսի իրավիճակների, երբ սահմանափակվում է մարդու նվազագույն

պահանջ մ ու ն ք ն եր ի բ ավ ար ար ու մ ը , հ աս ար ակ ու թ յ ու ն ու մ ս ո ճ ի ալ ակ ան հ ամ եր ա շ խ ու թ յ ան ս տեղ ծ ու մ ը , վ եր ջ ի ն հ ա շ վ ո վ , հ աս ար ակ ու թ յ ան յ ու ը ր ա ք ան չ յ ու ը ր ան դ ամ ի՝ պ ե տ ու թ յ ան կ ող մ ի ց պ ա շ տ պ ան վ ա ծ և ս ո ճ ի ալ ա պ ե ս ա պ ա հ ո վ վ ա ծ գ գ ալ ու ը ն կ ալ ու մ ը : Ա յ լ կ եր պ աս ա ծ . ս ո ճ ի ալ ակ ան ք աղ ա ք ակ ան ու թ յ ու ն ը ս ո ճ ի ալ ակ ան հ ի մ ն ա խ ն դ ի իր ն եր ի կ ոլ ե կ տ ի վ լ ու ծ մ ան ռ ազ մ ավ ար ու թ յ ու ն ն է ¹¹⁴ : Ս ակ այ ն , պ ե տ ու թ յ ան ս ո ճ ի ալ ակ ան ք աղ ա ք ակ ան ու թ յ ու ն ը պ ե տ թ է կ առ ու ց վ ի՝ հ ա շ վ ի առ ն ել ո վ մ ի կ ող մ ի ց մ ար դ կ ան ց խ ն դ ի իր ն եր ի լ ու ծ մ ան ս ե փ ակ ան հ ն ար ավ որ ու թ յ ու ն ն եր ի , մ յ ու ս կ ող մ ի ց՝ պ ե տ ու թ յ ան հ ն ար ավ որ ու թ յ ու ն ն եր ի հ ան գ ամ ան ք ը :

Ս ո ճ ի ալ ակ ան պ ա շ տ պ ան ու թ յ ան բ ն ազ ավ առ ը Հ Հ պ ե տ ակ ան ք աղ ա ք ակ ան ու թ յ ան գ եր ակ ա ու ղ ո ղ ու թ յ ու ն ն եր ի ց է , ո ը ը կ ար գ ավ որ վ ու մ է մ ի շ ար ք օ ղ ե ն ք ն եր ո վ և Հ Հ կ առ ավ ար ու թ յ ան ո ղ ո շ ու մ ն եր ո վ ¹¹⁵ , հ ամ ա յ ն ո ղ ո ն ց ս ո ճ ի ալ ակ ան եր ա շ խ ի ք ն եր և ծ առ այ ու թ յ ու ն ն եր ե ն ս ա հ մ ան վ ու մ բ ն ակ չ ու թ յ ան տ ար բ եր շ եր տ եր ի հ ամ ար : Ս ո ճ ի ալ ակ ան պ ա շ տ պ ան ու թ յ ան հ ի մ ն ակ ան ս կ զ բ ու ն ք ն եր ն ե ն մ ար դ աս ի թ ու թ յ ու ն ը , ս ո ճ ի ալ ակ ան ար դ ար ու թ յ ու ն ը , հ աս ց ե ակ ան ու թ յ ու ն ը , հ ամ ալ ի թ ու թ յ ու ն ը , ան ձ ի ի թ ավ ու ն ք ն եր ի և ազ ա տ ու թ յ ու ն ն եր ի ա պ ա հ ո վ ու մ ը : Հ Հ ս ո ճ ի ալ ակ ան պ ա շ տ պ ան ու թ յ ան հ ամ ակ ար գ ն ի թ մ ե ջ ն եր առ ու մ է հ ե տ ն յ ալ ն պ ատ ակ այ ի ն ք աղ ա ք ակ ան ու թ յ ու ն ը (գ ծ ապ ատ կ եր 3.1.1)

Գ ծ ապ ար կ եր 3.1.1

Հ Հ ս ո ճ ի ալ ակ ան պ ա շ տ պ ան ու թ յ ան հ ամ ակ ար գ



¹¹⁴ Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2006, էջ 12

¹¹⁵ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. դեկտեմբերի 17-ին, ՀՕ-231-Ն, ՀՀ-ի ազգայն անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում 15.04.2010 N 452-Ն

այլ խմբի) հիմնական պահանջ մ ու ն ք ն եր ի և ս ո գ ի ալ ակ ան կ ար ի ք ն եր ի ք ավ ար ար ու մ ն է , ան ձ ի ը ն դ գ ր կ վ ա ծ ու թ յ ու ն ը հ աս ար ակ ու թ յ ան մ ե ջ , ն ր ա ս ո գ ի ալ ակ ան մ ե կ ու ս ա գ մ ան կ ան խ ար գ ել ու մ ը , և , վ եր ջ ի ն հ ա շ վ ո վ , կ յ ան ք ի դ ժ վ ար ի ն իր ավ ի ճ ակ ի կ ան խ ար գ ել ու մ ը : Յ ե ն ց ս ո գ ի ալ ակ ան ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ն էլ իր ակ ան ա գ ն ու մ ե ն ա յ ս ն պ ատ ակ ն եր ը :

Ս ո գ ի ալ ակ ան ա պ ա հ ո վ ու թ յ ու ն ը պ ե տ ու թ յ ան կ ող մ ի ց իր ակ ան ա գ վ ող ս ո գ ի ալ -տ ն տ ե ս ակ ան մ ի ջ ո գ առ ու մ ն եր ի հ ամ ակ ար գ է ` ու ող վ ա ծ ծ եր և ան ա շ խ ատ ու ն ակ ք աղ ա ք ա գ ի ն եր ի , մ ա յ ը ու թ յ ան և մ ան կ ու թ յ ան ա պ ա հ ո վ ու թ յ ան ը , ա շ խ ատ ու ն ակ ու թ յ ան ն ա խ ա պ ա հ պ ան մ ան ը և վ եր ակ ան գ ն մ ան ը :

Ս ո գ ի ալ ակ ան ա պ ա հ ո վ ա գ ը ու թ յ ու ն ն ա շ խ ատ ան ք ի , առ ող ջ ու թ յ ան , ա շ խ ատ ու ն ակ ու թ յ ան , կ յ ան ք ի և ե կ ամ տ ի կ որ ս տ ի հ ե տ կ ա պ վ ա ծ ս ո գ ի ալ ակ ան ռ ի ս կ եր ի ց ք ն ակ չ ու թ յ ան ա պ ա հ ո վ ու մ ն է ` հ ի մ ն վ ել ո վ կ որ ս տ ի հ ատ ու ց մ ան կ ոլ ե կ տ ի վ հ ամ եր ա շ խ ու թ յ ան ս կ գ բ ու ն ք ի վ ր ա :

Վ եր լ ու ծ ու թ յ ու ն ն եր ը ց ու յ ց ե ն տ ալ ի ս , ո թ Յ Յ - ու մ ն կ ատ վ ու մ է ք ն ակ չ ու թ յ ան խ ավ եր ի մ ի ջ և ծ ա յ ը ա ս տ ի ճ ան ք և ե ո ա գ ու մ , ե կ ամ ու տ ն եր ի խ ի ս տ ան հ ավ ա ս ար ք ա շ խ ու մ , աղ ք ա տ ն եր ի թ վ ա ք ան ակ ի հ ե տ գ հ ե տ ե ավ ել ա գ ու մ : Դ ա պ ա հ ան ջ ու մ է պ ե տ ու թ յ ան ակ տ ի վ ս ո գ ի ալ ակ ան ք աղ ա ք ակ ան ու թ յ ան իր ակ ան ա գ ու մ ` ու ող վ ա ծ ք ն ակ չ ու թ յ ան աղ ք ա տ ա գ մ ան ռ ի ս կ ի ն վ ա գ ե ց մ ան ն ու աղ ք ա տ ք ն ակ չ ու թ յ ան հ ն ար ավ ո թ ը ու թ յ ու ն ն եր ի ը ն դ լ ա յ ն մ ան ը , ի ն չ պ ե ս ն ան ե կ ամ ու տ ն եր ի ք ա շ խ մ ան ան հ ավ ա ս ար ու թ յ ան մ ե ող մ ան ը : Ն շ յ ալ հ ի մ ն ա խ ն դ ի ը ն եր ի լ ու ծ ու մ ը հ ն ար ավ ո թ ը ու թ յ ու ն կ տ ա ո չ մ ի ա յ ն աղ ք ա տ և ան ա պ ա հ ո վ խ ավ ի կ ե ն ս ամ ակ ար դ ակ ի ք ար ձ ը ա գ մ ան ը , ա յ լ և մ ի ջ ի ն խ ավ ի ձ և ավ ո թ մ ան ը և ք ար գ ավ ա ճ մ ան ը , ք ան ի ո թ հ ե ն ց մ ի ջ ի ն խ ավ ն է հ ի մ ք հ ան դ ի ս ան ու մ տ ն տ ե ս ու թ յ ան գ ար գ ա գ մ ան ն ու դ ը ա հ ի մ ք եր ի ամ ը ա պ ն դ մ ան ը : Ի ս կ մ ե գ ան ու մ մ ի ջ ի ն խ ավ ձ և ավ ո թ ել ու հ ամ ար ան հ ը ա ժ ե շ տ է ք ար ձ ը ա գ ն ել ք ն ակ չ ու թ յ ան ե կ ամ ու տ ն եր ը , ո թ ի հ ամ ար պ ե տ ու թ յ ու ն ը պ ե տ ք է ո թ դ ե գ ը ի ն վ ա գ ա գ ու յ ն ա շ խ ատ ավ ար ձ ի , կ ե ն ս ա թ ո շ ակ ն եր ի , ն պ աս տ ն եր ի և ա յ լ ն վ ա գ ա գ ու յ ն ս ո գ ի ալ ակ ան եր ա շ խ ի ք ն եր ի մ ակ ար դ ակ ի ք ար ձ ը ա գ մ ան կ ու ը ս :

Վ եր ջ ի ն տ ար ի ն եր ի ու ս ու մ ն ա ս ի ը ու թ յ ու ն ն եր ը ց ու յ ց ե ն տ ալ ի ս , ո թ Յ Յ կ առ ավ ար ու թ յ ու ն ն ան ը ն դ մ ե ջ վ ար ել է ս ո գ ի ալ ակ ան եր ա շ խ ի ք ն եր ի հ ատ կ ա գ մ ան ն ու ող վ ա ծ գ ո թ ծ ու ն ե ու թ յ ու ն , ո թ ն էլ , ը ս տ է ու թ յ ան , մ ի տ ու մ ու ն ի ք ար ել ավ ել ու ք ն ակ չ ու թ յ ան կ ե ն ս ամ ակ ար դ ակ ը : Ա յ ս պ ե ս , ու ս ու մ ն ա ս ի ը վ ող ժ ամ ան ակ ա տ վ ա ծ ու մ

աշխատավարձի սահմանված նվազագույն չափը և կենսաթոշակի նվազագույն չափն աճել են անվանական գնահատմամբ:

Աղյուսակ 3.1.1

ՀՀ բնակչության պետության հատկացրած պետական երաշխաբներն անվանական գնահատմամբ 2004-2015թթ.¹¹⁶

Ցուցանիշներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Աշխատավարձի սահմանված նվազագույն չափ	13000	13000	15000	20000	25000	30000	30000	32500	32500	35000/45000	50000	50000/55000
Կենսաթոշակի նվազագույն չափ	3000	4000	4250	4250	6800	8000	10500	10500	13000	13000	14000	16000
Գործադրկության նպաստի միջին չափ	3384	6370	8364	11334	13913	16700	16512	17345	16031	16237	-	-
Կենսաթոշակների միջին չափ	8842	9805	10912	12746	21370	24520	27107	27062	29696	29122	35813	40441
Մեկ ընտանիքի աղքատության ամսական նպաստի միջին չափը	7829	13328	15200	17500	21100	23560	26853	26853	29350	29350	30350	30350
Կրթաթոշակների նվազագույն չափն ամսում												
<i>ԲՈՒՀ-երի ու սանոդների</i>	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
<i>Միջին մասնագիտական հաստատության ու ներքին ու սանոդների</i>	3725	3725	3725	3725	3725	4650	4650	4750	4750	4750	4750	4750
<i>Ասպիրանտների</i>	6500	6500	6500	10000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000

2004-2015թթ. սահմանված աշխատավարձի նվազագույն չափը ծածկել է պարենային աղքատության գիծը, բացառությամբ 2005թ., երբ աշխատավարձի նվազագույն մեծությունը մնացել է 2004թ. մակարդակին, իսկ ծայրահեղ աղքատության գիծը, գների անկման արդյունքում, բարձրացել է (հիմք ընդունելով, որ պարենային աղքատության գիծը 2005թ., 2006թ., 2007թ. համապատասխանաբար կազմել է 13266 դրամ, 14300 դրամ, 15753դրամ և աղյուսակ 2.3.1-ում ներկայացված): 2006թ-ից սկսած աշխատավարձի նվազագույն չափն անընդմեջ ծածկել է աղքատության պարենային (ծայրահեղ) գիծը, իսկ 2008թ-ից աղքատության ստորին ընդհանուր գիծը, բայց ոչ աղքատության վերին ընդհանուր գիծը: Այսպես, նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ աղքատության վերին ընդհանուր գիծը ծածկել հաջողվեց միայն 2013թ. երրորդ եռամսյակում, երբ աշխատավարձի նվազագույն չափ սահմանվեց 45000դրամ (տես աղյուսակ 2.3.1):

¹¹⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014 ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ

հիարկե, վիճակն ավելի վատ է, երբ վերոնշյալ հաշվարկներն արվում են՝ հաշվի առնելով սպառողական գների ինդեքսը: Սա նշանակում է, որ այն անձինք, ովքեր ունեն աշխատանք և ստանում են աշխատավարձի նվազագույն չափը, դեռևս համարվում են աղքատ, իսկ, ավելի ճիշտ, «աղքատ աշխատող»:

Թեև նվազագույն աշխատավարձի անընդմեջ աճի հաշվին՝ 2014թ. հունիսի 1-ից աշխատավարձի նվազագույն չափը սահմանվել է 50000 դրամ, իսկ 2015թ. հունիսի 1-ից՝ 55000 դրամ,¹¹⁷ հնարավոր է արդյոք ներկայիս գնաճի պայմաններում (2014թ. և 2015թ. տարեկան գնաճը (նախորդ տարվա նկատմամբ) կազմել է համապատասխանաբար 3% և 3.7%¹¹⁸) ապահովել աշխատող բնակչության արտագաղթի ծավալների կրճատում, գործազրկության մակարդակի իջեցում, վերջին հաշվով, բնակչության բարեկեցության բարելավում: Նշված հարցադրմանը դրական պատասխան ակնկալելու համար անհրաժեշտ է, որ պեսզիկ առավարող ունը որոշակի բարեփոխումներ իրականացնի վարվող սոցիալական քաղաքականության միջոցառումների համակարգում: Մասնավորապես, բնակչության եկամուտների արագացված աճ ապահովելու համար պետք է փնտրել նվազագույն աշխատավարձի առավել արագ աճի ապահովման լրացուցիչ ռեսուրսներ, որոնք խթան կհանդիսանան ինչպես երիտասարդների, այնպես էլ միջին տարիքի ակտիվ բնակչությանն աշխատանքի շուկայում ակտիվ մասնակցություն ունենալուն: Այսպես, ըստ Յեռագոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոնի՝ նվազագույն աշխատավարձը պետք է համահունչ լինի աշխատավարձի նորմին, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝¹¹⁹

$$\text{Աշխատավարձի նորմ} =$$

Արտադրողականություն + Գնաճ:

Այս առաջարկվող մեթոդի ցուցանիշներից առաջինը՝ արտադրողականության ցուցանիշը, ՀՀ տնտեսության համար կարող է իրականությունը չարտահայտել՝ պայմանավորված սովետային

¹¹⁷ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք ընդունված ԱԺ կողմից 12.12.2013թ ՀՕ-187-Ն, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք ընդունված ԱԺ կողմից 01.12.2014թ ՀՕ-205-Ն

¹¹⁸ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր (2015թ.) <https://www.cba.am/am/SitePages/statspanannualbulletin.aspx>

¹¹⁹ The Caucasus Research Resource Center (CRRC)-Armenia, *Setting the minimum optimal wage level in Armenia: Adjustments in the social policy*, Yerevan 2014, p.1-28

տնտեսությունը զգալի տեսակարար կշռով: Այդ պատճառով ինչպես հետազոտական կենտրոնն առաջարկել է, այն կարելի է փոխարինել արդյունաբերության ոլորտի արտադրողականության աճով, իսկ գնաճի մակարդակի հաշվի առումն իրատեսական է:

Համաձայն 09.11.2004թ. ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 182-ի՝ «Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Սակայն առայսօր չկան նվազագույն աշխատավարձի ինդեքսավորում, որով էլ սույն օրենքի 182-րդ հոդվածը կրում է անորոշ բնույթ: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել 182-րդ հոդվածը՝ ապահովելով դրան միջև կատարումը, որով էլ կկանոնակարգվի նվազագույն աշխատավարձի գնողունակությունը: Թեև նվազագույն աշխատավարձի 5000 դրամով բարձրացումը վերջին ժամանակներում գրանցված գնաճի պայմաններում կարելի է դիտարկել որպես անուղղակի ինդեքսավորում՝ սակայն վերջինս էլ չի բավարարում նվազագույն կենսաապահովման պահանջների կատարմանը, բացի այդ յուրաքանչյուր հաջորդ 5000 դրամն ունի ավելի ցածր գնողունակություն, քան նախորդը: Նշենք նաև, որ նվազագույն աշխատավարձի ավելացումը շղթայական մեխանիզմով հանգեցնում է աշխատավարձի դրոյքաչափերի բարձրացմանը: Բանն այն է, որ աշխատավարձի բարձրացում հիմնականում իրականացվում է պետության կողմից և հատկապես պետական բարձր պաշտոնատար անձանց ուղղությամբ, և ավելի քիչ պետական հատվածի շարքային աշխատողների ուղղությամբ: Իսկ ինչ վերաբերում է մասնավոր հատվածին, ապա այստեղ աշխատավարձի բարձրացման գործընթաց դիտարկվում է հազվադեպ, իսկ լինելու դեպքում էլ ցածր մակարդակով: Դեռ ավելին, շատ հաճախ, ելնելով աշխատանքի շուկայի լարվածության աստիճանից, այն ունենում է նվազման միտում: Գտնում ենք, որ աշխատավարձի բարձրացումն առաջին հերթին պետք է ուղղված լինի անապահով և միջին խավերին, իսկ բարձր վարձատրվող պետական պաշտոնյաների աշխատավարձերը պետք է մնան անփոփոխ այնքան ժամանակ, քանի դեռ նվազագույն աշխատավարձը չի բավարարել կենսաապահովման նվազագույն պայմաններին: Դրանով որոշ չափով կթուլանա հարուստ-աղքատ խավերի բևեռացումը: Իրական կյանքում ցածր եկամուտներով

զբաղված ը մարդկային կապիտալի վերարտադրությանն ուղղված ներդրումներ չի կարող իրականացնել, որը և կհանգեցնի նրա՝ որպես աշխատողի մրցունակության անկմանը: Այսինքն՝ եկամուտների բաշխման խնդրի կարգավորման հիմքում պետք է դրվի նաև այս հանգամանքը: ՀՀ կառավարության կողմից մշակվող սոցիալական քաղաքականության և ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված ոլորտը կարգավորող օրենքները պետք է հիմնվեն այն սկզբունքի վրա, որ միայն պետական և մասնավոր հատվածի արդյունավետ համագործակցության միջոցով է հնարավոր կյանքի կոչել ՀՀ-ում մարդկային կապիտալի վերարտադրության ավանդական բարձր տեմպերը:

2013թ. ՀՀ-ում գործազրկության բարձր մակարդակի (16.2%) պայմաններում գործազրկության նպաստի միջին մեծությունը հնարավորություն է տվել ծածկելու անգամ ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը: Գործազրկության նպաստի մակարդակի փոփոխությունը պայմանավորված է եղել նվազագույն աշխատավարձի փոփոխությամբ, այսինքն՝ նվազագույն աշխատավարձի բարձրացման դեպքում անմիջապես փոխվել է նաև գործազրկության նպաստի չափը: Չնայած որ 2012թ.-ից նկատվել է նվազագույն աշխատավարձի ամենամյա բարձրացում և ակնկալվում էր նաև գործազրկության նպաստի բարձրացումը, այնուամենայնիվ 2014թ. հունվարի 1-ից, ՀՀ կառավարության որոշմամբ, դադարեցվել է գործազրկության նպաստի տրամադրման համակարգը (այն դիտարկվել է պասիվ ծրագիր), որին փոխարինում է «Աշխատանքային անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում» ակտիվ ծրագիրը: Այս ծրագրի շահառուները յուրաքանչյուր գործատուի այցելության համար ստանում են 2000 դրամ (յուրաքանչյուր ամսվա համար ոչ ավելի, քան 18000 դրամ): Ծրագրում անձը կարող է ընդգրկվել մեկ անգամ՝ առավելագույնը երեք ամիս տևողությամբ: Նպատակն է պասիվ ծրագրից անցնել ակտիվ ծրագրի, այսինքն՝ ակտիվացնել գործազուրկներին աշխատանքի որոնման գործընթացում և նպաստել ինքնուրույն աշխատանքի տեղավորվելուն: Սակայն, 2013թ. պաշտոնապես գրանցված

գործազուրկները կազմել են 58.6 հազար մարդ, որոնցից տարեսկզբից գործազուրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել 13235 մարդ 2011թ. 21730-ի փոխարեն, իսկ 2015թ. պաշտոնապես գրանցված գործազուրկները կազմել են 73.3 հազար մարդ, նշյալ ծրագրում ընդգրկված մասնակիցները՝ 1925 մարդ:¹²⁰ Սա վկայում է այն, որ 2 տարվա ընթացքում ավելացել է պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը, սակայն ակտիվ ծրագրի մասնակիցների թվաքանակը մի քանի անգամ քիչ է պասիվ ծրագրի մասնակիցների թվաքանակից: «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի բաժնի կողմից անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ հակված չեն օգտվել ու ծրագրից, իսկ օգտվել ու դեպքում էլ գործատուին այցելելու թյուր ունենքը չեն գերազանցում 1-2 անգամը: Դա բացատրվում է մի քանի հանգամանքով՝ նախ, ծրագրի մասնակիցները պետք է ունենան բանկային հաշվեհամար, իսկ ոչ բոլորն ունեն հաշվեհամար և ի վիճակի են այն բացելու, և երկրորդ, մարդիկ չունեն վստահություն գործատուների և աշխատանքի տեղավորման նկատմամբ, ինչպես նաև նկատվել է բարոյահոգեբանական խնդիրներ՝ կապված յուրաքանչյուր գործատուին այցելելու և 2000 դրամ ստանալու հետ:

Գտնում ենք, որ վերոնշյալի հետևանք է այն, որ եթե 2010թ.-ից գործազուրկության մակարդակը (19%) կրճատման միտում է ունեցել (2011թ.՝ 18.4%, 2012թ.՝ 17.3%) և 2013թ. կազմել 16.2%, ապա 2014թ.-ից այն ավելացել է և 2015թ. կազմել 18.5%, այնինչ՝ նախատեսվել է 2013-2018թթ. ընկած ժամանակահատվածում գործազուրկության մակարդակի տարեկան նվազում 0.35%-ային կետով:¹²¹ Սա նշանակում է, որ դեռևս ակտիվ ծրագիրը էական ազդեցություն չի տվել:

Մյուս կողմից, ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2015թ. կազմել է 171615 դրամ (2014թ. 158580 դրամ):

¹²⁰ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության տարեկան հաշվետվություններ 2011, 2013, 2015թթ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 75

¹²¹ ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 8-ի նիստի N45 արձանագրային որոշում, էջ 37, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, ՀՀ ԱՎԾ, էջ 51

Ստացվում է, որ մեկ աշխատողը 1 ամսում, վճարելով եկամտային հարկ, պետական բյուջեի հարկային եկամուտներն ավելացրել է ամսական մոտ 43000 դրամով (2014թ.՝ 40000 դրամ): Երբ աշխատողն ինչ-ինչ պատճառներով կորցնում է աշխատանքը և դառնում ժամանակավոր գործազուրկ, ապա, եթե մինչև 2014թ. պետությանը պետական բյուջեից տալիս էր գործազրկության նպաստ՝ միջինը 16000 դրամ, ապա այսօր այդ փոխհատուցման մեխանիզմը չի գործում: Այսպիսով, գտնում ենք, որ անհրաժեշտ է գործազրկության նպաստի տրամադրման համակարգը վերականգնել, ընդ որում սահմանել գործազրկության նպաստի տրամադրման մեկ միասնական ժամկետ՝ 6 ամիս, որի նպատակն է ակտիվ աշխատանք փնտրելու գործընթացների և կայուն զբաղվածության ապահովման խթանումն ու ինչ-որ չափով գործազուրկին աջակցությունը՝ դիմակայելու սոցիալական կարիքները հոգալուն: Արդյունքում գործազուրկը կունենա վստահություն և սոցիալական պաշտպանվածություն պետության կողմից: Այստեղ մեծ է զբաղվածության ծառայությունների, գործակալությունների արդյունավետ աշխատանքի ազդեցությունը:

Ինչպես նշել ենք, բնակչության առավել անապահով, այդ թվում՝ աղքատ խավը կազմում են կենսաթոշակառուները՝ բնակչության 12,9%: Թեև ՀՀ կառավարությունը տարբեր միջոցառումներ է իրականացնում կենսաթոշակառուների բարեկեցության ապահովման համար, այնուհանդերձ դեռևս վատ վիճակի մեջ են գտնվում կենսաթոշակի միջին չափի ստացող կենսաթոշակառուները, առավել վատ՝ նվազագույն կենսաթոշակով ապրողները: Կենսաթոշակների միջին չափի ամենամյա բարձրացմամբ հանդերձ անգամ 2015թ. սահմանված 40441 դրամը չի ծածկում աղքատության վերին ընդհանուր գիծը:

Կենսաթոշակառուների միջին ամսական կենսաթոշակի արժեքային չափը նվազագույն պարենային զամբյուղի արժեքին գերազանցում է ընդամենը 12300 դրամով, իսկ նվազագույն կենսաթոշակի արժեքային չափը կազմում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքի 56.8%-ը, այսինքն՝ կենսաթոշակառուները, եթե չունեն օգնության այլ միջոցներ, գտնվում են ծայրահեղ անմխիթար վիճակում: Համեմատության համար նշենք, որ ՌԴ-ում 2014թ. մեկ շնչի հաշվով ամսական նվազագույն սպառողական

զամբյուղը կազմել է 8234 ռուբլի կամ մոտավորապես 88927 դրամ (միջին փոխարժեքը 10.8), միջին ամսական կենսաթոշակի չափը 10786 ռուբլի կամ մոտ 116489 դրամ, այսինք՝ 27562 դրամով գերազանցում է սպառողական նվազագույն զամբյուղին¹²², այն դեպքում երբ ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղն է գերազանցում միջին ամսական կենսաթոշակի չափին 9343 դրամով: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ նվազագույն կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուները համարվում են աղքատ, իսկ միջին կենսաթոշակ ստացողները՝ անապահով խավ:

ՀՀ կենսաթոշակային համակարգը կարգավորվում է 01.01.2011թ. ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Կենսաթոշակային համակարգում կենսաթոշակային տարիքի անձանց աշխատանքային և սոցիալական կենսաթոշակների վճարումը հիմնականում իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Ընդ որում, սոցիալական կենսաթոշակները 2014թ. հունվարի 1-ից վերանվանվել են ծերություն, հաշմանդամություն, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, որոնք տրամադրվում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքին, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից: 2003թ. ապրիլի 10-ից ուժի մեջ մտած օրենքով՝ տղամարդկանց համար կենսաթոշակային տարիք սահմանվել է 63 տարին, իսկ կանանց համար, աստիճանաբար աճելով 2007-2008թթ. սահմանվել է 61 տարին, 2009-2010թթ.՝ 62 տարին, 2011թ-ից 63 տարին: Այստեղ հարկ է նկատել, որ 63 տարին լրացած անձը համարվում է կենսաթոշակառու, իսկ, ըստ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի¹²³ տարեց է համարվում 65 տարին լրացած անձը, որին անհրաժեշտության դեպքում մատուցվում է ինամք՝ որպես սոցիալական ծառայություն: Այսինքն՝ ստացվում է, որ եթե 63 տարին լրացած անձն անցնում է կենսաթոշակի, ապա նա դեռևս իրավունք չունի օգտվելու սոցիալական

¹²² ©1999-2015 Федеральная служба государственной статистики, Национальные счета, http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/accounts/

¹²³ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունված 17.12.2014թ, ՀՕ-231-Ն

ծառայություններին: Կարծում ենք, տարեց և կենսաթոշակի անցման տարիքը պետք է հավասարեցնել 63-ի, քանի որ արդեն իսկ կենսաթոշակի անցած անձն ունի տարեց մարդուն համապատասխան խնամքի կարիք:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքի համաձայն (ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին, լրամշակված՝ ըստ մայր փաստաթղթին փոփոխվող փաստաթղթերի) ՀՀ կենսաթոշակային համակարգն ընդգրկում է.

1. Պետական կենսաթոշակային ապահովությունը, որը պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով անձանց ապահովում է պետական կենսաթոշակով:
2. Կուտակային բաղադրիչը, որն օրենքով սահմանված կուտակային հատկացումների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է կուտակային կենսաթոշակով:
3. Կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը, որն օրենքով սահմանված կամավոր կենսաթոշակների վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների կամ ապահովագրական վճարների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է լրացուցիչ կենսաթոշակով (եկամտով):

Նշված օրենքով սահմանվում են հետևյալ կենսաթոշակները՝

1. աշխատանքային՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի.
2. գինվորական՝ երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

Ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 25 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում: Աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է նաև 25 տարվա աշխատանքային ստաժից պակաս ստաժի առկայության դեպքում, եթե քաղաքացին ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

ՀՀ կառավարության պետական ծախսերի ոլորտում իրականացվող քաղաքականության շրջանակներում վերջին ժամանակներում

սոցիալական պաշտպանությունը՝ մասնավորապես կենսաթոշակները դիտվել է որպես գերակայություն: Ըստ այդմ էլ, նկատվել է ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճի միտում: Դիտարկելով 2009-2015թթ. պետական բյուջեի ծախսերում սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշռի շարժընթացը (տես աղյուսակ 3.1.2)՝ նկատում ենք, որ 2009թ. պետական բյուջեի ծախսերի 26.2% ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին՝ 243.6 մլրդ դրամ: 2012թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի 29%-ն է ուղղվել սոցիալական պաշտպանության ոլորտին՝ 291.7 մլրդ դրամ: Ինչպես տեսնում ենք, 2009թ. համեմատ սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը 2012թ. ավելացել են, ինչը հիմնականում պայմանավորված է ապահովագրական կենսաթոշակների, նպաստների և միանվագ դրամական օգնությունների ծախսերի աճով: Իսկ 2014թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի 27.7% է ուղղվել սոցիալական պաշտպանության ոլորտին՝ կազմելով 342.5 մլրդ դրամ: 2015թ. պետական բյուջեի ծախսերի 27.2%-ն ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին՝ կազմելով 383.7 մլրդ դրամ: 2014թ. համեմատ 2015թ. սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 12%-ով կամ 41.2 մլրդ դրամով: Կարծում ենք, ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների և նպաստների ավելացմամբ, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի հետկապված ծախսերով: Սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերում մեծ տեսակարար կշիռ են կազմում կենսաթոշակներին ուղղվող ծախսերը, որոնք անվանական արտահայտությամբ 2009թ. 177.6 մլրդ դրամի համեմատ շարունակական աճ են ունեցել և 2015թ. կազմել 283.2 մլրդ դրամ: Թեև սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերում կենսաթոշակների ծախսերի տեսակարար կշիռը նվազման միտում է դրսևորել՝ 2012թ. և 2013թ. կազմելով համապատասխանաբար 68.2% և 67.2% 2009թ. 72.9%-ի դիմաց, այնուամենայնիվ 2015թ. ունեցել է աճման միտում, գերազանցել 2009թ. տվյալները և կազմել 73.8%: Մեր կարծիքով, դա պայմանավորված է և աշխատանքային կենսաթոշակների, և կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի հետ:

Աղյուսակ 3.1.2

ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի
ֆինանսավորման ցուցանիշները 2009-2015թթ.¹²⁴

	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Սոցիալական պաշտպանության պետ. բյուջեի ծախսեր՝ անվանական	243.6	244.2	256.2	291.7	297.4	342.5	383.7
արտահայտու թյամբ, մլրդ դրամ							
Սոցիալական պաշտպանության պետ. բյուջեի ծախսեր՝ ՀՆԱ նկատմամբ, %	7.9	7.0	6.8	7.3	7.0	7.1	7.6
Սոցիալական պաշտպանության ծախսեր՝ պետ. բյուջեի ծախսերի նկատմամբ, %	26.2	25.6	26.0	29.0	26.0	27.7	27.2
Կենսաթոշակների տրամադրման ծախսեր, մլրդ դրամ	177.6	178.5	188.4	199.0	200.0	240.5	283.2
Կենսաթոշակային տեսակարար կշիռը սոցիալական պաշտպանության ծախսերում, %	72.9	73.1	73.5	68.2	67.2	70.2	73.8

Չնայած այն հանգամանքին, որ սկսած ուսումնասիրվող ժամանակահատվածից՝ 2004թ.-ից, ՀՀ կառավարության քաղաքականության շրջանակներում նկատվում է կենսաթոշակների բազային մասի, հետևաբար նաև միջին կենսաթոշակների ամենամյա բարձրացում անվանական արտահայտու թյամբ, այնուհանդերձ, դրանց չափերը ոչ միայն չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր կենսաթոշակ (մինչդեռ պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներից է կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համարելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը¹²⁵), ինչի մասին էլ վկայում են հետազոտության արդյունքները. 2008թ. կենսաթոշակառուների 34.5% եղել է աղքատ, իսկ 2.8%՝ ծայրահեղ աղքատ: 2014թ. աղքատ են եղել կենսաթոշակառուների 35.8%, իսկ 2.9%՝ ծայրահեղ աղքատ: Չնայած 2015թ. այս ցուցանիշներն ունեցել են կրճատման միտում՝ կազմելով համապատասխանաբար 32.7% և 1.9%, սակայն դեռևս գտնվում են բարձր մակարդակի վրա: Աղքատ բնակչության մեջ 2015թ.

¹²⁴ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N-442 –Ն որոշում, էջ 117, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, ՀՀ բյուջեի կատարման 2009-2015թթ. տարեկան հաշվետվություններ
¹²⁵ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010թ, ՀՕ-243-Ն

կենսաթոշակառուների տեսակարար կշիռը կազմել է 10.7%¹²⁶: Այս տեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճն ավելի շատ պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի ավելացմամբ, առանձին հանրային ծառայողությունների գծով սակագների աճով և այլ գործոններով:

Հետևաբար, ներկայիս ժողովրդագրական վիճակի անբարենպաստ զարգացման միտումների, մասնավորապես «բնակչության ծերացման», ոչ ֆորմալ տնտեսության մեծ ծավալների առկայության պայմաններում (գործող կենսաթոշակային բաշխողական համակարգում առկա է կատարված վճարումների և վճարվող կենսաթոշակների չափերի միջև ուղղակի կապի բացակայության խնդիրը, աշխատողները շահագրգռված չեն կենսաթոշակային վճարումներ կատարել համակարգին, գործատուները նույնպես խուսափում են պարտադիր սոցվճարումներ կատարելուց՝ թաքցնելով աշխատատեղերի իրական քանակն ու թերհաշվառելով իրականում վճարված աշխատավարձերը¹²⁷), կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության, կենսաթոշակային համակարգի բարձր բեռնվածության գործակիցի (2.3 գբաղված ֆինանսավորում է 1 կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը¹²⁸, այն դեպքում, երբ արևմտյան եվրոպայի երկրներում 3 աշխատողը ֆինանսավորում է 1 կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը), եկամուտների արագընթաց վերականգնողական աճի հիմնախնդիրները հիմք հանդիսացան ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների, որոնք էլ հանգեցրեցին նրան, որ հանրապետությունում պետական կենսաթոշակային համակարգի մասնակիցները զուգակցում են ինչպես բաշխողական, այնպես էլ կուտակային տարրերը: Սակայն՝ որքանով է արդյունավետ այս նոր համակարգի ներդրումը, պարզ կլինի որոշակի տարիներ հետո:

¹²⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015, ՀՀ ԱՎԾ Եր. 2015, էջ 58, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ Եր. 2016, էջ 57

¹²⁷ ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիր: Ընդունվել է ՀՀ Կառավարության թիվ 1487-Ն որոշմամբ, 2008թ. կետ 5

¹²⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 94

Աղքատ և անապահով ընտանիքների սոցիալական աջակցման բնագավառում կարևորվում է Ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ծրագիրը, որը 2014թ. հունվարի 1-ից վերանվանվել է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագիր (այսուհետ ԸԿԲՆԾ): Սա ՀՀ պետական բյուջեի ամենակարևոր սոցիալական ծրագրերից մեկն է, որն իր մեջ ներառում է ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար, և սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար, որոնց շահառուներն են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքները, և հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնություն և եռամսյակային հրատապ օգնություն: Նշյալ ծրագրերը կարգավորվում են 2013թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որոնց սահմանվում են պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է, որի նպատակն է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը:

Ընտանեկան նպաստի ծրագիրը, ներկայիս ԸԿԲՆԾ, ուղղված է աջակցելու անապահով ընտանիքների աջակցմանը և աղքատության կրճատմանը: Նշյալ նպաստի ստացման իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. N-2317-Ն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգի, ըստ որի ընտանիքի կամ տնային տնտեսության անապահովության գնահատման հիմքում դրվում են աղքատությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքի

անաշխատունակ անդամների թիվը, ընտանիքի անդամների միջին ամսական եկամուտը, ընտանիքի բնակարանային պայմանները և այլն, որոնք ունեն յուրաքանչյուրն իր թվային արժեքը, որոնց արտադրյալով էլ որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: 2008թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. ներառյալ ընտանեկան և սոցիալական նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվել է «30»: Ընտանեկան և սոցիալական նպաստների բազային մասը 2016թ. օգոստոսի 1-ից սահմանվել է 18000 դրամ՝ 2010թ. 13500 դրամի, 2013թ. 16000 դրամի և 2015թ. 17000 դրամի դիմաց:

Աղյուսակ 3.1.3-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2010-2013թթ. ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված ընտանիքների տեսակարար կշիռը ՀՀ ընտանիքների ընդհանուր թվում ունեցել է կրճատման միտում, իսկ 2015թ. այն ավելացել է և կազմել 17.4%: 2010թ.-ի համեմատ 2012թ. քննարկվող ցուցանիշը կրճատվել է գրեթե 1.2%-ով, իսկ 2015թ. ավելացել 0.3%-ով: Իսկ հաշվառված ընտանիքների մեջ նպաստառու ընտանիքները կազմել են 77.57%, որը գտնում ենք, որ բավականին բարձր ցուցանիշ է: ՀՀ ընդհանուր ընտանիքների կազմում նպաստառու ընտանիքները 2010թ. կազմել են 13.5%, 2011թ. այդ թիվը մոտեցել է 11.77%-ի, այսինքն նպաստառու ընտանիքների թիվը մոտ 1.2%-ով կրճատվել է, իսկ 2012թ.-ից նկատվել է աճ՝ 2015թ. կազմելով 13.53%: Նպաստառու ընտանիքների մեջ երեխա ունեցող նպաստառուները կազմել են մոտ 77%: Նպաստի միջին չափը 2010-2011թթ. կազմել է 26850 դրամ, 2012-2013թթ.՝ 29350 դրամ, իսկ 2014թ. նկատվել է աճ՝ կազմելով 30350 դրամ, որը պահպանվել է նաև 2015թ.:

Աղյուսակ 3.1.3

Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2010-2015¹²⁹

	2010	2011	2012	2013	2014	2015
Հաշվառված ընտանիքները (% ՀՀ ընտանիքների թվից)	17.11	14.91	15.9	16.5	17.2	17.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	78.77	78.94	77.69	79.78	77.71	77.57
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	13.50	11.77	12.36	13.16	13.37	13.53
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու)	78.28	78.07	80.69	76.97	76.27	76.91

¹²⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2015, ՀՀ ԱՎԾ 2015 էջ 242, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016, ՀՀ ԱՎԾ 2016, էջ 242

ընտանիքներից)						
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	31.022	35.497	37.105	37.105	37.105	38.361
ՀՀ պետական բյուջեի ծախսերը (մլրդ) ¹³⁰	30.9	29.0	33.1	34.6	35.4	36.6
Նպաստառու ընտանիքների թիվ	105005	91575	96309	102570	104130	105408
Նպաստի միջին չափ	26850	26850	29350	29350	30350	30350

Համակարգում նպաստների միջին չափի աճին գուցա հեն նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է մինչև 2015թ.: 2010թ. նպաստառու ընտանիքների թիվը կազմել է 105005, իսկ 2011թ.` 91575, միայն 2010թ. համեմատ 2011թ. այդ թիվը կրճատվել է մոտ 13.5 հազարով: Սկսած 2012թ.-ից նկատվել է նպաստառուների թվի ավելացում` 2014թ. կազմելով 104130, իսկ 2015թ. կազմել է 105408` գերազանցելով 2010թ. տվյալները: ՀՀ ԱՎԾ տվյալները վկայում են, որ 2015թ. 2010թ. համեմատ աղքատության մակարդակը նվազել է 6%-ով, մինչդեռ Ձինիի գործակիցն ըստ եկամուտների և ըստ սպառման աճել է` համապատասխանաբար կազմելով 2015թ. 0.374 և 0.279, 2010թ. 0.362 և 0.265 դիմաց: Իսկ սա նշանակում է, որ աղքատության մակարդակի կրճատումը չի հանգեցրել աղքատ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, այլ հակառակը, այն վատացրել է: Դա պայմանավորված է նրանով, որ, ըստ երկրյան, նպաստառու ընտանիքները պետք է լինեն ծայրահեղ և շատ աղքատ` տեսականորեն բացառելով ոչ աղքատ ընտանիքներին: Այնինչ, համակարգում մեծ է ինչպես «ընդգրկման սխալը», այնպես էլ «չընդգրկման սխալը»:

Եթե որպես համակարգի շահառուներ դիտարկենք բոլոր աղքատներին, ապա չընդգրկման սխալը կկազմի 73% (ըստ ՏՏԿԱՀ` 79%), այսինքն` 2015թ. աղքատների 73% փաստացի չեն եղել համակարգում, իսկ շատ աղքատների դեպքում չընդգրկման սխալը կկազմի 63% (ըստ ՏՏԿԱՀ` 73%), ծայրահեղ աղքատների դեպքում` 56% (ըստ ՏՏԿԱՀ` 69%): Ստացվում է, որ ծայրահեղ աղքատների նվազագույնը 56% չի օգտվում ԸԿԲՆԾ-ից: Ծայրահեղ աղքատների համար ընդգրկման

¹³⁰ ՀՀ պետական բյուջեի կատարման վերլուծություն 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ.

սխալը կազմել է 95% (և ըստ SS4ԱՅ), այսինքն՝ համակարգում ընդգրկվածների 95% ծայրահեղ աղքատներ չեն:¹³¹

Յետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել ԸԿԲՆԾ-ի նպատակը, որն է աղքատության հաղթահարումը և ծայրահեղ աղքատության էականորեն կրճատումը: Այստեղ կարևորվում է նաև անապահովության գնահատման բանաձևի փոփոխությունը, որի հիմքում ներկայումս ընկած է փորձագիտական մեթոդը, այսինքն՝ բանաձևը մշակվել է փորձագետների կարծիքի ուսումնասիրության արդյունքում: Առաջարկվում է վերանայել բանաձևում կիրառվող ցուցանիշները և գործակիցները, աստիճանաբար անցում կատարել վիճակագրական վերլուծական մեթոդով գնահատման նոր բանաձևին՝ հիմք ընդունելով SS4ԱՅ-երի բազաները: Այս ամենի արդյունքում կմեծանա ԸԿԲՆԾ-ի հասցեականությունը:

Յուրաքանչյուր նպաստառու ընտանիք 2015թ. ստացել է ամսական 30350 դր., որն ուղղվում է ընտանիքում 1-ից ավելի մարդկանց պահանջմունքների բավարարմանը, այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում ըստ տնային տնտեսությունների հարցման արդյունքների՝ մեկ շնչի հաշվով գոյատևելու համար անհրաժեշտ միջին ամսական եկամտի չափը կազմել է 95680 դր., իսկ լավ ապրելու համար՝ 250672 դր.:¹³² Յետևաբար, համակարգում առկա են բացթողումներ, քանի որ վճարվող նպաստները նույնիսկ բավարար չեն 1 չափահաս անձի գոյատևման համար:

Մեր կարծիքով, ընտանեկան և սոցիալական նպաստի 18000 դրամ բազային մասը քիչ է անապահով և կարիքավոր ընտանիքների համար: Նպատակահարմար է ընտանեկան և սոցիալական նպաստի բազային մասը համապատասխանեցնել ընտանիքի նվազագույն պարենային ծախսերը բավարարելու մակարդակին:

Նշենք նաև, որ ԸԿԲՆԾ-ի շահառուները ծրագրից հեռացվում են ոչ թե կենսամակարդակի բարելավմամբ, այլ հիմնականում կապված ընդգրկման պահին նրանց անապահովության միավորով: Ըստ ՅԲ-ի հաշվարկների՝ ծրագրից հեռացվելուց հետո տնային տնտեսությունների միջին եկամուտը 1 շնչի հաշվով ավելի բարձր է, քան ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում, սակայն տարբերությունը համեմատաբար փոքր է և ամսական կտրվածքով

¹³¹ Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն», 2016, էջ 19

¹³² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016, ՀՀ ԱՎԾ, Եր.2016, էջ 202

կազմում է մոտ 5000 դրամ¹³³: Յետևաբար, անհրաժեշտ է ծրագրից հեռացվելու ավելի բարձր շեմ սահմանել:

Նկատենք նաև, որ շատ հաճախ կյանքի դժվարին վիճակում հայտնված ընտանիքները ծրագրի իրագրվածության, համապատասխան փաստաթղթերի բացակայության և, վերջին հաշվով, պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի արդյունքում չեն կարողանում օգտվել իրենց կարգավիճակը բարելավող միջոցառումներից: Յետևաբար, կարևորում ենք սոցիալական աշխատողների օբյեկտիվ և արդյունավետ աշխատանքները՝ ուղղված այդ ընտանիքների հայտնաբերմանը և համակարգում հաշվառելը, որը կնպաստի բնակչության իրագրված մակարդակի բարձրացումը տնային այցելության ունենրի միջոցով, այսինքն՝ սոցիալական ծառայության ունենրը պետք է բացահայտեն սոցիալապես անապահովներին, այլ ոչ թե հիմք ընդունեն միայն նպաստառու դառնալ ցանկացողների դիմումները: Իհարկե, վերջինիս արդյունքում կարող է բյուջեից հատկացվող նպաստների հետ կապված դժվարություններ առաջանա, սակայն դրանով կկարգավորվեն ծայրահեղ աղքատների սոցիալական խնդիրները:

Թեև պետությանը վարում է ակտիվ սոցիալական քաղաքականություն, մասնավորապես նկատվում է նպաստների և կենսաթոշակների աստիճանական բարձրացում, որը հիմնականում կատարվում է տարին մեկ անգամ՝ ներառվելով տարեկան բյուջե տային ծախսերի մեջ, սակայն, հատկապես վերջին տարիներին ձգձգվող տնտեսական ճգնաժամով, ոչ կայուն տնտեսական իրադրությունը պայմանավորված տեղի է ունենում զգալի գնաճ, հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների շուկայում, ինչպես նաև ազգային արժույթի և հիմնական արտարժույթային տրանսֆերտների գնողունակության անկումը: հանգեցնում են հասարակության վճարունակության անկմանը: Արդյունքում տրվող կենսաթոշակների և նպաստների բարձրացումը համարժեք չէ իրական գնաճի տեմպերին: ՀՀ կառավարության կողմից որպես սոցիալական լարվածությունը մեղմացնող կիրառելի միջոցառում՝ կդիտարկվեր կենսաթոշակների

¹³³ Morgandi M., J. Posadas and T. Damerou. 2014. "Activation for Poverty Reduction. Realizing the Potential of Armenia's Social Safety Nets". Social Protection and Labor Global Practice, the World Bank, Washington DC, p.14

և նպաստների բարձրացումը ոչ պակաս, քան ընթացիկ փաստացի (իրական) գնաճին զուգահեռ:

Ինչ վերաբերում է ԲՈՒՅ-երի և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների ու ԲՈՒՅ-երին և գիտահետազոտական հիմնարկներին կից ասպիրանտուրայում արտադրությունից կտրված ուսուցումով սովորող ասպիրանտների կրթաթոշակների նվազագույն չափին, ապա 2004-2015թթ. ընկած ժամանակաշրջանում ԲՈՒՅ-երի ուսանողների կրթաթոշակները չեն փոխվել, իսկ միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների ու ԲՈՒՅ-երին և գիտահետազոտական հիմնարկներին կից ասպիրանտուրայում արտադրությունից կտրված ուսուցումով սովորող ասպիրանտների կրթաթոշակներն ավելացել են համապատասխանաբար 1000 և 13500 դրամով:

Բնակչության կենսամակարդակի կայունացման և վերոնշյալ որոշակի պետական երաշխիքների ապահովման տեսանկյունից կարևորվում է «Կենսաապահովման նվազագույն գամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի կենսաապահովման նվազագույն գամբյուղն և կենսաապահովման նվազագույն բյուջեն հիմք են գնահատելու ՀՀ բնակչության կենսամակարդակը, կենսամակարդակի գնահատված ցուցանիշն օգտագործելու պետական սոցիալական քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս, հիմնավորելու սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը և որոշել չհարկվող եկամուտը¹³⁴:

Եթե հիմք ընդունենք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները, ապա ՀԲ-ի մեթոդաբանությունամբ հաշվարկված յուրաքանչյուր անձի համար օրական 2232 կիլոկալորիա սննդային էներգետիկ արժեքով նվազագույն սպառողական գամբյուղի արժեքը մեկ շնչի համար ամսական կազմել է 44700 դրամ, մինչդեռ ՀՀ-ում սահմանված նվազագույն կենսաթոշակի (2015թ. 16000 դրամ) ու նպաստի միջին չափերը (2015թ. 30350 դրամ) բավական ցածր են 44700 դրամից, իսկ նվազագույն աշխատավարձը սկսած 2013թ. երկրորդ կեսից է հասցրել

¹³⁴ «Կենսաապահովման նվազագույն գամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ընդունված 16.03.2004թ., ՀՕ-53-Ն

ծածկել նվազագույն սպառողական զամբյուղը: Դրու թյուր նս ալելի է վատանում, երբ սպառողական զամբյուղը կազմվում է Առողջ ապահույթան համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալների հիման վրա ՅՅ առողջ ապահույթան նախարարության հաշվարկած-առաջարկած սնուցման նվազագույն 2412 կալորիականության հիման վրա, համաձայն որի նվազագույն սպառողական զամբյուղը կազմում է 60000 դրամ և ալելի:

Յետևաբար, անհրաժեշտ է սահմանել կենսաապահովման նվազագույն բյուջեն՝ հիմք ընդունելով բավարար կենսամակարդակով ապրելու և իր ֆիզիկական գործունեությունը վերարտադրելու համար անհրաժեշտ ՅՅ առողջ ապահույթան նախարարության հաշվարկած-առաջարկած սնուցման նվազագույն 2412 կկալ-ը 2232 կկալ-ի փոխարեն, քանի որ վերջինիս հաշվարկման հիմքում դրվել է քաղաքացիների կողմից նվազագույն սպառումը՝ նկատի ունենալով գոյատևելը: Մինչդեռ ՅՅ տնտեսության զարգացման և բնակչության կենսամարդակի բարձրացման համար առաջին հերթին անհրաժեշտ է առողջ մարդկային կապիտալ: Ընդ որում, պետք է պահպանել յուրաքանչյուր հաջորդ տարի գնաճով վերահաշվարկված կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծության և նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների, սոցիալական այլ վճարների չափերի միջև համամասնությունները:

Ամփոփելով նշենք, որ այսօր պետության կողմից տրված սոցիալական երաշխիքները լուրջ գործիք են աղքատության դեմ պայքարելու համար: Ըստ պաշտոնական տվյալների, ՅՅ բնակչության ամեն երրորդն աղքատ է, իսկ ոչ պաշտոնական տվյալների, բնակչության կեսից ալելին: Յետևաբար, մի կողմից սոցիալական քաղաքականությունը պետք է ողղված լինի սոցիալական երաշխիքների քանակական ալելացմանը, սակայն մյուս կողմից, պետք է մշակվեն և կիրառվեն այնպիսի մեխանիզմների համակարգ, որոնց միջոցով անապահով, աղքատ մարդկանց, ընտանիքներին հնարավորություն կտրվի դուրս գալու այդ իրավիճակից, կկարողանան բավարարել իրենց նվազագույն պահանջմունքները և կունենան արժանապատիվ կյանք, այսինքն՝ կկարողանան պահպանել

իրենց գոյությունը՝ մասամբ պետություններից անկախ: Մեր կողմից առաջարկվող օրենսդրական դաշտում որոշակի փոփոխությունները կնպաստեն բնակչության աղքատ և անապահով խավի կենսապայմանների հնարավոր լավացմանը և թույլ չեն տա խավերի բևեռացվածության սրմանը:

3.2 Բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղիների միջազգային փորձը

Մարդու հիմնական իրավունքներից մեկը սոցիալական ապահովության իրավունքն է: Ներկայումս ավելի շատ հանդիպում ենք «սոցիալական պաշտպանություն» հասկացությանը, սակայն «սոցիալական ապահովություն»-ը շարունակում է գոյություն ունենալ որպես իրավունք, որը վերաբերում է յուրաքանչյուրին:

Գիտական սահմանումներում սոցիալական պաշտպանության անբաժանելի մասն է կազմում սոցիալական ապահովությունը և պետական սոցիալական երաշխիքները:

Համաշխարհային իրականությունում լայն տարածում է ստացել Գ. Էսպինգ-Անդերսոնի սոցիալական պաշտպանության դասակարգումը՝ առանձնացնելով սոցիալական պետությունների 3 հիմնական մոդելներ՝ ազատական (լիբերալ), պահպանողական (կոնսերվատիվ) և սոցիալ-ժողովրդագրական¹³⁵:

Ազատական մոդելը բնորոշ է այնպիսի երկրներին, ինչպիսիք են՝ ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Մեծ Բրիտանիա: Մոդելի հիմնական պայմաններն են պետության նվազագույն միջամտությունը շուկայական տնտեսությանը և սահմանափակ պետական կարգավորումը՝ դուրս չգալով մակրոտնտեսական քաղաքականության շրջանակներից: ՀՆԱ-ի շատ չնչին մասն է բաժին ընկնում տնտեսության պետական հատվածին: Մարդկանց սոցիալական աջակցությունն իրականացվում է զարգացած ապահովագրական համակարգերի հաշվին, որոնք, պետության չնչին մասնակցությամբ, որոշակի երաշխիքներ են կարգավորում: Որպես կանոն, ապահովագրական վճարների չափերը մեծ չեն: Նյութական օգնությունն ունի հստակ հասցեականություն և ուղղվում են միայն կարիքավորության դեպքում:

¹³⁵ Esping-Andersen G. *The three worlds of welfare capitalism*. Cambridge, 1990, 60p.

Ի հարկե, մոդելն ամբողջովին գործում է կայուն տնտեսության պայմաններում, հակառակ դեպքում, սոցիալական ծրագրերը կրճատվում են և խոցելի վիճակում են հայտնվում բնակչության շատ սոցիալական խմբեր:

Պահպանողական (կորպորատիվ) մոդելը բնորոշ է սոցիալական ուղղվածության ունեցող շուկայական տնտեսությանը: Դրանց թվին են դասվում եվրոպական մի շարք երկրներ՝ Ավստրիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա: Պետության դերն այստեղ ավելի մեծ է. բյուջե տային հատկացումները սոցիալական ոլորտին մոտավորապես հավասար են աշխատողների և գործատուների ապահովագրական վճարներին, վերաբաշխման հիմնական ուղիները կամ պետության ձեռքում են, կամ նրա վերահսկողության տակ: Սոցիալական երաշխիքների մեծությունը համամասնորեն կախված է աշխատանքային եկամուտներից և համապատասխանաբար ապահովագրական վճարումների նվազեցումներից:

Սոցիալ-ժողովրդագրական (համերաշխության) մոդելը ենթադրում է պետության առաջնային դերը բնակչության պաշտպանության հարցում: Կառավարության սոցիալական քաղաքականության առաջնային խնդիրն է եկամուտների մակարդակների հավասարեցում և լրիվ զբաղվածության ապահովում: Տվյալ մոդելի կիրառումը տարածված է հյուսիսային եվրոպայի երկրներում՝ Շվեդիայում, Նորվեգիայում, Դանիայում, Շվեյցարիայում, Չինաստանում: Սոցիալական ոլորտի ֆինանսավորման հիմքն է տնտեսության զարգացած պետական հատվածը, որի հզորության գործում մեծ է հարկման դրույքաչափերի բարձր մակարդակը:

Իրական կյանքում նշված մոդելներն առանձին-առանձին շատ հազվադեպ են հանդես գալիս: Գործնականում կիրառվում են երեք մոդելներից որևիցե մեկը՝ մյուս մոդելների առանձին տարրերի համադրություններով: Օրինակ, Կանադայում, ինչպես նաև Ավստրալիայում ապահովագրական կենսաթոշակի հետ մեկտեղ գոյություն ունի նաև «համաժողովրդական» կենսաթոշակ, իսկ ԱՄՆ-ում բնակչության պաշտպանության սոցիալական համակարգի տարբերակիչ առանձնահատկությունն ապակենտրոնացումն է: Դատարհայտվում է տարբեր սոցիալական ծրագրերի իրականացմամբ տարբեր մակարդակներում՝ դաշնային, նահանգային, տեղային: Համակարգի առավելությունն այն է, որ թույլ է տալիս երկրի

գրեթե ամեն մի տարածաշրջանի բնակչության սոցիալական կարիքների լիարժեք և անմիջական իրականացումը: ԱՄՆ-ի պետական սոցիալական պաշտպանության համակարգը բաժանվում է 2 ուղղությունների՝¹³⁶

1. սոցիալական ապահովագրության,
2. պետական աջակցության կամ սոցիալական ապահովության

«Սոցիալական ապահովագրության մասին» ԱՄՆ օրենքն ընդունվել է 1935թ.: Սա առաջին դաշնային ընդհանուր ծրագիր է, որը ժամանակի ընթացքում բազմաթիվ փոփոխությունների և լրացումների ենթարկվելով, համալրվելով նոր դրույթներով՝ այսօր ներկայացնում է բնակչության ապահովագրության նոր ձևեր:

Սոցիալական ապահովագրության հիմնական ծրագրերը ներառում են.

- 1) սոցիալական ապահովության ծրագիր, որն ընդգրկում է ծերության, անաշխատունակության և կերակրողին կորցնելու ռիսկերից ապահովագրումը,
- 2) գործազրկության նպաստները,
- 3) բժշկական օգնության Medicare ծրագիրը: Այն ստեղծվել է 1965թ. և հանդիսացել սոցիալական ապահովագրության ողջ ծրագրի բաղկացուցիչ մասը:

Ծերության, անաշխատունակության և կերակրողին կորցնելու ապահովագրության ծրագիրը (OASDI) լայն տարածում ունի, որում ներկայումս ընդգրկված են աշխատողների 96%: Այն \$ինանսավորվում է պարտադիր հարկվող կուտակված միջոցներով, որում հավասար մասնակցություն ունեն թե՛ գործատուները, թե՛ աշխատողները: Վճարվող հարկի զգալի մասը նախատեսված է սոցիալական ապահովագրության հիմնադրամի համար, իսկ քիչ մասը՝ բժշկական ապահովագրության *Medicare's Hospital Insurance (HI)* ծրագրի համար: Նշված ծրագրով 1937թ-ին և ավելի շուտ ծնված աշխատողը կարող է թոշակի անցնել 65 տարեկանում, 1937թ.-ից հետո ծնվածների համար կենսաթոշակային տարիքն աստիճանաբար ավելանում է, և արդեն 1955թ. ծնվածների համար այն 66 տարեկանն է: Սակայն, եթե քաղաքացին ավելի ուշ է անցնում կենսաթոշակի, ապա ստանում է բազային մակարդակից ավելի շատ կենսաթոշակ, իսկ ավելի շուտ

¹³⁶ Макконнел К.Г., Брю С.Л., Экономика, 16-е издание, 2006, с.187-189

անցնման դեպքում կենսաթոշակառուներն ստանում է ոչ լրիվ կենսաթոշակ:¹³⁷

Ապահովագրական կենսաթոշակով են ապահովված ԱՄՆ կենսաթոշակառուների մեծ մասը, և վերջիններիս եկամուտը զգալի բարձր է սահմանված նվազագույնից: Բացի պարտադիր պետական կենսաթոշակային համակարգից, երկրում գործում են բազմաթիվ մասնավոր կենսաթոշակային ծրագրեր: Սակայն առաջնայինը մնում է պետական կենսաթոշակային համակարգը, որը, կախված աշխատանքային ստաժից և աշխատավարձից, երաշխավորված է կենսաթոշակային եկամտով, չնայած՝ աշխատողների մեծ մասը ներգրավված է կամավոր կուտակային ծրագրերում:

Կյանքի միջին տևողության (79 տարի) և կենսաթոշակառուների քանակի ավելացմամբ ավելացել է նաև բժշկական խնամքի նկատմամբ պահանջարկը: Քանի որ այսօր առողջապահական ծախսերը բավականին բարձր են, և նույնիսկ միջին խավ համարվող քաղաքացին ի վիճակի չէ հոգալու այդ ծախսերն առանց ապահովագրության, ամերիկացիների մեծ մասն ընդգրկված է մասնավոր բժշկական ապահովագրությունում: Ինչպես կենսաթոշակների, այնպես էլ բժշկական կարիքների դեպքում առաջնայինը մնում է պետական բժշկական ապահովագրությունը՝ Medicare: Այն անձինք, ովքեր ընդգրկված են պարտադիր պետական կենսաթոշակային համակարգում, ընդգրկված են նաև Medicare ծրագրում: Այն գործում է կենսաթոշակային տարիքից:

Բնակչության ավելի աղքատ խավի համար 1960-ական թթ-ից գործում է նաև Medicaid ծրագիրը: Ժամանակի ընթացքում այս ծրագրից օգտվողների քանակն ավելացել է՝ այսօր կազմելով 65-68 մլն մարդ: Վերջիններիս եկամուտը 2-3 անգամ գերազանցել է աղքատության գիծը:

2010թ-ից ընդունվել է օրենք «Մառչելի բժշկություն» մասին, որն ուժի մեջ է մտել 2013թ. հոկտեմբերի 1-ից: Այն ստացել է նաև ObamaCare անվանումը: Ծրագիրը պահանջում է, որ յուրաքանչյուր ամերիկացի ունենա բժշկական ապահովագրություն, սահմանում է ավելի արտոնյալ պայմաններ (մինչև 26 տարեկան անձիք կարող են ունենալ իրենց ծնողների ապահովագրությունը, ապահովագրական ընկերությունները չեն կարող հրաժարվել խրոնիկ հիվանդ

¹³⁷ Social Security <http://www.ssa.gov/OACT/ProgData/taxRates.html>

մարդկանց ապահովագրությունից, եթե անգամ պահանջվում է երկարաժամկետ բուժում, չեն կարող պայամանագիրը չեղյալ համարել, եթե ապահովագրվածը նոր է հիվանդացել, նոր համակարգով բժշկական հետազոտության ընթացքում ոչ մի գումար չի վճարվում և այլն) և նախատեսված է բարձրացնելու բժշկական ապահովագրության որակն ու մատչելիությունը: Այն տարբերվում է Medicaid-ից նրանով, որ ապահովում է անվճար բժշկական ծրագիր բնակչության ավելի աղքատ խավի համար: 2014թ. վերջին այս ծրագրից օգտվողների թիվը հասել է մոտ 20 մլն-ի, ըստ որի չապահովագրված անձանց թիվը կրճատվել է 2013թ. 18%-ից մինչև 13.4%:¹³⁸

ՀՀ-ում բժշկական ապահովագրության գործունեությունը դեռևս չի կարելի համարել բավարար: Բանն այն է, ինչպես ցույց է տալիս իրականությունը, ապահովագրական գործակալությունները փորձում են ամեն պատեհ և անպատեհ առիթներով խուսափել բժշկական ծառայությունների դիմաց վճարումներից, ինչպես նաև նեղացնում են վճարվող ծառայությունների ցանկը: Առանձին դեպքերում ապահովագրական գործակալությունը բժշկական ծառայության դիմաց վճարում է միայն այն դեպքում, երբ հիվանդի վիճակը ծայրահեղ է և նրան շատ ծանր վիճակով հասցնում են հիվանդանոց: Իսկ եթե հիվանդը ցանկանում է տվյալ հիվանդության գծով կանխարգելիչ բուժում ստանալ, վերը նշված վիճակին չհասնելու համար (ավելի քիչ ծախսումներով), ապա ապահովագրական գործակալությունը մերժում է վճարել նման ծախսերը: Հետևաբար, գտնում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ է զարգացնել մատչելի բժշկության ծրագիրը, ըստ որի ՀՀ յուրաքանչյուր բնակիչ ունենա բժշկական ապահովագրություն և գործի արտոնյալ պայամաններ, ինչպես ObamaCare ծրագրի պայամաններն են:

ԱՄՆ-ի բոլոր նահանգներում մեծ տարածում ունեն գործազրկության ապահովագրական ծրագրերը: Այս ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են աշխատավարձի վրա կիրառվող հարկի միջոցով, ընդ որում հարկի չափը կախված է նահանգից և

¹³⁸ *Health Care Coverage under the Affordable Care Act — A Progress Report*, David Blumenthal, M.D., M.P.P., and Sara R. Collins, *Ph.D. N Engl J Med* 2014; 371:275-281 July 17, 2014, <http://www.nejm.org/doi/full/10.1056/NEJMhpr1405667#t=article>

տարբեր ձեռնարկությունների աշխատավարձի ֆունդերից: Աշխատանքը կորցնելուց որոշակի ժամանակ անց (հիմնականում մեկ շաբաթ) ցանկացած ապահովագրված աշխատող ունենում է գործազրկության նպաստի ստացման իրավունք, որում ընդգրկված են գրեթե բոլոր աշխատողները և ծառայողները: Սովորաբար նպաստի չափը կազմում է մոտավորապես գործազուրկ դարձած աշխատողի աշխատավարձի մինչև 33%, ընդ որում, նշենք, որ նպաստի չափը և տրամադրման շարունակելի տևողությունը տարբեր նահանգներում տարբեր է: Եթե նպաստառուն աշխատանք չի գտնում, կորցնում է այդ նպաստի ստացման իրավունքը, և նորից մնում է գործազուրկ: Գտնում ենք, որ նման գործընթաց պետք է տեղայնացնել ՀՀ-ում առանձին վերապահումներով, այսինքն՝ վերականգնել գործազրկության նպաստի տրամադրման համակարգը՝ հաշվի առնելով տնտեսության զարգացվածության աստիճանը և ազգային առանձնահատկությունները:

Իսկ ինչ վերաբերում է պետական սոցիալական օգնության և աջակցության ծրագրերին, ապա ԱՄՆ-ում վերջիններս բազմաթիվ են և ընդգրկում են՝

1. Կարիքավոր ընտանիքներին ժամանակավոր օգնություն և տրամադրման ծրագիր,
2. Չքավորներին և րացուցիչ նպաստների տրամադրման ծրագիր,
3. Ցածր վարձատրվող անձանց եկամուտների հարկման արտոնությունների ծրագիր,
4. Բժշկական օգնության ծրագիր (1-ին կամ 2-րդ ծրագրերում գտնվողների համար ֆինանսավորվում են բժշկական ծախսերը),
5. Առևտրային կտրոնների տրամադրման ծրագիր (կտրոններին տրամադրման քանակը կախված է ընտանիքի եկամուտներից):

Յուրաքանչյուր պետության համար կարևորվում է ՀՆԱ-ում սոցիալական ապահովության ծախսերի տեսակարար կշիռը: Այդ ուսակ 3.2.1-ի տվյալները վկայում են, որ սոցիալական ապահովության ծախսերը տարբերվում են ըստ տարածաշրջանների: Եվրոպական երկրներում սոցիալական ապահովության համախառն ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 17.6-26.7%, Հյուսիսային Ամերիկայում՝ ՀՆԱ-ի 19.4%-ը, իսկ Աֆրիկայում համեմատաբար ավելի ցածր՝ 5.1%, ԱՊՀ երկրներում այդ ցուցանիշը 2010թ. տարեվերջին կազմել է 12.9%:

Ընդհանուր առմամբ, այն երկրներում, որոնք դասվում են բարձր եկամուտներ ունեցող երկրների շարքին, միջին և ցածր եկամուտ ունեցող երկրների համեմատ սոցիալական ապահովության ծախսերն

Տարածաշրջաններ և ՀՀ	Սոցիալական ապահովության և առողջապահության համախառն ծախսեր (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ)
Աֆրիկա	5.1%
Հյուսիսային Աֆրիկա	9.0%
Աֆրիկա Սահարայից հարավ	4.2%
Ասիա և խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան	5.3%
Մերձավոր Արևելք	8.7%
ԱՊՀ	12.9%
Արևմտյան եվրոպա	26.7%
Կենտրոնական և արևելյան եվրոպա	17.6%
Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ	13.2%
Հյուսիսային Ամերիկա	19.4%
Աշխարհում	8.6%
Հայաստան 2011	8.5%
Հայաստան 2015 բյուջեի կատարողականով	10.2%

ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն ՅՆԱ-ում:

Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրներին, ապա այստեղ սոցիալական ապահովության ծախսերը ՅՆԱ-ի նկատմամբ միջինը կազմել է 9%, ՅՆԱ-ում սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են ՅՆԱ-ի 7%-ը՝ զիջելով ԱՊՀ մյուս երկրներին՝ Բելառուս և ՌԴ: Բելառուսում քննարկվող ցուցանիշը գրեթե 1.6 անգամ, ՌԴ-ում մոտ 1.8 անգամ բարձր է ՅՆԱ-ի ցուցանիշից (տես աղյուսակ 3.2.2):

Աղյուսակ 3.2.1

Սոցիալական ապահովության և առողջապահության ծախսերը ըստ աշխարհի տարածաշրջանների, 2011թ. (%-ով ՅՆԱ-ի նկատմամբ)¹³⁹

Այսօր ԱՊՀ-ի մի շարք երկրներ պարբերաբար վերանայում են իրենց սոցիալական ապահովության համակարգերը՝ ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում այն ֆինանսապես ավելի կայուն

¹³⁹ International labour organization “Providing coverage in times of crisis and beyond”. World Social Security Report 2010/11, Geneva 2010, p.81. International labour organization “Building economic recovery, inclusive development and social justice”. World social protection report 2014/2015, Geneva 2014, p.297

դարձնելու համար: Ողջ տարածաշրջանում գերակա խնդիր է հիմնականում կենսաթոշակային համակարգի բարեփոխումները:

Շատ երկրներ փորձում են անհատական հաշիվները ներկայացնել համերաշխության համակարգերում (pay-as-you-go), որոշ երկրներ լիովին կամ մասամբ են մասնավորեցրել կենսաթոշակային համակարգը (ՌԴ, Ղազախստան): Կենսաթոշակային վճարների միջոցների սղության պատճառով ԱՊՅ երկրների մեծ մասը բարձրացրել է կենսաթոշակային տարիքը: Շատ երկրներ էլ զարգացնում և կատարելագործում են սոցիալական պաշտպանության համակարգերը՝ որպես բնակչության անապահով խավին նվազագույն եկամուտով ապահովելու միջոց:

Աղյուսակ 3.2.2.

Սոցիալական պաշտպանության ծախսերն ԱՊՅ երկրներում (%-ով ՀՆԱ նկատմամբ)¹⁴⁰

	Սոցիալական պաշտպանության ծախսերը %-ով ՀՆԱ նկատմամբ
ԱՊՅ երկրներ, այդ թվում	9.0
Բելառուս	11.8
Ռուսաստանի Դաշնություն	12.01
Հայաստան	6.97

ՌԴ բնակչության սոցիալական պաշտպանությունը ներառում է կենսաթոշակներ, սոցիալական նպաստներ, սուբսիդիաներ, փոխհատուցման վճարներ, արտոնյալ նպաստներ, պետական սոցիալական ապահովագրություն, սոցիալական ծառայություն¹⁴¹: Չնայած այն բանին, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին ձևավորվեցին երկու իրարամերժ կարծիքներ՝ մի կողմից կենսաթոշակային համակարգի կուտակային մասի ցածր շահույթաբերությունը, իսկ մյուս կողմից 2020-ական թթ.-ից սկսած ժողովրդագրական պայմանների վատթարացումը, ինչպես նաև կուտակային մասի պահպանումը, թե ոչ, այնուամենայնիվ, սկսած 2013թ.-ից ՌԴ կենսաթոշակային համակարգն անցում կատարեց

¹⁴⁰ Международная организация труда <<Обеспечение экономического восстановления, инклюзивного развития и социальной справедливости>>. Доклад о социальное защите в мире 2014/2015, , М.,МОТ, 2015г., с.393-404. Содружество независимых государств 2016г. Статистический ежегодник. М., 2016 <http://www.cisstat.com/>

¹⁴¹ Аверин А.Н. Государственная система социальной защиты населения: учебное пособие. М.: РАГС, 2010. - 124 с.. Платонов Н.М., Нестерова Г.Ф. Теория и методика социальной работы. М.: Академия 2010 384 с.

բարեփոխումների նոր փուլին՝ ապահովելով կենսաթոշակային իրավունքների և ապահովագրական կենսաթոշակների հաշվարկման նոր կարգի ներդրումը:

Համաձայն «Ապահովագրական կենսաթոշակների մասին» ՌԴ օրենքի առանձնացվում են ապահովագրական կենսաթոշակների հետևյալ տեսակները՝ ծերություն, հաշմանդամություն և կերակրողին կորցնելու ապահովագրական կենսաթոշակներ:¹⁴²

2015թ-ի հունվարի 1-ից ապահովագրական ծերություն կենսաթոշակները նշանակվում են 60 տարեկան տղամարդկանց և 55 տարեկան կանանց համար, ոչ պակաս քան 6 տարվա աշխատանքային փորձի (յուրաքանչյուր տարի 1 տարով ավելանալով՝ 2024թ. կկազմի 15 տարի) և ոչ պակաս քան 6.6 միավոր անհատական կենսաթոշակային գործակցի առկայությամբ (յուրաքանչյուր տարի 2.4 միավորով ավելանալով՝ 2024թ. կկազմի 30 միավոր):

Ըստ «Ապահովագրական կենսաթոշակների մասին» ՌԴ օրենքի՝ կիրառվում են «համերաշխության կենսաթոշակ» և «կուտակային կենսաթոշակ» հասկացությունները: Պետությունը երաշխավորում է միայն ապահովագրական կենսաթոշակները, ընդ որում որոշակի պայմաններով, իսկ քաղաքացին ինքն է ձևավորում իր կուտակային կենսաթոշակը: Ընդ որում, մինչև 1967թ. և ներառյալ ծնվածների կենսաթոշակները, համաձայն ծերություն կենսաթոշակային բանաձևի, չեն ներառի կուտակային մասը, որովհետև գործատուները վճարում են ապահովագրական վճարները միայն ապահովագրական կենսաթոշակների համար, իսկ 1967թ-ից հետո ծնվածներին հնարավորություն է տրվում ընտրելու իր կենսաթոշակային ապահովության տեսակը՝ կամ հրաժարվել կուտակային մասից և ողջ ապահովագրական վճարներն ուղղել ապահովագրական կենսաթոշակների ձևավորմանը, կամ շարունակել կուտակային կենսաթոշակի ձևավորումը:

Ընտրություն կատարելիս քաղաքացին պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները՝ կուտակային կենսաթոշակի ձևավորումը նվազեցնում է ապահովագրական կենսաթոշակի ձևավորման իրավունքը, և հակառակը, պետությունը երաշխավորում է ապահովագրական կենսաթոշակի ավելացում ոչ պակաս քան գնաճն ամենամյա ինդեքսավորման հաշվին, մինչդեռ կուտակային

¹⁴² Федеральный закон от 28.12.2013 N 400-ФЗ "О страховых пенсиях", статья 6

կենսաթոշակն այն խնայողություններն են, որոնք Պետական կենսաթոշակային հիմնադրամից անցնում են ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամներին կամ ներ են դրվում \$ինանսական շուկայում, պետության կողմից կուտակային կենսաթոշակը չի ինդեքսավորվում, ինչպես նաև կենսաթոշակային խնայողությունների եկամտաբերությունը կախված է բացառապես իրենց ներդրումների արդյունքներից, իսկ վնասի դեպքում երաշխավորվում է միայն կուտակային կենսաթոշակների վճարման համար կատարված ապահովագրական վճարների գումարը:

Այսպես, ՌԴ-ում ապահովագրական կենսաթոշակի իրավունք ձեռք կբերվի կախված կենսաթոշակային գործակիցներից (միավորներից), աշխատավարձի մակարդակից, աշխատանքային ստաժից և կենսաթոշակի անցնելու տարիքից (որքան քաղաքացին ուշ անցնի կենսաթոշակի, այնքան բարձր կլինի կենսաթոշակի ինդեքսավորումը): Փաստորեն, նոր համակարգով կենսաթոշակները կսկսեն ձևավորվել անհատական կենսաթոշակային գործակիցների (միավորների) միջոցով: Կուտակված միավորները կվերածվեն ռուբլու միայն կենսաթոշակների նշանակման ժամանակ: Կենսաթոշակի անցման ժամանակ միավորները յուրաքանչյուր տարվա համար ամփոփվում և բազմապատկվում են իրենց արժեքով: Միավորի արժեքը սահմանվում է պետության կողմից, որը յուրաքանչյուր տարի կավելանա ոչ պակաս քան նախորդ տարվա գնաճը (2014թ. 1 միավորը հավասար է եղել մոտ 64 ռուբլու):

ՌԴ-ում ներդրվող նոր կենսաթոշակային համակարգի դրական կողմերից մեկն այն է, որ խթանում է կենսաթոշակային տարիքը և րանակուց հետո շարունակել աշխատելը: Այսպես, եթե քաղաքացին պատրաստ է և կարող է աշխատել, ապա նա հնարավորություն ունի շարունակել իր աշխատանքային գործունեությունը, և դեռ ավելի, հետաձգելով կենսաթոշակի անցման ժամանակը, քաղաքացին յուրաքանչյուր բաց թողած տարի կստանա և րացուցիչ միավորներ և ավելի հաստատուն վճար, որի արդյունքում կենսաթոշակի անցնելիս կստանա ավելի բարձր կենսաթոշակ: Սա մի կողմից ոգևորիչ է քաղաքացու համար, մյուս կողմից ՌԴ տնտեսության զարգացման խթան: Նմանատիպ մոտեցում պետք է ցուցաբերել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում: Սույն օրենքում հոդված 5-

ի 4-րդ կետում նշվում է, որ «Անձը դադարում է սոցիալական վճար կատարելը, եթե լրացել է նրա կենսաթոշակային տարիքը, և նա հարկային մարմին է ներկայացրել դիմում սոցիալական վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ»: Կարծում ենք, այս տեղ պետք է հնարավորություն տալ մարդկանց, կենսաթոշակային տարիքը լրանալուն պես ֆիզիկական և մտավոր կարողությունների առկայության պայմաններում, շարունակել իրենց անժամկետ աշխատանքային գործունեությունը կենսաթոշակային տարիքում՝ իրականացնելով կենսաթոշակային տարիքի տարկետում, սակայն առանց լրացուցիչ միավորներ ստանալու, այլ իրավունք ունենալու կուտակումներ կատարել:

Նոր համակարգը բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև ՌԴ բնակչության վերարտադրության համար, մասնավորապես երեխայի խնամակալության ժամանակ մայրերը ևս շարունակում են կուտակել տարեկան միավորները՝ 1 երեխայի դեպքում տարեկան 1.8 միավոր, 2-րդի դեպքում՝ 3.6, 3-րդ և 4-րդ երեխայի դեպքում 5.4 միավոր: Այս գործընթացը ևս կարելի է տեղայնացնել ՀՀ-ում, և ներկայումս սահմանված է հետևյալ կարգը. մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողի համար (օգտին) խնամքի արձակուրդ գնալու օրվան հաջորդող ամսվանից մինչև երեխայի 2 տարին լրանալու ամիսը (ներառյալ) կատարվում է կուտակային հատկացում՝ ամսական 8000 դրամի չափով անկախ երեխաների քանակից¹⁴³: Գտնում ենք, անհրաժեշտ է մտցնել տարբերակում՝ 8000 դրամի չափը պահպանել 1 երեխայի դեպքում, իսկ հաջորդ երեխաների դեպքում կիրառել տարբերակման մոտեցում կուտակային հատկացման չափի աստիճանական ավելացման ուղղությամբ: Դա լրացուցիչ խթան է ՀՀ բնակչության ընդլայնված վերարտադրության նպաստման համար:

Հավանության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՌԴ կենսաթոշակային համակարգում առանձնացվել է կուտակային կենսաթոշակը՝ որպես առանձին կենսաթոշակի տեսակ, որը պարտադիր չէ քաղաքացու համար: Փաստորեն յուրաքանչյուր քաղաքացի ինքն է «արդար» կերպով վաստակում իր կենսաթոշակը միավորների տեսքով

¹⁴³ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 22.12.2010թ, ՀՕ-244-Ն

և ունի ընտրության ազատ հնարավորություն այս կամ այն կենսաթոշակային ապահովությունից օգտվելու:

Հետևաբար ՌԴ նոր կենսաթոշակային համակարգի նշված դրույթները կարելի է տարածել ՀՀ կենսաթոշակային համակարգի վրա, որը կբարձրացնի բնակչության վստահությունը պետության նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ պետք է գերազնահատել ցանկացած ազգային փորձ և դրան վերաբերվել որոշ վերապահումներով, քանի որ այն յուրաքանչյուր երկրի սեփականությունն է: Եթե մի երկրի փորձը ներդրվի մեկ այլ երկրում՝ առանց հաշվի առնելու վերջինիս առանձնահատկությունները՝ տնտեսության զարգացվածության աստիճանը, աշխարհագրական դիրքը, աշխարհաքաղաքական իրավիճակը, ազգային ավանդույթները, տնտեսության առանձնահատկությունները, ապա սպասվելիք արդյունքները կարող են սպասվածից շատ հեռու լինել: Հետևաբար, մեթոդների, գործիքների, բնակչության ընդգրկվածության, ծախսերի, արդյունքների գնահատման առումով օգտակար է յուրաքանչյուր փորձ, բայց պետք է միևնույն ժամանակ հաշվի առնել յուրաքանչյուր երկրի ազգային հատկանիշները: Առաջին հերթին կարևոր է գիտակցել այն, որ սոցիալական համակարգին անհրաժեշտ է ողջամտությունը, կայունությունը, հետևողականությունը, պետական երաշխիքների և անձնական պատասխանատվության միջև խելամիտ հավասարակշռությունը: Սոցիալական համակարգին պետք է վստահել: Այսօր մարդկային ներուժը ոչ միայն հումանիտար ոլորտ է, այն տնտեսական աճի, սոցիալական զարգացման, աշխարհում երկրի դիրքորոշման ռեսուրս է: Խոսքը գնում է ոչ թե մարդու համար ծախսերի, այլ մարդու վրա ներդրումներ կատարելու մասին: Կենսագործունեության բոլոր ոլորտներում առանց կրթության, առողջապահության և նորարարության չի լինի աճ: Աշխարհի բոլոր երկրներում հենց այս ոլորտներ պետք է ուղղվեն ռեսուրսները:

3.3 Սոցիալ ապաստանապահով խալի կենսամակարդակի բարձրացման արդյունավետ համակարգի ձևավորումը

ՀՀ սոցիալական ապահովության համակարգը կարևոր դեր է խաղում բնակչությանը սոցիալական աջակցության տրամադրման, աղքատների, անապահով խավի կենսամակարդակի բարձրացման, ծայրահեղ աղքատության մեղմման գործում:

Հասարակության առջև դրված տվյալ գերխնդիրները հնարավոր է լուծել միայն համակարգված միջոցառումների շնորհիվ, որի հիմնական գործող սուբյեկտներն են՝ պետությունը, տնտեսության մասնավոր հատվածը և ՀԿ-ները: Նշված սուբյեկտների մեջ որոշիչ դերը պատկանում է պետությանը, քանի որ հիմնականում նա է պատասխանատու առողջ ու բարեկեցիկ կյանքով ապրող հասարակությունն ստեղծելու և պահպանելու գործընթացում: Պետության սոցիալական աջակցությունը՝ որպես գործիք, կիրառվում է՝ աջակցելու հասարակության այն անդամներին, ովքեր չեն շահում տնտեսական զարգացման արդյունքում տրված հնարավորություններից: Հետևաբար, սոցիալական աջակցության քաղաքականության ոլորտում բարեփոխումներն անհրաժեշտ և պարտադիր են՝ նախ դրական արդյունքների հասնելու համար նյութական աջակցություն տրամադրող համակարգի ստեղծման գործում, և, երկրորդ, սոցիալական աջակցության ծրագրերի շահագործման շրջանակների համար:

Բնակչության «խոցելի» հատվածն անապահով խավն է, վերջինիս ավտորոշումն առաջադրված, միմյանց հետ փոխկապակցված խնդիրներն են, որոնց «ապաքինումը» պետության ձեռքում է, իսկ «առողջացման» արդյունքում կձևավորվի միջին խավ: Քանի որ, ինչպես նշել ենք, միջին խավի կենսամակարդակի իջեցման պատճառով է հիմնականում ձևավորվում անապահով խավը, ներկայացնենք ՀՀ միջին խավի կենսամակարդակը ձևավորող հիմնական գործոնները:

Ովքե՞ր են կազմում միջին խավը: Այս հարցին հստակ պատասխան չկա: Տարբեր ոլորտի մասնագետներ «միջին խավ» հասկացությունը յուրովի են մեկնաբանում: Այսպես, տնտեսագետներն այն դիտարկում են եկամուտների տեսանկյունից, սոցիոլոգները՝ սոցիալական դիրքի, քաղաքագետները՝ ըստ քաղաքական գիտակցության, իրավաբանները՝ իրավագիտակցության տեսանկյունից, մինչդեռ, ըստ մեզ, միջին խավն այս բոլոր

դրսևորումների համալիր ամբողջությունն է: Այն գտնվում է բնակչության ստորին խավի՝ աղքատի և վերին խավի՝ հարուստի միջև և կապող օղակ է այդ երկու ծայրահեղ բևեռների համար:

Տնտեսագիտության տեսանկյունից միջին խավը կազմում է տնտեսապես ակտիվ բնակչության այն զանգվածը, որն ունի հնարավորություն աշխատելու և աշխատած միջոցները նյութականացնելու: Նշել ենք, որ ներկայումս ՀՀ բնակչության կազմում ավելի սովոր տեսակարար կշիռ ունեն միջին խավի այն հատվածը, ովքեր իրենց եկամուտների և ծախսերի մակարդակով ավելի մոտ են աղքատ խավին, որոնց մի մասն էլ համալրում է անապահով խավը: Իհարկե, չենք ժխտում հայ հասարակությունում միջին խավի առկայությունը, սակայն, շուկայական հարաբերությունների զարգացմամբ, բնակչության կրթական մակարդակի աճով հանդերձ, միջին խավի ներկայացուցիչների բնորոշումները հետ են մնում զարգացած երկրների միջին խավի ներկայացուցիչների բնորոշումներից: Ըստ միջազգային չափորոշիչների՝ միջին խավում դասակարգվող ընտանիքներին բնորոշ է ա) բարձրագույն կրթություն և մասնագիտական որակավորում, բ) կայուն աշխատանք, զբաղվածություն, գ) զբաղվածությունը մտավոր աշխատանքով, դ) կայուն եկամտի մակարդակ, ե) սեփականություն (բնակարան, տուն, փոխադրամիջոց), զ) ծախսերի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում կրթական և առողջապահական ծառայություններին ուղղվող ծախսերը, է) ակտիվ մշակութային կյանքի մասնակցությունը, ը) ընտանեկան արձակուրդներն ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս, և այլն¹⁴⁴:

Ինչ վերաբերում է անապահով խավին, այն մի կողմից գտնվում է աղքատության վերին ռիսկային գոտում, մյուս կողմից՝ միջին խավի ստորին ռիսկային գոտում: Այս առումով ՀՀ կառավարության, պետական մարմինների, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածի և ՀԿ-ների կողմից իրականացվող միջոցառումները պետք է ուղղված լինեն անապահով խավի կենսամակարդակի բարձրացմանը, միջին խավի տեսակարար կշիռ ավելացմանը, նրանց եկամուտների պաշտպանմանը: Մասնավոր հատվածի շահագրգռվածությունը պայմանավորված է նրանով, որ նրանց կողմից թողարկվող

¹⁴⁴ Մելքունյան Յու. Միջին խավն արդի հայ հասարակությունում, հիմնական բնութագրիչներ և զարգացման հեռանկարներ, սեղմագիր սոց.գիտությունների թեկ., Եր., 2013թ., 26 էջ

արտադրանքի և ծառայությունների սպառման գերակշռող մասն ապահովում են միջին խավը: Նշենք նաև, որ միջին խավի տեսակարար կշռի ավելացմամբ մեծանում է ամբողջական սպառման ծավալները, մասնավոր հատվածի եկամուտները, պետական բյուջեի եկամտային մասը՝ վերջինս թույլ տալով մեծացնելու ֆինանսավորման ծավալները հիմնախնդրի և ծման գործում:

ՀԲ-ը միջին խավին է դասում այն տնային տնտեսություններին, որոնց 1 շնչի հաշվով սպառումը կազմում է 10 և ավելի ԱՄՆ դոլար (2005թ. գնողունակությամբ): Այս չափանիշների համաձայն՝ Հայաստանում միջին խավը կազմում է բնակչության 2-3% (տե՛ս հավելված 3.3.1):¹⁴⁵

ՀՀ-ում, ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի, բնակչության 36.1%-ը (ըստ առանձին տնտեսագետների սոցիալական հարցումների՝ բնակչության 49.12%-ը) իրեն համարել է միջին խավի ներկայացուցիչ, որի զգալի մասը պատրաստ է արտագաղթել երկրից¹⁴⁶: Իհարկե, սավկայում է միջին խավին ուղղված պետական քաղաքականության անկայունության և հասարակության միջին խավին ոչ վայել կյանքի պայմաններ ունենալու մասին, մինչդեռ ԱՄՆ-ում մշակված է միջին խավին ուղղված պետական նպատակային քաղաքականություն: Պատահական չէ, որ ԱՄՆ նախկին նախագահ Բարաք Օբաման 2009թ. հունվարի 30-ին տարեկան զեկույցում ընդգծել է. «Մեր տնտեսության ուժը կարելի է չափել մեր միջին խավի ուժով», իսկ փոխնախագահ Բայդենը շեշտել է. «Ուժեղ միջին խավը հավասարազոր է ուժեղ Ամերիկային, մենք չենք կարող ունենալ մեկը՝ առանց մյուսի: Մեր պարտականությունն է աջակցել միջին խավին՝ հասարակության ողնաշարին, վերելքների և վայրէջքների ժամանակ»¹⁴⁷: Նման ընկալման և մոտեցման կարիք է զգացվում նաև ՀՀ-ում:

ԱՄԿ-ի կողմից 2015թ. հունիսին հրապարակված զեկույցում նշվում է, որ շատ երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, միջին խավը կրճատվել է: Դա պայմանավորված է մի շարք գործոններով: ՀՀ-ում միջին խավի տեսակարար կշռի նվազման պատճառներից մեկն

¹⁴⁵ *Всемирный банк: Доклад об экономике России, Кризис доверия обостряет экономические проблемы России, N 31, Март 2014, с.34*

¹⁴⁶ *Մեյրույան Յու. Միջին խավն արդի հայ հասարակությունում, հիմնական բնութագրիչներ և զարգացման հեռանկարներ, սեղմագիր սոց.գիտությունների թեկ., Եր., 2013թ. 26 էջ: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱԿԾ, էջ 200*

¹⁴⁷ *Annual Report of The White House Task Force on the Middle class, February, 2010, p. 1-2*

արտագաղթն է: Ըստ սոցիոլոգների՝¹⁴⁸ ՅՅ-ից արտագաղթում են ոչ թե աղքատները, այլ միջին խավը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ արտագաղթի ուղին բռնել են ոչ թե նրանք, ովքեր չունեն աշխատանք կամ չեն կարողանում հարթել ֆինանսական խնդիրները, այլ նրանք, ում վերջնական արդյունքն այս կամ այն պատճառով չի բավարարում: Բացի դրանից, այլ երկրում հարմարվելու և ավելի լավ կյանքի պայմաններ ունենալու համար անհրաժեշտ է նախնական գումար, որը չունեն աղքատները:

Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, 2015թ. միջպետական միգրացիոն տեղաշարժերի 89.3% ուղղված է ՌԴ: Արտագաղթի հիմնական պատճառն աշխատելն է: Ինչնօրեն ՅՅ քաղաքացիներն արտագաղթում ՌԴ: Բանն այն է, որ ՌԴ-ում հնարավոր է ապահովել կյանքի ավելի լավ պայմաններ, քան ՅՅ-ում՝ հիմք ընդունելով նվազագույն աշխատավարձի, միջին աշխատավարձի և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքները: Այդ նպատակով կատարենք վերլուծություն: Ընդունենք, որ ՅՅ-ից արտագաղթում է միջին խավը (վերջինիս կազմում ներառված է նաև միջին խավի ստորին դեցիլային գոտում գտնվող անապահով խավը), այսինքն՝ նվազագույն աշխատավարձից բարձր և միջին աշխատավարձից ցածր աշխատավարձ ունեցողները: Հավարկենք այսպես կոչված «անապահով խավի միջին աշխատավարձ» (այն կարող ենք ստանալ նվազագույն աշխատավարձի և միջին ամսական անվանական աշխատավարձի թվաբանական միջինով), որը ՅՅ-ում կազմել է 105000 դրամ: Վերջինս 2.4 անգամ գերազանցել է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին: Աշխատելով ՌԴ-ում՝ ՅՅ-ից արտագաղթողների «անապահով խավի միջին աշխատավարձը» կազմել է 205500 դրամ (2014թ. գնողունակությամբ), որը գերազանցել է ՌԴ նվազագույն սպառողական զամբյուղին 2.3 անգամ: Ինչպես տեսնում ենք, հավասար են երկու երկրներում նվազագույն պահանջմունքների բավարարման հնարավորություններն ըստ «անապահով խավի միջին աշխատավարձի» ցուցանիշի: Չնայած որ ՅՅ-ում նվազագույն սպառողական զամբյուղի մեջ ներառվում են 470 անուն ապրանք և ծառայություն¹⁴⁹, իսկ ՌԴ-ում՝ 156 անուն ապրանք և ծառայություն¹⁵⁰, այնուամենայնիվ, մարդիկ գերադասում են

¹⁴⁸ © 2009-2015 NEWS.am <http://news.am/rus/news/218554.html>

¹⁴⁹ © 2010 CBA. <https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx>

¹⁵⁰ https://ru.wikipedia.org/wiki/Потребительская_корзина

աշխատել և իրենց նվազագույն պահանջմունքները բավարարել այլ երկրներում:

Ստացվում է, որ ՀՀ-ում մարդիկ, իրենց «անապահով խավի միջին աշխատավարձով» բավարարելով նվազագույն պահանջմունքները, կյանքի պայմանների բարելավման համար կարող են տրամադրել մնացած եկամուտը՝ 59800 դրամ, իսկ ՌԴ-ում աշխատելով՝ այդ գումարը կկազմի 116570 դրամ: Եթե քաղաքացին փորձում է իր հանգիստն անցկացնել այլ երկրում, օրինակ Եգիպտոսում, ապա Եգիպտոս մեկնելու ինքնաթիռի տոմս ձեռք բերելու համար (տոմսի մոտավոր արժեքն ընդունենք 200000 դրամ) ՀՀ-ում պետք է աշխատել 3.5 ամիս, մինչդեռ ՌԴ-ում ընդամենը 1.7 ամիս: Դա խոսում է այն մասին, որ մարդն աշխատելով ՌԴ-ում, կատարելով նույն բնույթի աշխատանք ինչ ՀՀ-ում, ունի ավելի բարձր գնողունակություն, հետևաբար նաև կենսամակարդակ (հաշվի առնենք նաև, որ ռուսական ռուբլու կուրսը զգալի իջել է և 2013թ. 13.3-ի դիմաց 2014թ. կազմել 10.8, իսկ 2015թ.՝ 7.89):

Սղյ ու սակ 3.3.1

Նվազագույն պահանջմունքների բավարարման համեմատական ցուցանիշներ, 2014թ. ՀՀ դրամ (2014թ. գնողունակությամբ)¹⁵¹

	Հայաստան	Ռուսաստան
Նվազագույն աշխատավարձ	50000/55000	60000
Միջին ամսական անվանական աշխատավարձ	158580	350946
Նվազագույն սպառողական զամբյուղ 1 շնչի հաշվով	44500	88927

Հետևաբար, աշխատող բնակչության արտագաղթը մեղմելու համար անհրաժեշտ է բարձրացնել աշխատանքի փոխհատուցման չափն ինչպես աշխատանքային տարիների ընթացքում, այնպես էլ աշխատանքային տարիներից հետո: Գտնում ենք, որ յուրաքանչյուր աշխատող մարդու համար շարժառիթ է իր աշխատանքի դիմաց ստացած փոխհատուցումը, որն էլ ստիպում է կամ մնալ երկրում կամ բռնել արտագաղթի ուղին:

Պետության կողմից զբաղվածության և աշխատանքի շուկայի պետական կարգավորման համատեքստում, աշխատատեղերի ստեղծման խթան կարող են լինել հարկային և վարկային լծակները կամ այլ մեխանիզմներ, որոնք լայնորեն կիրառվում են համաշխարհային պրակտիկայում: Մասնավորապես, որպեսզի ձեռնարկությունները

¹⁵¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, ՀՀ ՄՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015, ՀՀ ՄՎԾ, Федеральная служба государственной статистики, 2015 http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/wages/ և հեղինակի հաշվարկներ

լրացուցիչ նոր աշխատատեղեր ստեղծեն, աշխատողների վերապատրաստման ծախսեր կատարեն, ցածր մրցուկնակություն ունեցող անապահով խավերին, ինչու էլ նաև հաշմանդամներին աշխատանքի ընդունեն, պետությունը պետք է որոշակի հարկային արտոնություններ տրամադրի, ինչպես արվում է միջարթ զարգացած երկրներում: Վարկային արտոնությունների տեսանկյունից պետությունը պետք է ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր տրամադրի՝ նոր աշխատատեղերի ստեղծման, արտադրության ընդլայնման, ինչպես նաև անապահով խավերին աշխատատեղերով ապահովելու համար:

Այսօր միջին խավի ձևավորման համար կարևոր խոչընդոտ է մի կողմից բարձրագույն և մասնագիտական կրթության անմատչելիությունը և անհասանելիությունը, մյուս կողմից բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցողների մասնագիտական որակավորմանը ոչ համապատասխան աշխատանքը:

Կրթությանն ուղղված հանրային միջոցների կրճատումը (պետական բյուջեից կրթությանն ուղղված հատկացումները 1990-ական թթ. սկզբին կազմում էին ՀՆԱ-ի 7-9%-ը, 1990-ական թվականների վերջին կրճատվեցին մինչև ՀՆԱ-ի ընդամենը 2%-ի մակարդակը. 2009թ. ցուցանիշը կազմել է 3.4 %, իսկ 2015թ.՝ 2.4%)¹⁵², տնային տնտեսությունների ոչ համաչափ ծախսերը կրթության վրավտանգում են կրթության համատարած հասանելիությունը: Այս ամենին զուգահեռ ի հայտ է գալիս նաև անհավասարություն կրթության որակի առումով: Տարբերությունները որակյալ կրթության հասանելիության առումով հարուստ և աղքատ տնային տնտեսությունների, քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև գնալով դառնում են ավելի նշանակալի¹⁵³: Բարձրագույն կրթության համակարգում աղքատ բնակչության ընդգրկվածության ցուցանիշը մոտավորապես 5 անգամ, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ մոտավորապես 8 անգամ ցածր է ոչ աղքատ բնակչության ընդգրկվածության

¹⁵² © 1999-2013, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, ՀՀ բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններ, <http://www.mfe.am/index.php?cat=76&lang=1>

¹⁵³ Եվրոպական Հանձնաժողով, «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» զեկույցի համառոտագիր, 2011թ. էջ1-14

ցուցանիշից¹⁵⁴: Դրա պատճառներից է այն, որ պետական բյուջեում կրթությանը հատկացվող միջոցների կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը տրամադրվող միջոցները՝ մոտ 3 անգամ գերազանցելով նախնական մասնագիտական և միջին մասնագիտական, նաև բարձրագույն կրթությանն ուղղվող միջոցներին:

Երկայումս քանի դեռ ունենք բավական բարձր գործազրկության մակարդակ (2015թ. 18.5%) և աշխատավարձի ցածր մակարդակ, երկար ժամանակ կպահանջվի և ուժեղ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տնտեսական աճն ուղղել տնտեսապես ակտիվ բնակչությանն առավել մեծ արտադրողականությամբ աշխատելուն, նորամուծական արդյունք ստեղծելուն, որը ճանաչում կստանա ոչ միայն ներքին, այլ նաև համաշխարհային շուկայում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս (տե՛ս Յավելված 3.3.2), որ ՀՀ-ում 2008-2015թթ. էական փոփոխություններ չեն կրել ըստ կրթական մակարդակի տնտեսական ակտիվության ցուցանիշները: 2015թ. տնտեսապես ակտիվ բնակչության կազմում գործազուրկները կազմել են 243.7 հազար մարդ, որը բավականին հուզող է: Գործազրկության մակարդակի կրճատմամբ կարելի է նաև կրճատել աղքատության մակարդակը, բարձրացնել անապահովների կենսամակարդակը, քանի որ աղքատության ռիսկն առավել բարձր է գործազուրկների շրջանում (38.6%)¹⁵⁵:

Կարևոր խնդիր է այն, որ զբաղված 1316.7 հազար մարդուց ընդամենը 379.5 հազարն ունի բարձրագույն և հետբուհական կրթություն, որը փաստում է ոչ որակով աշխատուժե ունենալու մասին: Այսինքն՝ հարկավոր է հնարավորինս շատ բարձրագույն կրթություն ունեցողների ներգրավել տնտեսական գործունեության մեջ, քանի որ այդ մարդկանց զբաղվածությունը տնտեսության զարգացման հիմքն է կազմելու:

Յետաքրիք է նաև, որ գործազուրկների զգալի մասը (17.9%) ունի բարձրագույն և հետբուհական կրթություն: Սակապված է այնպիսի արդիական խնդիրների հետ, ինչպիսիք են՝ բարձրագույն կրթություն ստացողն իր մասնագիտությամբ աշխատելով

¹⁵⁴ ՀՀ կառավարության որոշում կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով նախատեսված ենթածրագրերին հավանություն տալու և ՀՀ ֆինանսների նախարարությանը գումար հատկացնելու մասին, 14.03.2013թ, N 270-Ն


¹⁵⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, էջ 56

վաստակում է ավելի քիչ, քան եթե կատարի ոչ բարձրագույն կրթություն և պահանջող աշխատանք, քանի որ այսօր աշխատանքային ավելի մեծ պահանջարկ ունեն բարձրագույն կրթություն և բարձր որակավորում չպահանջող մասնագիտությունները՝ մատուցող, վաճառող, վարորդ, վարսահարդար և այլն (չնայած որ այս դեպքում էլ պարտադիր պահանջ է կրթություն ունենալը. դրահամար էլ բարձր է նաև միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության մակարդակը՝ 22.0%):

Մյուս կողմից, զգալի է դառնում անցումը կայուն վարձատրություն և ապահովող աշխատանքից դեպի պատահական և ոչ ֆորմալ աշխատանքների կամ ինքնազբաղվածության: Այս դեպքում, բնական է, որ ցածր եկամուտներով զբաղվածները չունենալով շարժառիթ, բացի «օրվա հացը» վաստակելու խնդրից, ինքնակատարելագործման վրա գումարներ չեն ծախսում, որն էլ կհանգեցնի անհատի՝ որպես կադրի մրցունակության հնարավորությունների անկմանը և որակյալ աշխատուժով ներգրավելու հաշվին տնտեսական աճի ներուժի բացակայությանը: Նման պայմաններում բարձրագույն կրթություն ունեցող զգալի թվով երիտասարդներ և միջին տարիքի աշխատուժը բռնում է արտագաղթի ուղին, սկսվում է «ուղեղների արտահոսք», մեծանում աշխատանքի միգրացիայի մակարդակը, որի արդյունքում երկրում մնում են հիմնականում տարեցները, ովքեր ի վիճակի չեն մասնակցելու նոր արժեքների ստեղծմանը և գտնվում են ինամքի կարիքի ներքո:

Գծապատկեր 3.3.1

Բնակչության առանձին հատվածների կրթական մակարդակը ¹⁵⁶



¹⁵⁶ Morgandi M., J. Posadas and T. Damerou. 2014. "Activation for Poverty Reduction. Realizing the Potential of Armenia's Social Safety Nets". Social Protection and Labor Global Practice, the World Bank, Washington DC, p.30, 34

Ըստ ՀԲ-ի գնահատման՝ ՀՀ աղքատ բնակչության մոտ 39%-ը և ընտանեկան նպաստ ստացողների 29%-ն ունեն բարձրագույն կրթություն, որը միջազգային չափորոշիչներով բավականին բարձր ցուցանիշ է (տես գծապատկեր 3.3.1): Սակայն վերջիններիս ընդգրկվածության աստիճանն ավելի բարձր է տնտեսության ոլորտներից գյուղատնտեսության, հանքարդյունաբերության ոլորտներում, իսկ անհամեմատ ցածր՝ բարձր հմտություններ պահանջող ծառայություններում:

Հիմք ընդունելով ներկայիս աշխատառուկայի պահանջները՝ կարելի է փաստել, որ զբաղվածության և կրթական մակարդակի միջև առկա է դրական փոխկապվածություն:

Մյուս կողմից, քանի որ կրթությունը և մասնագիտական գործունեության բնույթը միջին խավի առանձնահատկություններից են, ուստի ՀՀ կառավարությունը կրթական բարեփոխումների ծրագրերը մշակելիս պետք է ընդգրկի մասնավոր հատվածի և ՀԿ-երի ներկայացուցիչներին, կազմի միջոցառումների այնպիսի համակարգ, որը կբավարարի նշված սուբյեկտների պահանջները, քանի որ մարդիկ, կրթություն ստանալով, վերջի վերջո, այն «օգտագործելու են» տնտեսության իրական և ֆինանսական հատվածում: Բացի այդ, ելնելով միջազգային փորձից, պետք է խրախուսել մասնավոր հատվածին և ՀԿ-երին ֆինանսավորելու առաջադեմ երիտասարդությանը՝ կրթվելու ու բարձրակարգ մասնագետներ դառնալու համար, քանի որ կրթված հասարակություն ունենալը ոչ միայն պետության, այլ նաև տնտեսվարող սուբյեկտների շահերից են բխում: Ընդհանուր առմամբ, կրթական բարեփոխումների ծրագրերը պետք է ուղղված լինեն՝

- ընդլայնելու անվճար համակարգում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները՝ պետության կողմից ավելացնելով ԲՈՒՀ-երում անվճար տեղեր, իսկ գործատուներին շահագրգռելով մեծացնել ուսանողներին նպատակային ֆինանսավորման ծավալները: Սա հնարավորություն կտա հասարակության յուրաքանչյուր անդամի համար ստեղծել հավասարելակետային պայմաններ,

- ապահովելու միջնակարգ կրթության արդյունքների և ԲՈՒՅ ընդունվելու համար պահանջվող գիտելիքների համապատասխանեցում,
- համապատասխանեցնելու կրթությունը տնտեսության, գիտության և հասարակության ներկայիս պահանջներին՝ ստեղծելով մասնագիտական կողմնորոշման համակարգ, որը պետք է հիմնվի անձի մասնագիտական նախապատվությունների տրամադրման առաջնային գործոնների և դրանք իրականացնելու ուղիների, միջոցների հաշվառման վրա,
- զարգացնելու և հզորացնելու աշխատաշուկայի պահանջներին և միջազգային ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունները,
- ընդլայնելու ուսանողական նպատակային դրամաշնորհների ցանցը, նաև գործատուների կողմից նպատակային ֆինանսավորման համակարգը,
- նպաստելու խթանել ԲՈՒՅ-երի և գործատուների փոխհարաբերությունները, ուսանողների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի տեղավորման խնդիրներին լուծումը,
- պարբերաբար իրականացնելու մասնագիտական կադրերի վերապատրաստում, պայմանագրային հիմունքներով՝ արտերկրում ուսանելու և հայրենիքում աշխատանքով ապահովված լինելու սկզբունքով՝ ֆինանսավորման գործընթացին ընդգրկելով մասնավոր հատվածին և ՅԿ-երին:

Վերոնշյալը հիմք կծառայի տնտեսություն-կրթություն-աշխատաշուկա որակական կապի և արդյունավետ հավասարակշռության ապահովման գործում:

Առողջապահության ոլորտի բարեփոխումները ևս կնպաստեն անապահով խավի կենսամակարդակի բարձրացմանը և միջին խավի տեսակարար կշռի ավելացմանը: Չնայած վերջին մի քանի տարիներին այս ոլորտում իրականացված բարեփոխումներին՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումն էականորեն կազդի, առաջին հերթին, աղքատ և անապահով, այնուհետև ողջ բնակչության կյանքի պայմանների բարելավման վրա: Չնայած որ առողջապահության ոլորտին պետական ֆինանսավորումը 2015թ. ունեցել է աճման միտում՝ կազմելով 6.0% (առողջապահության ոլորտին ուղղված

համախմբված բյուջեի փաստացի ծախսերը 2013թ. կազմել են 5.5%)¹⁵⁷՝ այսօր շուկայական օրենքներին համապատասխան առողջապահական առանձին ծառայություններ, որոնք խիստ անհրաժեշտ են, սակայն ունեն բարձր գներ, դարձել են անմատչելի, անհասանելի ոչ միայն աղքատների և անապահովների, այլև միջին խավի ներկայացուցիչների համար: Մարդիկ կանգնած են լուրջ ֆինանսական խնդիրների առջև՝ բախվելով բժշկական ծառայություններից և դեղորայքից օգտվելու անհրաժեշտության հետ:

Գտնում ենք, որ նպատակահարմար կլինի ըստ ՀՀ կառավարության N 318-Ն որոշման¹⁵⁸ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցողների խմբերից բացի արտոնություններ տրամադրել նաև նշված խմբերի մեջ չընդգրկված, սակայն նյութական կարիք ունեցող անձանց, մասնավորապես՝ այն տնային տնտեսություններին, ովքեր ստանում են միջին աշխատավարձից ցածր աշխատավարձ, այն կենսաթոշակառուներին, ովքեր ստանում են միջին կենսաթոշակից ցածր կենսաթոշակ և ժամանակավոր գործազուրկներին:

Մասնավոր հատվածին բերել նաև այն գիտակցության, որ առողջ, կենսունակ աշխատող ունենալու դեպքում ձեռնարկության շահութաբերությունն ավելի բարձր մակարդակի վրա է, քան վատառողջ աշխատանքային կազմ ունենալու դեպքում: Աշխատողների առողջության ապահովմանն ուղղվող ներդրումների հետհատույցը մի քանի անգամ ավելի բարձր է, քան, երբ կատարում են տնտեսում այդ ուղղությամբ: Դրա մասին է վկայում միջազգային փորձը և տնտեսագետների այն տեսակետը, որ ներդրումները մարդկային կապիտալում բերում է զգալիորեն ավելի բարձր հետհատույց քան՝ ներդրումները ֆիզիկական կապիտալում¹⁵⁹:

Դեղերի որակի ապահովման պետական վերահսկողությունը սահմանվում է միայն դեղերի շրջանառության բոլոր փուլերի՝ արտադրության, պատրաստման, պահպանման, իրացման, կիրառման վրա,

¹⁵⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ Եր.2016թ. էջ 34

¹⁵⁸ ՀՀ կառավարության որոշում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն 24.03.2004

¹⁵⁹ Новикова Валентина Федоровна Инвестиции в человеческий капитал в России как фактор социально-экономического развития страны// Современные технологии управления. ISSN 2226-9339. — №2 (38). Номер статьи: 3805. Дата публикации: 2014-02-08 . Режим доступа: <http://sovman.ru/article/3805/>

այլ և պետական վերահսկողությունն պետք է սահմանվի նաև դեղերի գների նկատմամբ, մասնավորապես՝ կենսական նշանակություն ունեցող դեղերի համար սահմանվեն ֆիքսված գներ՝ փոփոխությունների չենթարկվելով գնաճային տատանումներից, ինչպես նաև վերահսկողությունն հաստատել բնակչության առանձին խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի անվանական և քանակական ապահովման նկատմամբ:

Ավելի առողջ և տնտեսական աճը խթանող մարդկային կապիտալ կծնավորվի, եթե իսպառ վերանան բժշկական ծառայությունների դիմաց ոչ ֆորմալ վճարումները, քանի որ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 51.7% և ֆինանսական վատ վիճակը՝ 23%¹⁶⁰: Փաստորեն, մարդիկ, խուսափելով նման վճարումներից, չեն անցնում ինչպես պրոֆիլակտիկ, այնպես էլ անհրաժեշտ հետազոտությունները՝ արդյունքում կանգնելով ավելի բարդ առողջական խնդիրների առջև:

Կարևոր խնդիր է նաև աղքատ տնային տնտեսությունների համար անվճար բժշկական փաթեթից օգտվելը: Քանի որ վերջինս պայմանավորված է ընտանեկան նպաստ ստանալու հետ, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության բարձրացումը, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության աստիճանը: 2015թ. դրությամբ ըստ աղքատության մակարդակի՝ պետական պատվերի իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 8%-ը, աղքատների՝ 7.7%-ը և ոչ աղքատների՝ 8.8%-ը: Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների միայն 12.2%-ն է ունեցել այդ փաթեթից օգտվելու իրավունք, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 9.4%-ը, աղքատների՝ 12.5%-ը և ոչ աղքատների՝ 12%-ը: Ինչ վերաբերում է ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառված տնային տնտեսություններին, ապա պետական պատվերի իրավունք ունեցել է 7.8%-ը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 4.5%-ը, աղքատների՝ 6.3%-ը և ոչ աղքատների՝ 8.3%-ը: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 1.4%-ը տեղեկացված էլ չէին փաթեթից օգտվելու իրավունքի մասին¹⁶¹:

Վերջապես, կարևոր խնդիր է նաև մարզերում տեղակայված հիվանդանոցային հաստատությունների արդիականացումը,

¹⁶⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 146

¹⁶¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 ՀՀ ԱՎԾ 2015, էջ 148-149

ժամանակակից բժշկական տեխնիկայի և սարքավորումների ներդրումը, իսկ գյուղական բնակավայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը վերաբերող հարցերը դեռևս շարունակում են մնալ պետական քաղաքականության օրակարգում¹⁶², քանի որ բժշկական ծառայությունների մատուցման որակը դրա դիմաց տրվող վճարները չեն համապատասխանում միմյանց:

Բնակչության անապահով խավի բնակ-կոմունալ պայմանների բարելավման համար առաջարկում ենք ընդլայնել Էներգաարդյունավետության վարկերի տեսակները: Մասնավորապես, սոցիալական Էներգաարդյունավետ բնակարանային ֆինանսավորման ծրագրի շրջանակում ՀՀ-ում 2013թ. մեկնարկել է բնակարանային ֆինանսավորման սոցիալական և Էներգաարդյունավետության բարելավմանն ուղղված ծրագիր, որը 2014թ. անվանվեց «Ջերմ օջախ»: Ծրագիրն իրականացնում է Ազգային Հիփոթեքային Ընկերությունը՝ Ֆրանսիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Ծրագիրը նպատակ ունի հնարավորություններն ընձեռելու ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին՝ իրականացնել բնակարանների Էներգաարդյունավետ վերանորոգում, խուսափել էլեկտրաէներգիայի և գազի սակագների թանկացումների բացասական հետևանքներից, բնակարանի ջերմության և էներգիայի կորուստներից, բարելավել կենսապայմանները, նվազեցնել կոմունալ ծախսերը, ինչպես նաև խթանել Էներգափնայող բնակարանային ֆոնդի զարգացումը ՀՀ քաղաքներում և գյուղերում:

Ծրագրի շրջանակում տրամադրվում է երկու վարկատեսակ՝ միկրո կամ փոքր վերանորոգման վարկեր (500-4000 եվրոյին համարժեք դրամ, 13-14%, ժամկետը նվազագույնը 5 տարի, առանց գրավի) և Էներգաարդյունավետ վարկեր (4001-10000 եվրոյին համարժեք դրամ, 11%, նվազագույնը 10 տարի, գրավով ապահովված) 5-10% դրամաշնորհ ստանալու հնարավորությամբ՝ կախված Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծախսերի ընդհանուր գումարից և ստացված Էներգափնայողության աստիճանից¹⁶³:

¹⁶² ՀՀ 2015-2017թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 216

¹⁶³ «Ջերմ Օջախ» սոցիալական էներգարդյունավետ բնակարանային ֆինանսավորման ծրագիր <http://jermojakh.am/?lang=hy>,

Փաստորեն, այս ամենը կնպաստի ընտանիքների, տնային տնտեսությունների կենսամակարդակի բարձրացմանը, սակայն անհրաժեշտ է զարգացնել և ընդլայնել նմանատիպ վարկերի տեսակները, որը ստանա նաև պետական աջակցությունը, մասնավորապես, սահմանվի էներգաարդյունավետ բնույթի ապրանքատեսակների նկատմամբ հարկային, մաքսային և վարկային արտոնություններ, կազմակերպի և տրամադրվի գովազդային երաշխիքներ և այլն: Ընդ որում այլ երկներում նմանատիպ վարկերը տրամադրվում են ավելի արտոնյալ պայմաններով¹⁶⁴:

Ընդհանրացնելով անապահով խավի պաշտպանվածության արդիվիճակի գնահատումը, կարող ենք գծապատկերի տեսքով (տես գծապատկեր 3.3.1) ներկայացնել պետական մարմինների-մասնավոր հատվածի-ՅԿ-երի միջոցառումների այն համալիրը, որը կհանգեցնի ՅՅ-ում անապահով խավի պաշտպանվածության արդյունավետության և կենսամակարդակի բարձրացմանը: Այն կարող ենք անվանել

միջոցառումների իրականացման համակարգված սխեմա

Այսպիսով, նման խնդիրների լուծումը հիմք կծառայի անապահով խավի պաշտպանվածության արդյունավետ իրագործման, միջին խավի կայունացման և զարգացման պետական քաղաքականության համար, գուգահեռ կիրագործի սոցիալական արդարության և սոցիալական հավասարության սկզբունքները, ինչպես նաև կմեղմի սոցիալական բեռնացումը, այսինքն՝ կապահովի հասարակության կայունությունը և բարգավաճումը:

Գծապատկեր 3.3.1

Անապահով խավի պաշտպանվածության արդյունավետության և կենսամակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրը ներկայացնող համակարգված սխեմա



¹⁶⁴ КЕ «Мобилбанка» Группе Societe Generale» S.A., кредиты для финансирования проектов по энергоэффективности, https://mobiasbanca.md/ru/credite_eficienta_energetica_EcoNom

Սոցիալական ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխում

Տնտեսական ուղղորդման արդյունավետ միջոցների կիրառումը

ԵՃՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հետազոտելով անապահով խավի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների և առաջարկությունների.

1. Հիմնվելով «կենսամակարդակ» հասկացության տարբեր մեկնաբանումների վրա՝ մեր կողմից առաջարկվել է առավել ամբողջական սահմանում. կենսամակարդակը մարդկանց բազմակողմանի ինչպես բնական (գիտակցական), այնպես էլ կենսական պահանջմունքների բավարարմանն անմիջականորեն ուղղված հասարակական վերարտադրության բոլոր փուլերի և գործընթացների արդյունքների ամբողջությունն է, որի բարձրացման գործում մեծ դեր ունի պետության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

2. Մշակելով և կիրառելով անհատական հարցումների և սկորինգային մեթոդները՝ կատարվել է «սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության օգտակար գործունեության գործակցի» գնահատում, որը դրվել է աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ մարդու անհատական ներուժային հատկանիշների համախմբի և անհատի հնարավոր աշխատանքային պայմանների առկայության տնտեսական գնահատման հիմքում:

3. Բնակչության գոհունակության յուրահատուկ համաթիվ է բնակչության «կյանքի որակ» հասկացությունը: Փորձ է արվել ներկայացնել և գնահատել կյանքի որակը որոշող հիմնական չափորոշիչները, որոնց մեջ կարևորվել է նաև «սոցիալ-մարդկային կապիտալի վերարտադրության գործակիցը» և դրագնահատումը:

4. Առաջարկվել և գնահատվել է **«աշխատանքի՝ մարդկային կապիտալի թաքնված պահուստ»** նոր ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է գնահատված մարդկային կապիտալի (*Մարդկային կապիտալի վերարտադրության ՕԳԳ*) և աշխատանքի գնահատված արտադրողականության (*Աշխատանքի ներուժային արտադրողականության ՕԳԳ*) տարբերությունը: Գնահատման արդյունքում ստացվել է, որ միջին հաշվով շարքային աշխատակիցն իր աշխատանքային միջավայրում «թերագնահատվում է» իր ունակությունների 8.5%-ով:

5. Բնակչության, անհատի անապահովությունը մարդկային հարաբերությունների փոխազդեցության, առաջին անհրաժեշտության ռեսուրսների հասանելիության և կյանքի մարտահրավերներին դիմակայելու արդյունքն է: «Անապահովություն» հասկացությունը կապվում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ կարիք, ռիսկ, զրկանք, մերժվածության զգացողություն, երկարակեցության ու կարողության բացակայություն: Յետևաբար, անապահով խավն աղքատ խավի բաղկացուցիչն է, քանի որ այն ամենը, ինչ բնորոշ է աղքատին, բնորոշ է նաև անապահով մարդուն:

6. Դիտարկելով ՀՀ ժողովրդագրական իրավիճակը՝ հանգում ենք այն եզրակացության, որ վերջին տարիների ընթացքում ծնելիության մակարդակի նվազումը պայմանավորված է

հանրապետությանը ունենում առկա տնտեսաքաղաքական ճգնաժամային իրավիճակով, բնակչության վերարտադրությանը ունենալիս ապահովող զգալի հատվածի արտագաղթով, ամուսնալուծությանը ունենալիս աճման միտումով: ՀՀ-ում գերադասելի 2-3 երեխայով ընտանիքի մոդելից անցում է կատարվել պարզ վերարտադրության համար ոչ բավարար 1-2 երեխայով ընտանիքի մոդելին, ինչպես նաև ավելացել է վերջին տարիներին երեխաչուսնեցող ընտանիքների տեսակարար կշիռը:

7. ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ համարվող բնակչության դրամական եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռ է կազմում միջին ամսական անվանական աշխատավարձը, որը 2004-2015թթ. դրսևորել է աճման միտում՝ 2015թ-ին, 2004թ-ի համեմատ, ավելանալով 3.95 անգամ: Իսկ միջին ամսական իրական աշխատավարձը նույն ժամանակահատվածում ավելացել է 4.0 անգամ, այսինքն՝ միջին անվանական աշխատավարձի և միջին իրական աշխատավարձի մակարդակներն ավելացել են համամասնորեն, որը պետք է հանգեցնեք բնակչության կենսամակարդակի եթե ոչ նվազմանը, ապա՝ պահպանմանը: Այս իրավիճակը կասկածի տեղիք է տալիս, քանի որ ներկայումս ՀՀ-ում բարձր է աղքատության մակարդակը և բնակչության յուրաքանչյուր երրորդ մարդ աղքատ է:

8. ՀՀ տնտեսությանը ունենում ըստ տնտեսության ճյուղերի գոյություն ունեցող միջին ամսական անվանական աշխատավարձերի մեծ վարվերություն, ինչն էլ ազդում է բնակչության կենսամակարդակի վրա:

9. Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 182-ի՝ «Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Սակայն առայսօր չկան նվազագույն աշխատավարձի ինդեքսավորում: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել 182-րդ հոդվածը՝ ապահովելով դրա անմիջական կատարումը, որով էլ կկանոնակարգվի նվազագույն աշխատավարձի գնողունակությունը:

10. Ըստ Եվրոպական Սոցիալական Վերանայված Խարտիայի՝ նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է երկրի միջին աշխատավարձի 60%-ի չափով: Սակայն, ՀՀ-ում պաշտոնապես ընդունված նվազագույն աշխատավարձի մակարդակը կրկնակի անգամ քիչ է

միջազգային նորմերով սահմանված 60% մակարդակից: Դեռ ավելին, եթե նվազագույն աշխատավարձը կազմում է միջին աշխատավարձի 50%, ապա աշխատավարձի բաշխումը նորմալ է, իսկ 40%-ի դեպքում՝ ցածր է, այն դեպքում, երբ 2015թ. դրույթյամբ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը կազմել է միջին աշխատավարձի 33.2%-ը: Հետազոտությունները վկայում են, որ այսօր աշխատողները որպես նվազագույն աշխատավարձ հենց պահանջում են միջին ամսական անվանական աշխատավարձի 60%-ը: Այս հանգամանքին ՀՀ կառավարությունը լրջորեն մոտեցում պետք է ցուցաբերի, քանի որ վերջինս բարենպաստազդեցություն կարող է ունենալ ոչ միայն ՀՀ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի լավացման, այլ նաև ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի կրճատման վրա:

11. Ուսումնասիրելով ՀՀ տնային տնտեսությունների համախառն եկամուտների 2004-2015թթ. կառուցվածքի փոփոխությունները՝ նկատում ենք, որ տեղի է ունեցել դրամական եկամուտների տեսակարար կշռի աճ, ինչը վկայում է հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Այդ դրական գործընթացը հիմնականում վերաբերում է քաղաքային բնակավայրերին՝ գյուղական բնակավայրերում գրանցվելով քիչ չափով աճ: Նշված ժամանակաշրջանում դրական փոփոխություններ են կատարվել նաև բնակչության դրամական եկամուտների մեջ վարձու աշխատանքից եկամուտների բաժնի մեծացման առումով, որը միաժամանակ տեղի է ունեցել ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում:

12. 2004-2015թթ. ՀՀ տնային տնտեսությունների 1 շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդամթերքի վրա կատարված ծախսերը «կլանում են» եկամուտների մեծ մասը՝ մոտ 50%, իսկ եթե եկամուտների 50%-ից ավելին ծախվում է սննդի վրա, ապա բարձր է լինում աղքատության մակարդակը: Միայն 2012-2015թթ. նկատվել է ոչ պարենային ապրանքներին և ծառայություններին ուղղվող սպառողական ծախսերի չնչին աճ:

13. ՀՀ-ում ընտանիքներին հուզող խնդիրների մեջ առաջնային է համարվում ոչ պարենային կարիքների բավարարումը և

բնակարանային հիմնահարցը, իսկ մարդկային կապիտալ ստեղծող հիմնական բաղադրատարրերը մղված են երկրորդ պլան, որը, արդեն իսկ, նպաստում է ՀՀ բնակչության կենսամակարդակի, կյանքի որակի՝ դանդաղ տեմպերով բարելավմանը:

14. Բնակչության եկամուտների անհավասարությունն արտահայտող Ջինիի գործակիցը 2004-2015թթ. ունեցել է նվազման միտում, մինչդեռ Ջինիի գործակիցն ըստ սպառման դրսևորել է նույն ժամանակահատվածում աճման միտում: Բարձր Ջինիի գործակիցը խորացնում է հասարակության ներսում ցածր և բարձր եկամուտներ կամ սպառման մակարդակ ունեցող, այլ խոսքով, ապահով և անապահով բնակչության խմբերի միջև հակասությունները, որը կարող է հանգեցնել սոցիալական ցնցումների:

15. Գնահատելով ՀՀ բնակչության անապահով խավի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի փոփոխության վրա ազդող գործոնները՝ եկել ենք այն եզրակացության, որ աշխատավարձի, կենսաթոշակների նվազագույն չափերի, նպաստների և անապահով խավի մասնավոր տրանսֆերտների միջին չափերի տարեկան բարձրացումը կնպաստի ՀՀ բնակչության անապահով խավի ինչպես դրամական եկամուտների, այնպես էլ սպառողական ծախսերի մակարդակի բարձրացմանը, հետևաբար նաև կենսամակարդակի բարելավմանը:

16. Տնտեսագիտության մեջ ընդունված է, որ քաղաքակիրթ հասարակությունը բաժանվում է հետևյալ համամասնությամբ՝ հարուստներ՝ կազմում են հասարակության 5-6%-ը, միջին խավ՝ 80%-ը, աղքատներ՝ 14-15%-ը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բնակչությունը բավական հեռու է վերոնշյալ սոցիալական կառուցվածքից, քանի որ այսօր աղքատ և անապահով խավը զբաղեցնում է ընդունելի սահմանից ավելի մեծ զանգված:

17. ՀԲ-ը, հիմնվելով ՀՀ ԱՎԾ տվյալների վրա, իրականացրել է ՀՀ բնակչության բազմաչափ աղքատության գնահատում: Բազմաչափ աղքատության ցուցանիշը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել աղքատության բազմակողմանիության, խորության ու տևականության մասին, բացահայտում է զրկանքներ կրող տնային տնտեսություններին և լրացնում նյութական

աղքատությանը: Գնահատման արդյունքում 2015թ. 33-ում բազմաչափ աղքատության տեսակարար կշիռը կազմել է 29.1%:

18. Հասարակությունը բաժանելով 3 դեցիլային խմբի՝ աղքատ, միջին, հարուստ, և վերլուծելով 33 բնակչության դրամական եկամուտների և սպառողական ծախսերի բաշխումը 2004-2015թթ., հանգում ենք նրան, որ 33-ում մեծ դժվարությամբ է ձևավորվում միջին խավը: Վերջինս 2004-2015թթ. ստացել է եկամուտների միջինը 26.1%, մինչդեռ քաղաքակիրթ աշխարհում այդ ցուցանիշը 3-3.5 անգամ ավելի բարձր է: Իսկ սպառողական ծախսերի գծով միջինը կազմել է 26.2%, որը պետք է լիներ 60-70%, ինչն էլ կայուն հասարակության բարեկեցության երաշխիքն է:

19. 2014թ. հունվարի 1-ից դադարեցվել է գործազրկության նպաստի տրամադրման համակարգը, որին փոխարինում է «Աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում» ծրագիրը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է գործազրկության նպաստի տրամադրման համակարգը վերականգնել, սահմանել գործազրկության նպաստի տրամադրման մեկ միասնական ժամկետ՝ 6 ամիս, որի նպատակն է ակտիվ աշխատանք փնտրելու գործընթացների և կայուն զբաղվածության ապահովման խթանումն ու ինչ-որ չափով գործազուրկին աջակցությունը՝ դիմակայելու սոցիալական կարիքները հոգալու: Արդյունքում գործազուրկը կունենա վստահություն և սոցիալական պաշտպանվածություն պետության կողմից:

20. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագիրը պետական բյուջեի ամենակարևոր սոցիալական ծրագրերից մեկն է՝ ուղղված աղքատության կրճատմանը: Հետևաբար, ծրագրում ընդգրկված ընտանիքները պետք է լինեն ծայրահեղ և շատ աղքատ՝ տեսականորեն բացառելով ոչ աղքատ ընտանիքներին: Այնինչ, համակարգում մեծ է ինչպես «ընդգրկման սխալը», այնպես էլ «չընդգրկման սխալը»: Գտնում ենք, որ պետք է հստակեցնել ԸԿԲՆԾ-ի նպատակը՝ կարևորելով նաև անապահովության գնահատման բանաձևի փոփոխությունը:

21. Վերլուծությունները վկայում են, որ վճարվող նպաստները նույնիսկ բավարար չեն 1 չափահաս անձի գոյատևման համար, ուստի

ԸԿԲՆԾ համակարգում առկա են բացթողումներ: Մեր կարծիքով, ընտանեկան և սոցիալական նպաստի բազային մասը պետք է համապատասխանեցնել ընտանիքի նվազագույն պարենային ծախսերը բավարարելու մակարդակին:

22. ԸԿԲՆԾ-ի շահառուները ծրագրից հեռացվում են ոչ թե կենսամակարդակի բարելավմամբ, այլ՝ հիմնականում պայմանավորված ընդգրկման պահին նրանց անապահովության միավորով: Ըստ Յամաշիտայի բանկի հաշվարկների՝ ծրագրից հեռացվելուց հետո տնային տնտեսությունների միջին եկամուտը 1 շնչի հաշվով ավելի բարձր է, քան ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում, սակայն տարբերությունը համեմատաբար փոքր է և ամսական կտրվածքով կազմում է մոտ 5000 դրամ: Յետևաբար, անհրաժեշտ է ծրագրից հեռացվելու ավելի բարձր շեմ սահմանել:

23. Ծատ հաճախ կյանքի դժվարին վիճակում հայտնված ընտանիքներն ԸԿԲՆԾ-ի իրազեկվածության, համապատասխան փաստաթղթերի բացակայության և, վերջին հաշվով, պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի արդյունքում չեն կարողանում օգտվել իրենց կարգավիճակը բարելավող միջոցառումներից: Ուստի, կարևորում ենք սոցիալական աշխատողների օբյեկտիվ և արդյունավետ աշխատանքները՝ ուղղված այդ ընտանիքների հայտնաբերմանը և համակարգում հաշվառելը, որը կնպաստի բնակչության իրազեկման մակարդակի բարձրացմանը տնային այցելությունների միջոցով, այսինքն՝ սոցիալական ծառայությունները պետք է բացահայտեն սոցիալապես անապահովներին, այլ ոչ թե հիմք ընդունեն միայն նպաստառու դառնալ ցանկացողների դիմումները:

24. Անհրաժեշտ է սահմանել կենսաապահովման նվազագույն բյուջեն՝ հիմք ընդունելով բավարար կենսամակարդակով ապրելու և իր ֆիզիկական գործունեությունը վերարտադրելու համար անհրաժեշտ ՅՅ առողջապահության նախարարության հաշվարկած-առաջարկած սնուցման նվազագույն 2412կկալ՝ 2232կկալ -ի փոխարեն: Ընդ որում, պետք է պահպանել յուրաքանչյուր հաջորդ տարի գնաճով վերահաշվարկված կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծության և նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների,

կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների, սոցիալական այլ վճարների չափերի միջև համամասնությունները:

25. Միջին խավի առանձնահատկություններին է կրթական մակարդակը, աստիճանը և մասնագիտական գործունեության բնույթը, իսկ կրթված հասարակությունը նույնպես ընդհանուր առմամբ, կրթական բարեփոխումների ծրագրերը պետք է ուղղված լինեն՝

- ընդլայնել ու անվճար համակարգում բարձրագույն կրթությունը ստանալու հնարավորությունները,
- ապահովել ու միջնակարգ կրթության արդյունքների և ԲՈՒՅ ընդունվելու համար պահանջվող գիտելիքների համապատասխանեցում,
- համապատասխանեցնել ու կրթությունը տնտեսության, գիտության և հասարակության ներկայիս պահանջներին՝ ստեղծելով մասնագիտական կողմնորոշման համակարգ,
- զարգացնել ու հզորացնել ու աշխատանքային պահանջներին և միջազգային ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունները,
- ընդլայնել ու ուսանողական նպատակային դրամաշնորհների ցանցը, նաև գործատուների կողմից նպատակային ֆինանսավորման համակարգը,
- նպաստել ու խթանել ԲՈՒՅ-երի և գործատուների փոխհարաբերությունները, ուսանողների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի տեղավորման խնդիրների լուծումը,
- պարբերաբար իրականացնել ու մասնագիտական կադրերի վերապատրաստում, պայմանագրային հիմունքներով՝ արտերկրում ուսանելու և հայրենիքում աշխատանքով ապահովված լինելու սկզբունքով:

26. ԶՅ կառավարության N 318-Ն որոշմամբ՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցողների խմբերից բացի առաջարկում ենք՝ արտոնություններ տրվեն նաև խմբերի մեջ չընդգրկվող, սակայն նյութական կարիք ունեցող անձանց, մասնավորապես՝ այն

կենսաթոշակառուներին, ովքեր ստանում են միջին կենսաթոշակից ցածր կենսաթոշակ և ժամանակավոր գործազուրկներին:

27. Դեղերի որակի ապահովման պետական վերահսկողությունը սահմանվում է միայն դեղերի շրջանառության բոլոր փուլերի՝ արտադրության, պատրաստման, պահպանման, իրացման, կիրառման և ներմուծման վրա, այլև պետական վերահսկողությունն պետք է սահմանվի դեղերի գների նկատմամբ, մասնավորապես՝ կենսական նշանակություն ունեցող դեղերի համար սահմանվեն ժամանակահատվածի համար ֆիքսված գներ՝ փոփոխությունների չենթարկվելով գնաճային տատանումներից, ինչպես նաև վերահսկողությունն հաստատել բնակչության առանձին խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի անվանական և քանակական ապահովման նկատմամբ:

28. Մարդկային կապիտալի վերարտադրությունն առավել արդյունավետ կլինի, եթե ՀՀ կառավարության կողմից կիրառվեն համապատասխան միջոցառումներ՝ ուղղված բժշկական ծառայությունների դիմաց ոչ ֆորմալ վճարումների վերացմանը, քանի որ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է և ֆինանսական վատվիճակը:

29. Ներկայումս լայն տարածում ունեն է ներգաարդյունավետ վարկերի տեսակները, որոնց նպատակ է հնարավորություն ընձեռել ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին՝ իրականացնել բնակարանների էներգաարդյունավետ վերանորոգում, խուսափել էլեկտրաէներգիայի և գազի սակագների վերջին թանկացումների բացասական հետևանքներից, բնակարանի ջերմության և էներգիայի կորուստներից, բարելավել կենսապայմանները, նվազեցնել կոմունալ ծախսերը, ինչպես նաև խթանել էներգախնայող բնակարանային ֆոնդի զարգացումը: ՀՀ-ում անապահով խավի բնակ-կոմունալ պայմաների բարելավման համար առաջարկում ենք առավել հասանելի դարձնել էներգաարդյունավետ վարկերի տեսակները, որոնք պետք է ստանան նաև պետական աջակցություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրությունը, ընդունվել է 5 հունիսի 1995թ.: (8)
2. ՀՀ օրենքը «Զբաղվածություն մասին» 11.12.2013թ. ՀՕ-152-Ն:
3. ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին» 22.12.2010թ., ՀՕ-243-Ն: (125)
4. ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին» 22.12.2010թ., ՀՕ-244-Ն (143)
5. ՀՀ օրենքը «Պետական նպաստների մասին» 11.12.2013թ., ՀՕ-154-Ն:
6. ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցություն մասին» 17.12.2014թ., ՀՕ-231-Ն: (115,123)
7. ՀՀ օրենքը «Կենսապահովման նվազագույն գամբյունի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» 16.03.2004թ., ՀՕ-53-Ն: (134)
8. ՀՀ օրենքը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» 17.12.2003թ., ՀՕ-66-Ն:
9. ՀՀ օրենքը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ ընդունված 12.12.2013թ. ՀՕ-187-Ն: (83,117)
10. ՀՀ օրենքը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ ընդունված 01.12.2014թ. ՀՕ-205-Ն: (85,117)
11. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀ կառավարությունը թիվ 442-Ն որոշում, 27.03.2014թ.: (92,99,124)
12. Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, ՀՀ կառավարությունը թիվ 2317-Ն որոշում, 29.12.2005թ.:
13. Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, ՀՀ կառավարության թիվ N 145-Ն որոշում, 30.01.2014թ.:
14. ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիր: ՀՀ կառավարությունը թիվ 1487-Ն որոշում, 2008թ.: (127)

15. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին, ՀՀ կառավարության թիվ 318-Ն որոշում, 24.03.2004թ.: (158)
16. Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով նախատեսված ենթածրագրերին հավանության տալու և ՀՀ ֆինանսների նախարարությանը գումար հատկացնելու մասին, ՀՀ կառավարության թիվ 270-Ն որոշում, 14.03.2013թ.: (154)
17. ՀՀ-ի ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում թիվ 452-Ն, 15.04.2010թ.: (115)
18. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, ՀՀ պետական բյուջեի կատարման 2009-2015թթ. տարեկան հաշվետվության ներ: (120,124,152)
19. ՀՀ 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, 904 էջ (162)
20. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2000-2016 թթ.: (76,78,80,82,91,97,105,112,113,116,120,121,128,151,170,177,178,179,181)
21. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությանը, 2000-2016թթ.: (25,46,77,79,80,81,88,89,95,108,111,126,129,132,146,151,155,157,160,171,179,181)
22. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն, Եր., Տոներ, 2004, 154 էջ: (103)
23. Աղաջանյան Ռ. Հավասարակշռության տեսության պարադոքսները, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ» թիվ 1, 2005, էջ 3-17: (15,62)
24. ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր, Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով, Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագիր, 2006թ. դեկտեմբեր, 373 էջ (84)
25. «Այ Փի Էս» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության ներկայացրած ինստիտուտ, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index), հետազոտության, մեթոդաբանության, Եր. 2010թ., 85 էջ: (12,16,17)

26. Արմենակյան Ռ.Ռ. Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, Եր.: Տնտեսագետ, 2004, 84 էջ : (7)
27. Եվրոպական Յանձնաժողով «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում», զեկոլյցի համառոտագիր, 2011թ. 14 էջ : (153)
28. Թադևոսյան Ա. Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից: Նորավանք գիտակրթական հիմնադրամ,- Եր., Բավիղ, 2003, 77 էջ : (104)
29. Ղարիբյան Գ., Հակոբջանյան Ա. Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում, Երևան, 2011թ. 140 էջ
30. Ղուլչյան Հ.Բ. ընդհանուր խմբագրությունը. Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ, Եր.«Տնտեսագետ» 2005թ. 610 էջ (9)
31. Մանասյան Ա. ԱՅԴԾ մեթոդաբանական սկզբունքներ և հայեցակարգային ուղենիշներ, հրատապ հարցադրումներ, խորհրդատվական գրքույկ, Երևան 2002, 32 էջ (26)
32. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն. Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2006, 396 էջ (114)
33. Մարկոսյան Ա.Խ. Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև, Եր.,«Չանգակ-97», 2004, 460 էջ : (96)
34. Մարկոսյան Մ.Ա. Բնակչության դրամական եկամուտների ձևավորման և բաշխման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տիգրան Մեծ» 2006, 325 էջ : (94)
